ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954



Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(80-րդ տարի) Թիվ-6 (1712) Հունիս 2026

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am

Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1 - Առաջնորդող

Գողացված ընտրություններ, չավարտված գործընթացներ (էջ 1-4)

2 - Քաղաքական

Անի Մելքոնյան
Հետընտրական գործընթացները Հայաստանում: Լռություն փոթորկից առա՞ջ (էջ 5-6)

Արամ Շահնազարյան
«Արևմտյան Ադրբեջանի» գաղափարը որպես աշխարհաքաղաքական ճնշման և համակարգային վերածևման ռազմավարական հայեցակարգ (էջ 7-9)

3 - Հասարակություն

Մանվել Մկրտչյան
Քաոս, որի վերջին հանգրվանը ինքնաոչնչացումն է (էջ 10-12)

Անժելա Հարությունյան
Ազգի երազանքը և պատմական հիշողությունը. գոյության հրամայականը (էջ 13-15)

4 - Պատմության լուսարձակ

Տարոն Վլադիկի Հակոբյան
Միացումից անկախացում: Ներքաղաքական խմորումները Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետությունում (1992-1993 թթ.) (էջ 16-19)

5 - Հայ Դատ

Մարի Հովհաննիսյան
«Օղակ» գործողություն. արցախահայության բռնի տեղահանում և պետական ահաբեկչություն (էջ 20-24)

Մարիամ Հովսեփյան
Տարագիրների հանդեպ քաղաքականությունը Հայաստանի Առաջին հանրապետությունում (ըստ Կ.Պոլսի «Ճակատամարտ» օրաթերթի հրապարակումների) (էջ 25-31)

6 - Դեմքեր և դեպքեր

Էլիզ Հասըրճեան-Շարապխանեան
«Արծագանգ»ի էջերից (էջ 32-37)

Մովսէս Ծիրանի (Հերկելեան)
Սոս Սարգսեան. պատգամախօսը... (էջ 38-40)

7 - Ընթերցումներ

Նարինե Հովհաննիսյան
Ճանապարհ դեպի հավերժություն (Դավիթ Գասպարյան, «Եղիշե Չարենցի գրական-քաղաքական աղերսները» մենագրությունը) (էջ 41-43)

8 - Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
«Աստուած իմ, գոհարեղէնս» (էջ 44)

Գողացված ընտրություններ, չավարտված գործընթացներ

Հայաստանի 2026 թվականի խորհրդարանական ընտրությունները շատերն էին բնորոշում որպես, երկրի ապագայի համար ճակատագրական: Իշխող ՔՊ-ն մարմնավորող Նիկոլ Փաշինյանի համար նույնպես գործընթացը ճակատագրական էր, բայց ոչ թե ժողովրդի ու պետության հեռանկարի, այլ իր անձի համար: Բոլորին ակնհայտ էր, որ իշխանության ընձեռած անպատժելիության իմունիտետը կորցնելու պարագայում Նիկոլ Փաշինյանն անխուսափելիորեն հայտնվելու է պատասխանատվության առջև, Արցախի, Հայաստանի և հայության դեմ կատարած իր բազում հանցագործությունների համար: Այդ իսկ պատճառով շատերը նաև կանխատեսում էին, որ օրինական ընտրությունների ճանապարհով Նիկոլը երբեք չի զիջի իշխանությունը: Երբ բուն ընտրությունների նախօրյակին ՔՊ-ի արբանյակ «Հանրապետություն» կուսակցությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողովին հայց ներկայացրեց «Ուժեղ Հայաստան» դաշինքին գրանցումից զրկելու կամ այդ հարցով դատարան դիմելու խնդրով, հանրությանը թվաց, թե դա հենց այն միջոցն է, որով Նիկոլ Փաշինյանի իշխանությունը պետք է անօրինականորեն կանխի գալիք ընտրությունների արդյունքում ընդդիմության հաղթանակի հնարավորությունը: Նշենք նաև, որ Արամ Սարգսյանի գլխավորած կուսակցությունը տվյալ հայցը ներկայացրեց այն բանից հետո, երբ դրանից ընդամենը մի քանի ժամ առաջ, հեռուստաբանավեճի ժամանակ, վարչապետ Փաշինյանը հրապարակավ հորդորել էր գնալու այդ քայլին: Բարձր վարկանիշն ունեցող ընդդիմադիր ուժին մրցապայքարից դուրս դնելու համար հիմքերը, սակայն, այնքան զրոյական էին, որ իշխանությանն ամբողջովին ենթակա ԿԸՀ-ն մերժեց «Հանրապետության» այդ պահանջը: Որ տվյալ որոշումը կայացվել էր ԿԸՀ-ի համապատասխան նիստից առաջ, ակնհայտ էր թեկուզ այն գրավոր ծավալուն եզրակացությունից, որը հաստատ չէր կարող գրվել որոշման կայացման համար հայտարարված կեսժամյա ընդմիջման ժամանակ: Եթե ընտրության արդյունքներն աղավաղելու կամ փոփոխելու սադրիչ ջանքերը ծրագրվեին պարտված ընտրություններին հաջորդող օրերի համար, սա ևս կդիտվեր ոչ հիմնավոր, և Նիկոլ Փաշինյանն այդ բանն արեց ուղղակիորեն ընտրությունների արդյունքները հաշվելու գիշերը, երբ ընտրական տեղամասերում հաշվել էին քվեարկությունների արդյունքների 10 տոկոսից քիչ ավելին: Նիկոլ Փաշինյանը հրապարակավ պարտադրեց իր «հաղթանակը», այդպիսով կանխելով հնարավոր անցանկալի զարգացումները և փրկարար փոփոխությունների հարցում հանրության ու քաղաքական ուժերի սպասումները: Այս ելույթից

հետո դադարեցվեցին ուղիղ եթերով արդյունքների հաշվարկի ցուցադրումը և դրան զուգահեռ ընդհանուր արդյունքների փոփոխվող պատկերի հրապարակումները: Ժողովուրդը համոզվեց նաև, որ Եվրամիության առաջնորդների հրապարակային ու գործնական պաշտպանությունից հետո Նիկոլ Փաշինյանը չի խորշում ընտրական գործընթացում դիմելու ամենաաղաղակող ու հանցավոր քայլերի:

Հայաստանը փոքր երկիր է, և տեղի ունեցող գործընթացները տեսանելի ու լսելի են ոչ միայն Նիկոլին ծառայող Ազգային անվտանգության ծառայության, այլ պետական ծառայությունների ու մարմինների, այլև հանրության համար: Մինչ այդ ժողովրդի շրջանում շրջանառվում էին զանազան ընտրախախտումների, այդ թվում՝ ՔՊ-ի շտաբների կողմից ընտրակաշառքի բաժանման, ինչպես նաև ընտրության օրը տեղական իշխանությունների կողմից օգնությունների կամ այլ անվանումների ներքո գումարների բաժանման մասին խոսակցություններ: Այն փաստերը, որոնք այս հոդվածը գրելու պահին ընդդիմությունը ներկայացնում է Սահմանադրական դատարանում, կարծում ենք, բավարար են տեղի ունեցած ընտրությունների արդյունքներն ամբողջությամբ չեղարկելու և նոր ընտրություններ նշանակելու համար:

Ավելին, եթե նույնիսկ նկատի ունենանք պաշտոնական նախընտրական քարոզարշավից շատ առաջ ՔՊ առաջնորդի հրապարակայնորեն նախաձեռնած մի շարք նախընտրական գործընթացները, ապա կասկած չպետք է մնա, որ օրենքի գերակայությամբ առաջնորդվող ցանկացած երկրում նման գործողությունները և դրանց հետևանքով ստացված արդյունքները չէին կարող օրինական համարվել:

Չէին կարող յուրատեսակ ընտրակաշառք չորակվել ընտրությունների անմիջապես նախօրյակին պարտադիր զինվորական ծառայության կրճատումը մեկ քառորդով, կենսաթոշակների բարձրացումն ու

կենսաթոշակառուների համար պարտադիր բժշկական ապահովագրության հաստատումը: Չէին կարող խնդիր չառաջացնել ՔՊ-ի այն հսկայական նախընտրական ծախսերը, որոնց մեծ մասն իրականացվել էր պետական բյուջեից: Ընդ որում, ինչպես իրավաբանները փաստեցին Սահմանադրական դատարանում, պետբյուջեից կատարված խոշոր ծախսերը հիմնականում ձևակերպվել են ակնհայտ ցածր գներով: Ի դեպ, անհայտ մնաց նաև, թե ինչի վրա է ծախսվել այն 12 մլն եվրո գումարը, որը Եվրոպական միությունը Հայաստանին հատկացրել էր ընտրություններին ընդառաջ, այսպես կոչված, հիբրիդային սպառնալիքներին դիմակայելու, կիբերանվտանգությունը բարձրացնելու և ապատեղեկատվության դեմ պայքարելու նպատակով: Եվ սա, իհարկե, միակ նախաձեռնությունը չէր, որով Հայաստանի իշխանությունն ու Եվրոպայի այսօրվա ղեկավարությունը ձեռք-ձեռքի տված իրականացրին ընդդեմ գործող իշխանությանը մերժող Հայաստանի ժողովրդի, ազգային քաղաքական դաշտի և իրենց համար գերակա հռչակված օրինականության ու ժողովրդավարական արժեքների: Ձանազան «մասնագիտական» աջակցությունների կողքին առավել ակնառուն Ռուսաստանից բխող, այսպես կոչված, «հիբրիդային» սպառնալիքների մասին հորինված հիստերիկան էր, այն պարագայում, երբ եվրոպացի առաջնորդների աջակցությունը դրածո իշխանություններին դրսևորվում էր բացահայտ, պաշտոնապես՝ նյութական և քարոզչական-քաղաքական աջակցության ձևով: Բավական է ասել, որ Մոլդովայի, Ռումինիայի և այլ երկրների օրինակով ողջ ընտրապայքարն անցավ Հայաստանի ազգային ուժերին և անգամ Հայ Առաքելական Սուրբ եկեղեցուն «ռուսական ագենտներ» որակելու զրպարտչական ու հիստերիկ մթնոլորտում:

Ինչ վերաբերում է քաղաքական-քարոզչական բնագավառին, ապա Նիկոլ Փաշինյանի և իր կառավարած թիմի գլխավոր զենքերը մնում են կեղծիքը, սուտն ու զրպարտանքը: Գլխավոր սուտը, իհարկե, «վերջնական խաղաղության» հաստատման մասին կեղծիքն է, այն պարագայում, երբ համապատասխան փաստաթուղթ ստորագրելու համար Ադրբեջանը շարունակում է Հայաստանին պարտադրել նորանոր պահանջներ: Այդ պահանջները կրկին ուժգնորեն սկսեցին հնչել անմիջապես ընտրություններից հետո, մասնավորապես և 300.000 ադրբեջանցիների «Արևմտյան Ադրբեջան վերադառնալու» պայմանը: Նախընտրական շրջանում ինչպես և դրանից հետո Հայաստանի իշխանությունը կոպիտ հակադարձում է ներքաղաքական լսարանին հայտարարելով, թե նման հարց գոյություն չունի, բայց ինչ-ինչ պատճառներով չի համարձակվում որևէ կերպ հակադարձել Ադրբեջանի այդ և ակնհայտ զավթողական հավակնություններին: Նման պարագայում, ցանկացած երկրի կառավարություն ամենակոշտ կերպով կպատասխաներ իր նկատմամբ թշնամական ծրագրեր գեներացնող հարևանին, այնինչ Հայաստանի իշխանությունը խուլ ու համրի կամ անմեղսունակի նման ձև է անում, թե չի լսում, չի հասկանում ասվածը և մի ողջ ժողովրդի հիմարի տեղ դրած շարունակում է կրկնել խաղաղության մասին սուտը: Ավելացնենք, որ նախընտրական զենք որպես գործածվող այս կեղծիքին զուգահեռաբար բորբոքվում էր այն սուտը, թե իշխանափոխության դեպքում Հայաստանի դեմ պատերազմ է սկսվելու: Նմանը չունեցող Հայաստանի ղեկավարը նույնիսկ այդ պատերազմի ժամկետն էր նշում, կարծես թշնամի երկրի գլխավոր շտաբում մասնակցել էր այդ պատերազմի ծրագրման աշխատանքներին:

Պետք է նշել, որ վախի գործոնն ի սկզբանե եղել և մնում է Հայաստանի իշխանության գլխավոր զենքերից մեկը սեփական ժողովրդին հլու-հնազանդ պահելու, քաղաքական-հասարակական գործընթացներից օտարելու և սեփական ճակատագրի նկատմամբ անտարբերության մղելու համար: Պետք է ընդունել, որ խաղաղության ու պատերազմի այս անբարո, որևէ իշխանությանն անհարիր խոսույթը բավականին ազդեցություն ունեցավ հասարակական տարբեր շերտերի, հատկապես սահմանային ու հեռավոր բնակավայրերի բնակիչների վրա:

Սպառնալիքների զինանոցին մաս էին կազմում հիմնական ընդդիմադիր ուժերի առաջնորդների, աչքի ընկնող դեմքերի, շտաբների ներկայացուցիչների հետապնդումներն ու ձերբակալությունները, որոնք շարունակվեցին ընդհուպ ընտրության օրը: Նման բան անհնար կլիներ պատկերացնել նույնիսկ ստալինյան կամ հիտլերյան ռեժիմների պայմաններում: Չմոռանալով, որ ընտրության նախօրյակին իշխանությունը մեկուսացրել էր մի շարք ընդդիմադիր ղեկավարների ու գործիչների, որոնք լուրջ ազդեցություն ունեն հանրության լայն շրջանակներում: Բավական կլիներ նշելը միայն, որ միանգամայն անհիմն մեղադրանքով ի սկզբանե նախընտրական գործընթացից մեկուսացվեց ամենամեծ քվեի հավակնող ընդդիմադիր ուժի առաջնորդ և վարչապետի թեկնածու Սամվել Կարապետյանը: Գործընթացներից մեկուսացվածների թվում էին մեծ հեղինակություն վայելող Բագրատ Գալստանյան, Միքայել Աջապահ-

յան, Մկրտիչ Պոռշյան թեմական առաջնորդներն ու այլ հոգևոր հայրեր, Գյումրի և Մասիս քաղաքների հաղթած ընդդիմադիր քաղաքապետները, հեղինակություն վայելող և ընտրություններում լուրջ դերակատար Անդրանիկ Թևանյանը, Արթուր Սարգսյանը, Աշոտ Մինասյանը (Երկաթ) և ուրիշ գործիչներ: Անհաջողության հեռանկարից գազազած՝ երկրի ղեկավարը տեղում պատիժներ էր թելադրում իր հետ բանավիճել համարձակվող քաղաքացիների նկատմամբ: Նման խելագարությունների վրա նույնիսկ Ստալինն ու Հիտլերը կզարմանային: Կարելի՞ է պատկերացնել, որ աշխարհի որևէ օրինազանց առաջնորդ ընտրապայքարի ժամանակ կարող էր հրապարակավ սպառնալ, թե կբանտարկի, կսպանի իր հիմնական մրցակիցներին: Եվ այսօր էլ, երբ դեռ Սահմանադրական դատարանում վիճարկվում են ընտրությունների արդյունքները, շարունակվում է հիմնական ընդդիմադիր ուժերից մեկի առաջնորդ Գագիկ Ծառուկյանի նկատմամբ հալածանքը, ումից օրը ցերեկով բացահայտորեն խլվեց ընտրություններում կուսակցության ձեռք բերած հաղթանակը: Ցավոք, անվերահսկելի բռնապետի վերածված Հայաստանի այսօրվա ղեկավարի անօրինականությունները հնարավոր են դարձել եվրոպացի առաջնորդների քաղաքական հովանավորության հետևանքով:

Նախընտրական գործընթացներում դրսևորված իշխանության չարաշահման աղաղակող երևույթ էր վարչական ռեսուրսի լայն կիրառումը: Վերևից ներքև ողջ պետական համակարգին հրահանգված էր ծառայել իշխող ուժի նախընտրական աշխատանքներին և վերջինիս հաղթանակի ապահովմանը: Տարփոդելով կրթական հաստատությունները քաղաքական գործընթացներից հեռու պահելու պահանջը՝ Նիկոլ Փաշինյանի ժողովրդային հանդիպումների «ընտրազանգվածը» ապահովվում էր հիմնականում ուսուցիչներին անգամ չափահաս աշակերտության հաշվին: Ղեկավարության խիստ վերահսկողությամբ այդ միջոցառումներին պարտադրաբար մասնակցում էին նաև պետական համակարգերում ծառայողներն ու պարզ աշխատողները, իսկ նրանց չներկայանալու, կամ ընտրողների ցուցակներ չներկայացնելու պարագայում հրահանգված էր վերջիններիս և նրանց հարազատներին հեռացնել աշխատանքից: Ի դեպ, վրեժխնդրության այս գործընթացը շարունակվում է նաև հետընտրական շրջանում: ԱկնհայտորենՆիկոլ Փաշինյանը մտահոգ է հեռավոր կամ մոտալուտ ապագայի անորոշ հեռանկարներով:

Մենք տեսնում ենք, որ իշխանությունը բռնազավթած Նիկոլ Փաշինյանի հետընտրական ջղաձիգ վարքը շատ չի տարբերվում նախընտրական վարքագծից: Այս երևույթի պատճառները ևս ակնհայտ են՝ նախ և առաջ բոլոր կեղծարարություններով ու խախտումներով հանդերձ, Փաշինյանը չի կարողացել ապահովել 50+1 տոկոսի արդյունք: Եվրոպացի դիտորդները, նրա «հաղթանակը» ճանաչելով հանդերձ, նշել են բազմաթիվ թերություններ ու ընտրախախտումներ, իսկ Ռուսաստանն ու Չինաստանը փաստացի դեռևս չեն ճանաչել այդ Պյուռոսյան հաղթանակը: Որքան էլ որ Փաշինյանի համար կարևորն արտաքին հովանավորների կարծիքն է, նա չի կարող հաշվի չնստել այն փաստերի հետ, որ հայ ժողովրդի մեծամասնությունը մերժում է իրեն և ընտրության հրամցված արդյունքը համարում է կեղծված: 8 տարի Փաշինյանը երկրի ներսում ու երկրից դուրս իր քաղաքական դրամագլուխն էր դարձրել ժողովրդի բացարձակ աջակցության միֆը, իսկ այժմ նա ներկայանում է որպես անօրինականորեն իշխանության տիրացած, քաղաքական-բարոյական առումներով խոցելի, իրավական հնարավորությունների իմաստով թույլ ղեկավար: Որքան էլ որ վերարտադրված ղեկավարը ձևացնի, թե հաղթահարել է ընտրության փորձությունը և կրկին ներգրավվել ընթացիկ աշխատանքների մեջ, նա չի կարող ծանր հարված չդիտել միանգամից յոթ կուսակցությունների կողմից ընտրությունների անօրինական ճանաչումն ու դրանց չեղարկման պահանջը Սահմանադրական դատարանից: Անգամ թեթևամտորեն ժամանակից շուտ իրենց հովանավորյալներին շնորհավորած եվրոպացի ղեկավարները չեն կարող համապատասխան հետևություններ չանել այս իրողությունից. այս գործելակերպով նրանք իրենք էլ այսօր մաշեցնում են իրենց հեղինակությունը սեփական ժողովուրդների աչքերում:

Ընտրություններում վերարտադրվելը գերնպատակ դարձրած Փաշինյանը այդ նպատակին պատրաստ էր զոհաբերել ամեն ինչ: Արևմուտքն ու թուրք-ադրբեջանական դաշինքը նրան պարտադրեցին հստակ ցուցադրել իր հակառուսական կողմնորոշումը և ստանձնել երկրի համար կործանարար մի շարք պարտավորություններ: Իր համար ոչ դյուրին քաղաքական կացության պայմաններում Նիկոլը, ըստ էության, հաստատեց, որ դուրս է բերելու երկիրը ԵԱՏՄ-ից ու ՀԱՊԿ-ից, ՀԷՑ-ից հետո, Ռուսաստանի հետ եղած բոլոր կապերից հրաժարվելու նպատակով, վերջինիցս վերցնելու է Հարավկովկասյան երկաթուղու կառավարման իրավունքը, նախընտրական հանդիպումների ժամանակ նա ակնարկեց նաև

Ատոմակայանի հարցում Ռուսաստանի հետ եղած կապերը խզելու մասին: Հայաստանի համար լուրջ փորձություն է լինելու ռուսական գազից հրաժարվելու կամ այն ավելի քան եռակի անգամ բարձրացված գնով գնելու հեռանկարը:

Ի պատասխան հակառուսական արշավին Հայաստանի միանալու՝ ռուսական շուկայի փակվելը և որոշ այլ սահմանափակումներ կարճ ժամանակ անց ի ցույց կդնեն պարզ աշխատավորներին պատուհասած ծանր հետևանքները:

Քայլերը, որոնց հետևանքները Հայաստանի տնտեսության ու ժողովրդի համար դժվար հաղթահարելի են լինելու, բացարձակապես չեն հուզում Արևմուտքին, որը, հակառուսականության տենդով մթագնած ձգտում է Ռուսաստանի դուրս մղմանը Հարավային Կովկասից, շատ էլ չմտահոգվելով, որ այս գործում կրակից շագանակներ հանող Հայաստանը կարող է այրել և՛ մատները, և՛ ողջ մարմինը:

Ընտրությունների արդյունքը դեռևս չամրապնդած Փաշինյանից Ադրբեջանն ու Թուրքիան պահանջում են առանց հապաղելու կատարել ստանձնած բոլոր պարտավորությունները՝ 300.000 ադրբեջանցիների տեղավորում Հայաստանում, անկլավներից հրաժարում, ԹՐԻՓ-ի գործարկում, Սահմանադրության փոփոխություն, Մայր եկեղեցու հետ հաշվեհարդար և այլն:

Հետընտրական առաջին շաբաթներին Փաշինյանին դեռևս հաջողվում է հանգստացնել ու խաբել ժողովրդին՝ իր վարած արտաքին քաղաքականության հետևանքով ծառացած մարտահրավերների հարցում, սակայն կարճ ժամանակ անց դրանք ջրի երես են դուրս գալու, դժգոհության տրամադրություններով վարակելով անգամ իր նկատմամբ աղանդավորական համակրանք ունեցողներին: Փաշինյանը հասկանում է, որ իր բոլոր ցանկությունները հլու կենդանու պես կատարող ուժային ու արդարադատության համակարգերի պատրաստակամության պայմաններում անգամ դժվար է լինելու վարկից զուրկ, թույլ ու սահմանափակ իշխանությունը պահելը, մանավանդ, երբ երկրի առջև ցցված են տարերային կամ կազմակերպված ըմբոստացումների ներուժ պարունակող հիմնահարցեր: Այդ իսկ պատճառով նկարված ընտրություններն անգամ նրան հոգեկան հանգստություն չեն բերում՝ շարունակվում են ընդդիմության նկատմամբ հալածանքներն ու ձերբակալությունները: Հապշտապ կերպով հին խորհրդարանի կազմով վարչապետ կոչվածը դեռևս փորձում է իր կառավարման և գալիք ընտրությունների համար իր վրայով հարմար օրենքներ կարել: Նա ձգտում է գլխատել ընդդիմադիր ուժերին, որպեսզի հավանական նոր ըմբոստացումների ժամանակ ժողովուրդը զրկված լինի կարող և հեղինակություն վայելող առաջնորդներից: Ութը տարի անընդհատ ժողովրդին սեր բացատրվող ղեկավարը միանգամից կաշառակեր հայտարարեց արձանագրված կես միլիոնից ավելի մարդկանց, որոնք ձայն էին տվել ընդդիմությանը: Փաշինյանը մեծ ցնցում ապրեց նախընտրական շրջանում հանկարծ հասկանալով, որ ժողովուրդը ոչ միայն զզվում է իրենից, այլև հաղթահարել է վախի զգացողությունը: Փաստացի այսօր նրա դիմաց մի հասարակություն է, որը չի ցանկանում տեսնել իրեն, և նման պայմաններում ոչ մի հանճարեղ դիկտատորի համար հեշտ չէ երկար ժամանակով կայուն պահել գողացված աթոռը: Մյուս կողմից, հիմնական ընդդիմադիր ուժերը կպահպանեն ձեռքբերած վարկը, եթե իսկապես կազմեն միասնական ճակատ, անկախ խորհրդարան մտնել-չմտնելու հարցից կգեներացնեն ժողովրդական դժգոհությունը և կսկսեն երկարատև համաժողովրդական պայքար: Ինչպես ֆիզիկայի հայտնի օրենքն է հաստատում, բնության մեջ էներգիան չի կորչում, այլ մի ձևից փոխակերպվում է մեկ այլ ձևի:

Սա հասկանում է Նիկոլը, վստահ ենք հասկանում են նաև ազգային ուժերի այսօրվա առաջնորդները: ■

Հետընտրական գործընթացները Հայաստանում: Լռություն փոթորկից առաջ

Անի Մելքոնյան
Պատմաբան

Հունիսի 7-ին Հայաստանում տեղի ունեցան հերթական խորհրդարանական ընտրությունները, որոնց լեգիտիմությունը՝ մեղմ ասած, կասկածի տակ է:

Նախ՝ ձայների հաշվարկը դեռ չավարտված, Փաշինյանը հայտարարեց իր հաղթանակի մասին, ինչը լեգիտիմության տեսանկյունից շատ կասկածելի է, քանի որ «Նիկոլ Փաշինյանի հայտարարության պահին տեղամասերում դեռ ձայների հաշվարկը ավարտված չի եղել՝ կամ ավարտվել է Փաշինյանի ասուլիսին զուգահեռ կամ առանձին դեպքերում ավարտվել է ասուլիսից 1-2.5 ժամ անց»:[1] Սա նշանակում է, որ վարչապետի աթոռը զբաղեցնող անձը հստակ հրահանգ է իջեցրել ԿԸՀ-ին ընտրությունների արդյունքների վերաբերյալ:

Հունիսի 8-ին ԲՀԿ-ն դիմեց ձայների վերահաշվարկի պահանջով, քանի որ «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում քվեարկության արդյունքների հրապարակման օնլայն համակարգով «Բարգավաճ Հայաստան» կուսակցության հավաքած ձայները 4 տոկոս էին, ինչն անցողիկ շեմ է, սակայն ավելի ուշ ԿԸՀ նախագահ Վահագն Հովակիմյանի ներկայացրած տվյալներից պարզ է դառնում, որ ԲՀԿ-ի ձայները 3.996 տոկոս են, հետևաբար, այս պահի դրությամբ չի հաղթահարում անցողիկ շեմը»,[2] ակնհայտ էր, որ արհեստականորեն ԲՀԿ-ին զրկում էին իր քվեներից, ինչի իրավական ձևակերպումը տվեց ԿԸՀ-ն հունիսի 12-ին հայտարարելով, որ «խորհրդարան կանցնի 3 ուժ, ԲՀԿ-ն չի հաղթահարել անցողիկ շեմը»:[3]

Այն, որ ընտրությունները կեղծվել են, որ տարատեսակ չարաշահումներով, կեղծիքներով ու վարչական ռեսուրսի կիրառմամբ Փաշինյանը կարողացավ հավաքել ձայների ընդամենը 49%-ից մի փոքր ավելին, ակնհայտ է, ուստի դրա վրա կանգ չենք առնելու, կփորձենք խոսել հետընտրական հնարավոր զարգացումներից:

Ընտրություններին հաջորդող օրվանից արդեն ակնհայտ էր, որ Փաշինյանի «պյուռոյան հաղթանակից» հետո, ընտրողների մի ստվար զանգվածի մոտ իշխում է այն մտայնությունը, թե հավաքական ընդդիմությունը չպետք է վերցնի մանդատները, իսկ մյուս հատվածը պնդում է հակառակը, որ պետք է վերցնի:

Իրականությունն այն է, սակայն, որ թե՛ Փաշինյանը, որպես 50+1% չհավաքած, լեգիտիմության լուրջ խնդիր ունեցող ու Ալիևի պահանջները կատարելու համար բավարար քանակությամբ պատգամավորներ չունեցող՝ փոքրամասնության վարչապետ, և թե՛ հայաստանյան ընդդիմությունը հայտնվել են

պատային իրավիճակի առաջ, որովհետև՝ եթե հիմա ընդդիմությունը վերցնի մանդատները ու գնա ԱԺ, դա շատերի համար կընկալվի, որպես «ընտրությունների լեգիտիմացում» ու ընդդիմադիր քաղաքացիների շարքում լուրջ հիասթափություն առաջ կբերի: Մանդատները չվերցնելու դեպքում, սակայն, կարող է առաջանալ մի իրավիճակ, երբ Փաշինյանի հանցավոր հակահայ քաղաքականության հետևանքով սովի ու սնանկացման եզրին հասած ժողովուրդն ինքնաբուխ կողողի փողոցները, իսկ խորհրդարանում ընդդիմության բացակայությունը լուրջ խնդիրներ կառաջացնի իշխանության փոխանցման հարցում:

Ինչևէ, լիահույս ենք, որ մեր երկու առաջատար ընդդիմադիր ուժերը հաշվարկել են բոլոր հնարավոր սցենարները և կկայացնեն լուրջ ու կշռադատված որոշում:

Հետընտրական հաջորդ սցենարը կարող է լինել փողոցային պայքարը, ինչն այս պահին կարծես թե չի նշմարվում, նաև հասարակության շրջանում առկա որոշակի հիասթափությամբ պայմանավորված: Գուցե նաև այդ հարցում ընդդիմության մի մասին որոշակիորեն կաշկանդեց Նիկոլ Փաշինյանի հայտարարությունը՝ «ով համաձայն չէ՝ հենց այսօրվանից դուրս եկեք փողոց»:[4] Ըստ նրանց, ժողովրդին փողոց դուրս բերելը կարող էր ընկալվել, որպես ընդդիմության կողմից փաշինյանական օրակարգի սպասարկում և երկրորդ. հավանաբար մտավախություն կար, որ Փաշինյան-Ալիև պայմանավորվածություն կարող է

լինել սադրանքներով քաղաքացիական բախումներ հրահրելու ու Հայաստանի ներքաղաքական կյանքը տակնուվրա անելու հարցում:

Ինչևէ, այս փուլում կարծես թե փողոցային պայքարի հեռանկար չի նշմարվում, հատկապես, որ ընդդիմադիր խոշոր ուժերը դեռ ՍԴ-ում վիճարկում են ընտրությունների արդյունքները:

Իհարկե իշխանափոխության բազմաթիվ տարբերակներ կան, բացի ընտրություններից ու փողոցային պայքարից, որոնց մասին իհարկե մեր խոշոր ընդդիմադիր ուժերը գիտեն՝ հետևաբար պարտավոր են ունենալ նաև պլան Բ, պլան Գ ու Դ, հատկապես, որ վստահ ենք, շատ լավ հասկանում են, թե ինչ ողբերգական հետևանքներ կարող է ունենալ Փաշինյանի հետագա կառավարումը Հայաստանի համար, և խոսքը միայն տնտեսական սարսափազդու վնասների մասին չէ, որոնք հավանաբար կրելու է ՀՀ-ն ռուսական պատժամիջոցների ու հայ-ռուսական հարաբերությունների վատթարացման հետևանքով:

Հայաստանի գլխին, դամոկլյան սրի պես կախված է 300.000 ադրբեջանցիների վերաբնակեցման վտանգը, որի մասին պաշտոնապես խոսում են Ադրբեջանում «Արևմտյան ադրբեջանցիների՝ հայրենի բնակավայրեր վերադարձի հարցը»՝ դիտարկելով որպես Ադրբեջանի և Հայաստանի միջև խաղաղության գործընթացի շրջանակում քննարկվող գլխավոր թեմաներից մեկը…:

«Հայաստանի ղեկավարությունը պետք է հաշվի առնի տարածաշրջանում ձևավորված նոր իրողությունները»,[5]- հայտարարել է «Արևմտյան Ադրբեջանի համայնքի» նախագահ Ազիզ Ալեքբերլին՝ «Վերադարձ Արևմտյան Ադրբեջան. պատմական արդարության և մարդու իրավունքների վերականգնում» խորագրով միջոցառման ժամանակ: Հայաստանից, իհարկե պատասխան չի հնչել՝ արցախցիների վերադարձի իրավունքը շարունակաբար ժխտող իշխանության կողմից:

Իսկ ադրբեջանցիների վերաբնակեցումը Հայաստանում, կնշնակի նաև ընտրական իրավունքի իրացում, թուրքական խմբակցություն ԱԺ-ում, ՏԻՄ-երում թուրք ավագանիների ու համայնքի ղեկավարների, թուրք բնակչության «իրավունքների պաշտպանության» համար թուրքական ոստիկանության ու զինուժի առկայություն, ինչը կամ կհանգեցնի հայ-թուրքական անդադար բախումների կամ Հայաստանի Հանրապետության լուծարման ու Հայաստանի թուրքացման: Սա Հայաստանի քաղաքական դաշտի խոշոր խաղացողները շատ լավ են հասկանում, և հուսով ենք ունեն՝ արագ ու անցնցում ճանապարհով Հայաստանի թուրքահպատակ իշխանությանը հեռացնելու արդյունավետ տարբերակ, եթե ոչ, ապա այդ տարբերակը պետք է հնարավորինս արագ գտնել, կամ խորհրդակցել հասարակության առավել գիտակից զանգվածների հետ ու մշակել փողոցային պայքարի ճանապարհով իշխանափոխության հասնելու առավել արագ և արդյունավետ ճանապարհը, որովհետև, ինչպես ցույց են տվել ՀՀ պատմության վերջին 30 տարիները՝ Հայաստանում դժվար է իշխանություն փոխելը ընտրությունների ճանապարհով, փողոցային պայքարի ճանապարհով էլ գերագույն բարդ խնդիր է, եթե իհարկե այդ իշխանությունը, 2018-ի իշխանության նման, տրամադրված չէ օրերի ընթացքում հեշտությամբ հանձնելու իշխանությունը:

Ամեն դեպքում, Հայաստանի Հանրապետության ժողովուրդն ու ընդդիմադիր քաղաքական ուժերն ունեն մեկ տարուց էլ քիչ ժամանակ դեպի անդունդ սլացքը կասեցնելու և Հայաստանի Հանրապետության լուծարումը կանխելու համար, հապաղելը, ուշացումը կամ նախկին սխալների անդադար կրկնումը կարող են Հայաստանի համար ողբերգական 2027-ի արժանանալ, հետևաբար պետք է գործել արագ և հնարավորինս արդյունավետ, քանի դեռ հավանականություն կա կանխելու անդառնալի և ճակատագրական կորուստները:

Ծանոթագրություններ

1. https://www.yerkir.am/hy/article/2026/06/10/313345
2. https://armenpress.am/hy/article/1252424
3. https://yerkir.am/hy/article/2026/06/14/313581
4. https://www.panorama.am/am/news/2026/06/17/%D5%86%D5%AB%D5%AF%D5%B8%D5%AC-%D5%93%D5%A1%D5%B7%D5%AB%D5%B6%D5% B5%D5%A 1%D5% B6/3162030
5. https://www.aravot.am/2026/06/24/1565321/

«Արևմտյան Ադրբեջանի» գաղափարը որպես աշխարհաքաղաքական ճնշման և համակարգային վերաձևման ռազմավարական հայեցակարգ

Արամ Շահնազարյան
Քաղաքական վերլուծաբան

Հայաստանի և հայ ժողովրդի առջև ծառացած մարտահրավերների շարքում, վերջին տարիներին, առանձնահատուկ տեղ է զբաղեցնում, այսպես կոչված, «Արևմտյան Ադրբեջանի» թեման: Եթե ընդամենը մի քանի տարի առաջ այն կարող էր ընկալվել որպես ադրբեջանական քարոզչամեքենայի հերթական ծայրահեղական և մարգինալ նախաձեռնություն, ապա այսօր արդեն կասկածից վեր է, որ գործ ունենք պետական մակարդակով ձևավորված, համակարգված և երկարաժամկետ իրականացվող ռազմավարության հետ, որի ռազմավարական խորությունն ու քաղաքական նշանակությունը վաղուց արդեն դուրս են քարոզչության սահմաններից: Խոսքն այլևս քարոզչական հերթական նախաձեռնության մասին չէ, այլ պետական դոկտրինի մակարդակի մշակված ծրագրի, որի վերջնանպատակը Հայաստանի Հանրապետության նկատմամբ աշխարհաքաղաքական և հոգեբանական ճնշման համակարգային ամրագրումն է:

«Արևմտյան Ադրբեջան» եզրն այսօր փաստացի վերածվել է թուրք-ադրբեջանական դաշինքի ռևիզիոնիստական գաղափարաքաղաքական դոկտրինի առանցքային հենասյան, որի միջոցով փորձ է արվում ոչ միայն վերաձևել տարածաշրջանի աշխարհաքաղաքական հավասարումների քարտեզը, այլև հարվածել հայկական պետականության գոյաբանական հիմքերին: Այս առումով, գործ ունենք պետական մակարդակով մշակվող և հետևողականորեն իրականացվող քաղաքական նախագծի հետ, որի նպատակն է կազմաքանդել հայկական պետականության գաղափարական հենքերը, իմաստազրկել նրա ինքնիշխանության բովանդակությունը և կասկածի տակ դնել հայ ժողովրդի՝ սեփական հայրենիքում պետականորեն կազմակերպված գոյության պատմական ու քաղաքական իրավաչափությունը:

Այս տեսանկյունից «Արևմտյան Ադրբեջանի» հայեցակարգը չի կարող դիտարկվել լոկ որպես ադրբեջանական քաղաքականության առանձին դրսևորում: Այն վերածվել է տարածաշրջանի աշխարհաքաղաքական քարտեզի վերաձևման ռազմավարության բաղկացուցիչ մասի, որը մշակվում և առաջ է մղվում թուրք-ադրբեջանական սերտ ռազմավարական համագործակցության շրջանակներում: Այս ռազմավարության տեսանկյունից Հայաստանը դիտարկվում է ոչ միայն որպես հակառակորդ պետություն, այլև որպես աշխարհագրական, քաղաքական և քաղաքակրթական գործոն, որը խոչընդոտում է Բոսֆորի ափերից մինչև Կենտրոնական Ասիա ձգվող միասնական աշխարհառազմավարական տարածքի ձևավորմանը: Հետևաբար Հայաստանի նկատմամբ իրականացվող ճնշումները չեն բխում միայն երկկողմ հակասություններից կամ հետպատերազմյան իրողություններից: Դրանք բխում են շատ ավելի խորքային և հեռահար աշխարհաքաղաքական հաշվարկներից, որոնցում հայկական պետականության դիմադրող կանության կտրուկ թուլացումը դիտարկվում է որպես ռազմավարական անհրաժեշտություն:

Հենց այս աշխարհաքաղաքական տրամաբանության շրջանակներում էլ «Արևմտյան Ադրբեջանի» գաղափարը ձեռք է բերում առանձնահատուկ ռազմավարական նշանակություն: Եթե նախորդ տասնամյակներում հակահայկական քաղաքականության հիմնական առանցքն Արցախի հարցն էր, ապա այսօր նույն գործառույթն աստիճանաբար փոխանցվում է «Արևմտյան Ադրբեջանի» օրակարգին: Դրա տրամաբանության սահմաններում Հայաստանը ներկայացվում է ոչ թե որպես տարածաշրջանի ինքնիշխան և լիիրավ պետություն, այլ որպես վիճարկելի պատմաքաղաքական տարածք, որի նկատմամբ հնարավոր է ձևակերպել նոր պահանջներ, առաջ քաշել նոր հավակնություններ և ստեղծել մշտական ճնշման նոր գործիքակազմ: Հենց այս հանգամանքն է, որ «Արևմտյան Ադրբեջանի» թեման վերածում է Հայաստանի Հանրապետության անվտանգությանը, ինքնիշխանությանը և երկարաժամկետ պետական

«Վերադարձ Արևմտյան Ադրբեջան» երրորդ փառատոն-համաժողովի գովազդային պաստառը

կենսունակությանը անմիջականորեն սպառնացող մարտահրավերի:

Թեև Հայաստանի գործող իշխանությունները փորձում են հանրությանը ներշնչել, թե «Արևմտյան Ադրբեջանի» թեման և դրա շրջանակում շուրջ 300 հազար ադրբեջանցիների Հայաստան «վերադարձի և վերաբնակեցման» վերաբերյալ մտահոգությունները չեն համապատասխանում իրականությանը և արհեստականորեն ուռճացված քաղաքական թեզեր են, այդուհանդերձ, նման մոտեցումը ոչ միայն իրականությունից կտրված է, այլև դրսևորվում է որպես վտանգավոր քաղաքական ինքնախաբեություն:

Իրականում «Արևմտյան Ադրբեջանի» հայեցակարգի շրջանակներում ձևավորվող՝ ադրբեջանցիների Հայաստան հնարավոր վերադարձի վերաբերյալ քաղաքական և գաղափարական օրակարգերը վաղուց դուրս են եկել Երևանի ներքաղաքական խոսույթի սահմաններից և ձևավորվում են Բաքու–Անկարա առանցքում՝ համակարգային ռազմավարական որոշումների մակարդակով:

Այս իրողության ամենաթարմ և բացահայտ դրսևորումներից մեկը նախօրեին Նախիջևանի Օրդուբադ քաղաքում կազմակերպված «Վերադարձ Արևմտյան Ադրբեջան» երրորդ փառատոն-համաժողովն էր: Այստեղ արդեն խոսքը ոչ թե շարքային միջոցառման, այլ պետական քաղաքականության հրապարակային ցուցադրության մասին է: Երբ այդպիսի միջոցառումը տեղի է ունենում պետական հովանավորությամբ, և երբ կրթության ու գիտության ոլորտի պատասխանատու պաշտոնյան հայտարարում է, որ «Արևմտյան Ադրբեջանի» թեման ազգային ինքնության կառուցման ռազմավարական առանցք է, ապա հստակ է, որ գործ ունենք ոչ միայն գաղափարական դիրքորոշման, այլև՝ պետական դոկտրինի բացահայտ ձևակերպման հետ:

Նույնքան խոսուն է այն փաստը, որ այդ շրջանակներում «Արևելյան Զանգեզուրի» վերաբնակեցման փորձը ներկայացվում է որպես հաջողված մոդել և ապացույց, որ հետևողական քաղաքականության պայմաններում հնարավոր է իրագործել որևէ ռազմավարական նպատակադրում: Այս ձևակերպումների տրամաբանությունը վկայում է, որ այստեղ գործ ունենք ոչ թե առանձին «հումանիտար» կամ «պատմական հիշողության» գործիքավորման փորձերի հետ, այլ քաղաքական փորձի մոդելավորման գիտակցված մոտեցման հետ, որի միջոցով ստեղծվում է նախադեպային մտածողություն՝ ուղղված հնարավոր ռազմավարական նախագծերի արդարացմանն ու լեգիտիմացմանը:

Այս ամենը թույլ է տալիս արձանագրել, որ քննարկվող գործընթացները դուրս են եկել պատմական նարատիվների պարզ բանաձևման շրջանակներից և տեղափոխվել են ավելի խորքային մակարդակ՝ տարածքային, քաղաքական և երկարաժամկետ ռազմավարական նպատակադրումների տրամաբանության դաշտ, որտեղ ձևավորվում է ծրագրային մտածողություն՝ որպես տարածաշրջանային աշխարհաքաղաքական վերաձևումների գործիքակազմի մաս:

Այս համատեքստում առանձնակի նշանակություն ունի նաև Թուրքիայի քաղաքական վերնախավի հռետորաբանությունը, որը փաստացի ամբողջացնում է թուրք-ադրբեջանական համատեղ ռազմավարական մոտեցումների գաղափարական շրջանակը: Թուրք պաշտոնյաները «Արևմտյան Ադրբեջանի» խնդիրը ներկայացնելով որպես հարյուր հազարավոր մարդկանց «պատմական հայրենիք» վերադարձի իրավունք, փաստում են, որ այստեղ գործ ունենք ոչ թե առանձին քաղաքական գնահատականների, այլ համակարգված խոսույթի ձևակերպման հետ:

Այս ձևակերպումների հիմքում ընկած է քաղաքական լեզվի նպատակային մշակում, ըստ որի «իրավունք», «արդարություն» և «խաղաղություն» հասկացությունները վերածվում են ոչ թե իրավական կամ բարոյական հասկացությունների, այլ՝ քաղաքական պահանջների լեգիտիմացման մեխանիզմների: Այսպիսով ձևավորվում է մի եզրաբանական դաշտ, որի միջոցով հնարավոր է արտաքին աշխարհին ներկայացնել ռազմավարական նպատակադրումները որպես հումանիտար կամ իրավական գործընթացներ՝ քողարկելով դրանց իրական՝ տարածաշրջանի աշխարհաքաղաքական քարտեզի վերաձևման տրամաբանությունը:

Հետևաբար պետք է ընդգծել, որ «Արևմտյան Ադրբեջանի» գաղափարը չի կարելի դիտարկել որպես առանձին քաղաքական-հասարակական գործիչների կամ ակադեմիական շրջանակների բնույթի հռե-

տորաբանություն, այլ այն երկարաժամկետ և աստիճանաբար ձևավորված պատմաքաղաքական հայեցակարգի արդյունք է՝ փուլային և կուտակային զարգացմամբ, որտեղ այն ծառայում է մեկ գլխավոր նպատակի՝ կասկածի տակ դնել հայկական պետականության պատմական և քաղաքական լեգիտիմությունը: Պետականությունը, որը զրկվում է իր պատմական խորությունից, դառնում է քաղաքական սակարկության առարկա: Հենց այս տրամաբանությունն է ընկած «Արևմտյան Ադրբեջանի» նախագծի հիմքում՝ Հայաստանը ներկայացնելով որպես վիճարկելի տարածք, որի նկատմամբ կարող է ձևակերպվել «պատմական իրավունքների վերականգնման» քաղաքականություն:

Սակայն այս նախագիծը չի սահմանափակվում պատմության վերաշարադրմամբ. այն գործնական քաղաքական ճնշման մեխանիզմ է: Պատմությունը այստեղ վերածվում է պահանջների շղթայի մեկնարկային կետի՝ մշակութային ժառանգությունից մինչև տարածքային հավակնություններ, որտեղ յուրաքանչյուր փուլ նախապատրաստում է հաջորդը՝ հիմք ստեղծելով նոր պահանջների ձևակերպման համար: Այս գործընթացը տեղավորվում է թուրք-ադրբեջանական ռազմավարական փոխգործակցության ընդհանուր տրամաբանության մեջ՝ տարածաշրջանային քաղաքականության ձևավորման համադրված նպատակադրումների շրջանակում:

Այս իրադրության ֆոնին Սյունիքի գործոնն ունի առանցքային, գրեթե վճռորոշ նշանակություն: Այն ոչ միայն աշխարհագրական տարածք է, այլև աշխարհաքաղաքական հանգույց, որի վերահսկողությունը կամ շրջանցումը ձևավորում է տարածաշրջանային հաղորդակցությունների ամբողջ համակարգը: Հենց այստեղ է, որ «Արևմտյան Ադրբեջանի» գաղափարը ստանում է իր ամենախորքային քաղաքական գործառույթը՝ դառնալով լրացուցիչ ճնշման և գաղափարական հիմնավորման մեխանիզմ:

Այս հանգուցային հասկացությունը ձևավորում է նաև Սյունիքի շուրջ քաղաքական խոսույթի բարձր զգայնությունը: Տարածաշրջանային հաղորդակցությունների հարցը այստեղ դուրս է գալիս զուտ ենթակառուցվածքային հարթությունից և վերածվում է ռազմավարական ազդեցության գործոնի, որի միջոցով կարող է ընդլայնվել քաղաքական պահանջների օրակարգը: Այս համատեքստում Սյունիքը դիտարկվում է ոչ թե մեկուսացված տարածքային միավոր, այլ ընդհանուր ճնշման համակարգի բաղադրիչ՝ սերտորեն կապակցված «Արևմտյան Ադրբեջանի» գաղափարական շրջանակում ձևավորվող պահանջների դինամիկայի հետ:

Այս փոխկապակցվածության պայմաններում Հայաստանի գործող իշխանությունների քաղաքական խոսույթում հաճախ գերիշխում է այն մոտեցումը, թե հնարավոր է հասնել հարաբերական կայունության՝ զիջումների և ազգային պահանջատիրության օրակարգից հրաժարվելու միջոցով: Սակայն գործընթացների զարգացումը ցույց է տալիս, որ

նման ընկալումը հիմնականում բխում է քաղաքական հաշվարկի սահմանափակ շրջանակից և չի համընկնում տարածաշրջանային զարգացումների իրական տրամաբանության հետ: Երբ հակառակորդն առաջնորդվում է առավելագույն նպատակադրումների տրամաբանությամբ, զիջումները սովորաբար չեն հանգեցնում վերջնական հավասարակշռության, այլ վերածվում են նոր պահանջների ձևավորման հիմքի:

Ադրբեջանի վարքագիծը վերջին տարիներին այս տրամաբանության հետևողական արտահայտությունն է. յուրաքանչյուր փուլում զիջումները ոչ թե փակել են հակամարտային օրակարգը, այլ ընդլայնել այն՝ ձևավորելով պահանջների ուռճացող փաթեթ: Այս համատեքստում «Արևմտյան Ադրբեջան» հայեցակարգը այդ ռազմավարության գաղափարական շրջանակը ձևավորող առանցքային տարր է, որի միջոցով փորձ է արվում վերաիմաստավորել Հայաստանի նկատմամբ առաջադրվող պահանջների բնույթը և ընդլայնել դրանց արդարացման դաշտը՝ պատմաքաղաքական հիմնավորումներով:

Այս իրողությունների ամբողջությունը թույլ է տալիս արձանագրել, որ գործ ունենք ոչ թե առանձին քաղաքական հայտարարությունների կամ իրավիճակային նախաձեռնությունների հետ, այլ ձևավորվող երկարաժամկետ և փուլային ռազմավարական համակարգի հետ, որում գաղափարական, քաղաքական և հաղորդակցային գործիքակազմերը գործում են փոխկապակցված տրամաբանությամբ: Այս համակարգի առանձնահատկությունն այն է, որ այն զարգանում է կուտակային ազդեցության սկզբունքով՝ յուրաքանչյուր փուլում ընդլայնելով իր պահանջների և արդարացման շրջանակը:

Այս պայմաններում առանցքային մարտահրավերը ոչ միայն արտաքին քաղաքական արձագանքների ձևակերպումն է, այլև գործընթացների բնույթի ճիշտ ընկալումը՝ որպես նպատակային և երկարաժամկետ ռազմավարական տեսլական: Հետևաբար անհրաժեշտ է վերանայել խնդրի նկատմամբ մոտեցման հայեցակարգային հիմքերը՝ անցում կատարելով իրավիճակային արձագանքից դեպի համակարգային և կանխատեսող ռազմավարական մտածողություն, ըստ որի կարելի է համարժեք գնահատել ընթացող զարգացումների խորքային տրամաբանությունը:

Քաոս, որի վերջին հանգրվանը ինքնաոչնչացումն է

Մանվել Մկրտչյան
Հրապարակախոս

Պատերազմների պատմությունը վկայում է, որ ցանկացած բանակի կործանումը ոչ թե նահանջն ու պարտությունն է, այլ բանակի ներսում սկսված խուճապն ու քաոսը: Եվ զորքի նահանջը և՛ նույնիսկ մեծ կորուստները վերականգնելի են, եթե չկա խուճապ, չկա քաոս և հուսահատություն: Թե՛ համաշխարհային, թե՛ հայոց պատմությունը ասվածի բազմաթիվ վառ օրինակներ են տվել: Ազգերն ու պետությունները անցել են սրանց միջով ու լավ գիտեն, թե ինչ զարհուրելի հետևանքների է հանգեցնում քաոսը և հուսահատությունը և սա ոչ միայն պատերազմների, ճակատամարտերի, ներքին առճակատումների դեպքում, այլև խորը սոցիալ-տնտեսական ճգնաժամերի, հասարակական ու քաղաքական, հոգևոր ու բարոյական անկումների պարագայում: Սա ամենալավը գիտակցում են խոհեմ առաջնորդները, լուրջ կառավարությունները, հասարակությունը և մտածող ազգային հանրությունը: Ահա, թե ինչու նրանք ձգտում են պետությունը զերծ պահել քաոսից ու ցնցումներից, կանխել այն ամենը, ինչը կարող է հանգեցնել դրան: Անհատի կամ մեկ մարդու ներսում՝ հոգում և գիտակցության մեջ սկսված քաոսը առաջին հերթին մտքի մթագնումն է, հույզերի անկառավարելի վայրիվերումը: Մարդը վերածվում է խաղալիքի, փետուրի, անհասկանալի գոյացության, որը բացարձակ չի հասկանում, թե ինչ է կատարվում իր հետ, իր շուրջը, չի գիտակցում իր օգուտն ու վնասը, նրա բոլոր քայլերը տարերային են, նրա հոգևոր կառույցը այլևս ջախջախված է, իսկ բանական հատվածը սրընթաց գահավիժում է: Մի՞թե պատահական է, որ մարդը այդքան հեշտ կարող է ինքն իրեն գցել ցանկացած մոլորության մեջ, հավատալ գոյություն չունեցող բաների, պայքարել դրանց հաղթահարման համար և այլն: Ուշագրավ է, որ քաոսի մեջ ապրող մարդու համար նույնիսկ առողջ բնազդներն են նահանջում՝ նրան դարձնելով կերակուր ամենտարբեր հանգամանքների երախում: Նրա միտքն այլևս ապակառուցողական է (դեստրուկտիվ), տարերային, իսկ որոշումներն ու քայլերը մեկը մյուսից անհեթեթ: Նրանց էությունը, որպես կանոն, խուճապային է, էքսպանսիվ, իսկ այդպիսիներին կառավարելն անասելի հեշտ է, քանի որ կուլ են տալիս ցանկացած մանիպուլյատիվ խոսք, կեղծիք և հակված չեն բանական եզրահանգումների: Մի կարճ ժամանակով ուժգին ոգևորվելը և այնուհետև՝ խորը հուսահատությունը նրանց դեպքում արտահայտվում է բուռն սիրո և ատելության ձևով: Մարդկային հոգեկերտվածքը, հատկապես նրա տարերային ու քաոտիկ էությունը, չափազանց բարդ երևույթ է: Այդ մասին բավական հետաքրքիր դիտարկում է արել չին մեծ մտածող և միստիկ Լաո Ցզին: Մի անգամ նրան հարցրել են՝ կա՞ արդյոք միջոց քաոսից



ազատվելու, նա քմծիծաղ է տվել ու ասել. «Ենթադրենք դուք գնացել եք առվակից ջուր բերելու ու տեսնում եք, որ ջուրը պղտոր է, խմելու համար ոչ պիտանի: Մի՞թե դուք մտնում եք առվակի մեջ և փորձում ազատել տիղմն ու ավազը ջրից: Չէ՞ որ դա անհնար է... Դուք միայն նստում եք առվակի ափին ու սպասում: Որոշ ժամանակ անց տեսնում եք, թե ինչպես տիղմն ու ավազը նստեցին հատակին և ջուրը առանց ձեր ջանքերի զուլալվեց: Այդպես էլ քաոսի դեպքում՝ ամեն բանը կարգավորվում և զուլալվում է ինքնաբերաբար: Սպասումն ու համբերությունը լուծումն են շատ հարցերի»: Սա, իհարկե, միստիկական գեղեցիկ հայացք է, բայց կիրառելի չէ պրակտիկ քաղաքականության դեպքում: Ազգերն ու հասարակությունները մարդու բնույթից բխող քաոսի դեմն առնելու ճանապարհին ստեղծեցին պետություն կառույցը, պետություն երևույթը, որը միակ լավագույն պատնեշն էր քաոսի դեմ: Հասարակության կենսագործունեությունը կազմակերպող և կառավարող ինստիտուտները՝ քաղաքական, սոցիալ տնտեսական, մշակութային և հատկապես իրավական ու անվտանգային համակարգերը, մարդկային բանականության բարձր դրսևորումներն են: Այս համակարգերից թեկուզ մեկի վատ աշխատանքը հանգեցնում է անցանկալի, եթե չասենք՝ աղետալի հետևանքների: Ինչքան ամուր են այդ համակարգերը, այնքան առողջ է հասարակությունը, այնքան հեռու է քաոսի վտանգը: Այս մասին ամենալավ գիտեն իշխանությունները քանի որ ամե-

նից մոտ հենց նրանք են կանգնած հասարակության կնճռոտ հիմնահարցերին: Միացյալ Նահանգների նախագահ Ֆրանկլին Ռուզվելտը, որի կառավարման տարիներին Ամերիկան տեսավ իր պատմության ամենաուժեղ տնտեսական ճգնաժամերից մեկը՝ «Մեծ դեպրեսիան», ասում էր. «Կառավարության ցանկացած սխալ, թեկուզ ոչ միտումնավոր վրիպում, ուժգնանում է հասարակության ներքևի շերտերում և հանգեցնում է հրեշավոր հետևանքների: Կառավարության քայլերի հապաղման կամ շտապողականության գինը վճարում է ոչ թե քաղաքական ու բիզնեսի ընտրախավը, այլ ժողովուրդը՝ ողջ հասարակությունը»: Սայլակին գամված մարդը, սրտիկներ չէր շռայլում աջ ու ձախ, այլ խոհեմաբար տեսնում էր իր երկրի ներկան ու ապագան, հարցեր էր կարգավորում: Ժամանակները փոխվեցին, շատ ջրեր հոսեցին աշխարհում և ահա եկավ զելենսկիների, սահակաշվիլիների, փաշինյանների, կայակալասների, մակրոնների, ջոնսոնների, ֆոնդերլյայենների և նմանատիպ բախտախնդիր ամբոխավարների ժամանակը: Ինչո՞ւ, ինչպե՞ս, ի՞նչ տրամաբանությամբ դա տեղի ունեցավ, ի՞նչպես բնական նպատակները գլխիվայր շուռ եկան... Հարցեր, որոնց պատասխանները մարդկությունը երևի կիմանա մի քանի տասնամյակ հետո: Մտաբերեցինք այս գործիչներին, որպեսզի առավել տեսանելի լինեն մոլորակով մեկ քաոս սփռողների նողկալի արարքները: Մենք էլ, ինչքան լարենք մեր միտքը, միևնույն է, 2018 թվականից ի վեր չենք գտնի իշխանությունների բանական արարքների հետքեր: Տկարամիտ իշխանապետը հանձնեց մեր հայրենիքի մի թանկագին կտոր և ասաց՝ «Հայաստանը վերջապես դարձավ անկախ», հետո սկսեց «պատմական Հայաստան, իրական Հայաստան» զառանցանքը իր կեղտոտ հետևանքներով: Օրը ցերեկով, բոլորի աչքի առաջ նա ականապատեց Հայաստան-Ռուսաստան քաղաքական ու հատկապես՝ տնտեսական կամուրջը, հազարավոր տնտեսվարողների ու այգեգործների գցելով հուսահատության և անելանելիության գիրկը: Մոլագարի տենդով հիմա էլ կեղծել է ընտրությունները և կառավարման համակարգը մտցրել փակուղի: Չշարունակեմ, ինձանից լավ գիտեք... Ինչ էլ ասենք, միևնույն է, վերջում կրկին գալու ենք նույն ելակետին, այն է՝ պետությունը զավթած այս թրքահաճոները հատուկ ծրագրով ամեն ինչ տանում են քաոսի: Ժողովուրդը նման դեպքում կասեր՝ «Մի գիժ քարը գլորել է փոսը, հազար խելոք չեն կարողանում հանել»: Պարզապես, պետք է իմանալ, որ օտար կենտրոնները լավ գիտեն արժեհամակարգային քաոս ստեղծելու ներուժը ցանկացած երկրում, այդ իրավիճակներից իրենց ցանկալի շահանակները հանելու հնարավորությունները: Մեր դեպքում՝ այն, ինչ արվում է, կաներ միայն թշնամու դրածոն, թշնամու խամաճիկը: Ցավոք, այսօրինակ քաոսից ու մղձավանջներից երկրները հայտնվում են հրեշավոր սոցիալ-քաղաքական ցնցումների ու արյունահեղությունների մեջ: Ահա թե ուր են գլորում երկիրը այս մարդիկ: Ու տեսնում ենք նաև, որ բրիտանա-

թուրքական տեխնոլոգները շատ կանոնիկ կերպով սրան հարկավոր պահերին միացնում անջատում են, որ ռեխը շաղ տա, դիվադադար անի հանրությանը: Երանի ամեն բան ռեխ շաղ տալով էլ ավարտվեր, բայց քաոսի տոնուսը բարձ պահելու համար պետք են նաև գործողություններ և դրանք չեն ուշանում: Կարող է թվալ, թե քաոս բնորոշումը գույների խտացում է, պատկերավոր բառ, սակայն խնդիրն էլ հենց այն է, որ մեր կյանքի թվացյալ կանոնիկ վիճակների խորքերում օրեցօր ահագնանում է համակարգը լիովին անդամալույծ դարձնելու մղումը, որովհետև վարչախմբի սուտն ու կեղծիքը, տխմարություններն ու սանձարձակությունները այլևս դուրս են մղում մեր կյանքից բանական ցանկացած բան: Պետությունը, որպես հասարակությանը և ժողովրդին կազմակերպող և տեր կանգնող միակ կառույց, դառնում է ոտքի տակի փալաս: Ապականելով ընտրությունները սրանք հասան նրան, որ հասարակությունը այլևս չգիտի ինչին հավատա ու, վստահի, չգիտի ինչին ապավինի, երբ իրավական համակարգը վերածվել է մի մարդու ձեռքի խաղալիքի, իշխանական քմահաճույքների գործիքի: Սա ճահիճի մեջ խեղդվող մարդու վիճակն է, որի միայն քիթ ու բերանն է դեռ մնացել դրսում: Վախը, խուճապը, հուսահատությունը և մյուս բաները, որոնք քաոսի գույներն են, սկիզբ են առնում մարդու և հասարակության զգոնության պակասից կամ չգոյությունից: Մարդը չգիտի ինչ է անում և ինչու, չի հասկանում դեպի ուր է շարժվում և ինչու: Օրինակ, քվեաթերթիկը ՔՊ և Նիկոլի օգտին արկղը գցող մարդը և սոցիալական սեգմենտը բացարձակ չէր գիտակցում, թե ինչ արեց և ինչու: Եթե նրան հարցնեք, թե ինչու այդպես արեց, նա ձեզ կնայի իր դատարկ ու անիմաստ հորթի աչքերով և կասի իշխանական քարոզչամեքենայի ներարկած մեկ-երկու հիմար միտք: Ահա, թե ինչու ենք ասում, որ տհասությունը և անպատասխանատվությունը քաոսի պտուղներն են, իսկ հուսահատությունը քաոսի մեջ ապրող մարդու անբաժան մասը: Կա այսպիսի ալեգորիկ պատմություն հուսահատության վերաբերյալ. «Սատանան հոգնել էր չար գործերից և մի օր որոշեց վաճառքի հանել իր բոլոր գործիքները՝ ատելությունը, նախանձը, ագահությու-

նը, վրեժխնդրությունը, մաղձը, երկերեսանիությունը և այլն: Շուկայում նա մի սեղանիկ դրեց ու դրա վրա շարեց այս արատները որպես մարդակործան գործիքներ: Բայց կար մի գործիք, որը նա նախընտրեց չվաճառել, քանի որ դա, ըստ սատանայի՝ ամենահրեշավորն զենքն էր: Մարդիկ իրար հրմշտելով արագ գնեցին բոլոր գործիքները և հեռացան: Շնչակտուր հայտնվեց վաճառքից ուշացած մի մարդ և խնդրեց, որ մի գործիք էլ իրեն տա: Սատանան ասաց, թե վերջ, ամբողջը սպառվել է, ոչնչով չի կարող օգտակար լինել: Եվ այդ պահին մարդը նկատեց թաքցված գործիքը: Խնդրեց, որ այդ մեկն էլ իրեն վաճառի: Սատանան խոժոռվեց ու ասաց, որ չէր կամենա դա որևէ մեկի ձեռքն ընկնի, որովհետև դա աշխարհի ամենահրեշավոր գործիքն է, դրա անունն է ՀՈՒՍԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ: Տոտալ հուսահատության մասին իրենց ստեղծագործություններում և նամակներում ուշագրավ դիտարկումներ են արել ռուս գրականության ականավոր դեմքեր Ալեքսեյ Տոլստոյը, Բուլգակովը, Շոլոխովը և այլք, երբ խոսել են դարասկզբի Ռուսաստանում տիրող սոսկալի իրավիճակի մասին: Նախահեղափոխական և հեղափոխական Ռուսաստանի այդ շրջանը, որը պատմության մեջ հայտնի է որպես «մղձավանջի և քաոսի» տարիներ, մեծ երկրին բերեց այնպիսի հուսահատություն, որը պարզ բառերով անկարելի է նկարագրել: Քաոսից ծնվեցին զանազան քաղաքական հոսանքները և կուսակցությունները՝ մենշևիկները, բոլշևիկները էսէռները, կադետները, անարխիստները, մոնարխիստները և այլն, որոնցից ամեն մեկն իրեն համարում էր փրկության միակ գիտակը: Ներազգային ցնցումները և արյունահեղությունը «քաոսի» պտուղներն էին, որոնք ռուս ժողովուրդը մինչև օրս էլ ցավով ու ամոթով է հիշում, այնպես, ինչպես մեր հետագա սերունդները կհիշեն Նիկոլի կառավարման տարիները և հայրենիքի կորուստները: Բանն այն է, որ հենց «քաոս հրեշից» էր, որ ծնվեց մեկ ուրիշ հրեշ՝ «բոլշևիզմ» անվանք, որը հետագայում խժռեց ամեն լավ բան իր ճանապարհին: Մարդկության պատմության մեջ սա անվերջ կրկնվող սցենար է՝ «քաոսը» ցրելու փոխարեն առաջնորդներն իրենց ձեռքն են առել մահակը և դարձել արյունարբու բռնակալներ: Բացառություն չեղավ նաև «ադրբեջանա-թուրքական խամաճիկը», որին այսօր արդեն մի ելք է մնացել՝ գնալ զանազան կամայականությունների: Ամենաքիչը 100 հազարից ավելի քվե գողացողի համար այլևս սահմանագծեր և արգելակներ չկան և նա ունի մեկ գերխնդիր՝ ինչ որ կերպ մարսել իր սրիկայություններն ու հանցանքները: Այլ կերպ ասած՝ քաոսը ծնում է կամայականություն, իսկ կամայականությունն էլ գոյատևում է քաոսի զորությամբ: Այս պահին դժվար է ասել, թե ո՞ր կետում կկտրվի այս արատավոր շղթան: Ի՞նչը կնպաստի դրան, արտաքին և ներքին հանգամանքների ինչպիսի՞ դասավորության դեպքում դա տեղի կունենա: Հունիսի 7-ի ընտրություններին մեր հանրությունը, թող որ ոչ ամբողջությամբ, բայց կարողացավ պրկել իր մկանները և ռեալ ջանքեր գործադրել թրքահպատակներին վռնդելու գործում: Եթե 2021 թ. ընտրություններից հետո ցավով ասում էինք, «Ժողովուրդը, որը ընտրում է խաբեբաներին, ծախված քաղաքական գործիչներին և դավաճաններին զոհ չէ, այլ հանցակից», ապա հիմա գիտենք որ ողջամտությունը բնավ էլ չի լքել մեր հանրությանը: Մնում է, որ նա չհուսահատվի և չհրաժարվի իր մտադրությունից: Դրա համար կան բոլոր նախադրյալները՝ ըմբռստ ժողովուրդ և համերաշխ ընդդիմություն: Իր ուժը գիտակցած ժողովրդի ձեռքից անհնար է խլել նրա արժանապատվությունը, կազդուրվելու կամքը և քաոսը մեկնդմիշտ անցյալում թողնելու վճռականությունը:

Ազգի երազանքը և պատմական հիշողությունը. գոյության հրամայականը

Անժելա Հարությունյան
Բանասեր, մանկավարժ

Ազգերը գոյատևում են ոչ միայն իրենց տարածքով, բանակով կամ տնտեսությամբ, այլև, առաջին հերթին, իրենց հիշողությամբ և երազանքով: Երբ ժողովուրդը կորցնում է իր պատմական հիշողությունը, նա սկսում է մոռանալ, թե ով է ինքը, որտեղից է գալիս, իսկ երբ նրան զրկում են երազանքից, նա դադարում է պատկերացնել, թե ուր պիտի գնա:

Այսօր հայ ժողովրդի առջև ծառացած վտանգը միայն տարածքային կորուստները, անվտանգային սպառնալիքները կամ էլ քաղաքական մարտահրավերները չեն: Ավելի խորը և երկարաժամկետ վտանգ է ազգային դիմագծի խեղումը, ազգի ինքնության, պատմական հիշողության թուլացումը և ազգային երազանքի վերացումը: Եթե ժողովրդի գիտակցության մեջ սերմանվում է այն միտքը, որ նրա հազարամյա պատմությունը երկրորդական է, որ նրա պատմական հայրենիքը պարզապես անցյալի էջ է, իսկ ազգային նպատակներն ու ձգտումները վտանգավոր կամ ավելորդ են, ապա հարված է հասցվում հենց ազգի գոյության հիմքերին: Սա իր հերթին բերելու է ապագայի հանդեպ հավատի թուլացման՝ դարձնելով հասարակությանը հեշտ կառավարելի անդեմ գոյազանգված:

Պատմական հիշողությունը պարզապես անցյալի մասին գիտելիք չէ: Այն ժողովրդի ինքնաճանաչումն է: Երբ հայը խոսում է Հայաստանի մասին, նա նկատի չունի միայն ներկայիս պետական սահմանները, այլ նաև հազարամյակների ընթացքում ձևավորված քաղաքակրթական տարածքը, մտքով գնում է Հայկական լեռնաշխարհ, Մեծ Հայք, որտեղ ստեղծվել են հայկական պետականություններ, մշակույթ և հոգևոր արժեքներ: Երբ հայը խոսում է Արարատի մասին, նա չի հիշում սոսկ, այն, ինչը հիմա Թուրքիայի տարածքում է, այլև այն, որ հայի հպարտության ու փառքի և Հայաստանի կարևորագույն խորհրդանիշներից մեկն է: Երբ հայն ասում է Արցախ, մտքով գնում է Մեծ Հայքի Արցախ աշխարհ ու վերարժևորում է իր հայրենիքը, իր երբեմնի ունեցածն ու իր պատմականին ու իրավականին տեր լինելու միտքն ու հոգեբանությունն արթնանում են նրա մեջ: Նույնը Սևանի մասին՝ նա չի հիշում միայն ներկայիս լիճը, այլ նաև Գեղամա ծովը, և այսպես շարունակ, այսինքն՝ դարերի ընթացքում ձևավորված մշակույթը, պատմությունը և ավանդույթները:

Իսկ հիմա մեր երկրում պետական մակարդակով վարվում է քաղաքականություն՝ փոխելու հայի հայեցի, հայկական մտածելակերպը, ինչը ոչ թե պարզապես վտանգավոր է, այլև աղետաբեր, քանի որ նման մոտեցումը փորձ է կտրելու ազգին իր պատմական խորքից և սահմանափակել նրա ինքնությունը միայն ներկայի նեղ շրջանակներում: Ազգը, որը կորցնում

է իր պատմական հիշողությունը, աստիճանաբար թուլացնում է նաև իր մշակութային, հոգևոր և ազգային դիմադրողականությունը: Պատմությունը, լեզուն, մշակույթը և ազգային արժեքները պարզապես անցյալի հիշողություններ չեն, այլև այն հիմքերն են, որոնց վրա կառուցվում է ժողովրդի ներկան ու ապագան: Երբ հասարակությանը ներկայացվում է, թե ազգային ինքնագիտակցությունը պետք է զիջի տեղը պատմական արմատներից զերծ աշխարհայացքին, վտանգվում է ոչ միայն մշակութային ժառանգությունը, այլև սերունդների կապը սեփական ինքնության հետ: Ուստի ազգային մտածողության պահպանումը չի նշանակում ապրել անցյալով, այլ նշանակում է հենվել սեփական արմատների վրա՝ վստահությամբ կառուցելու համար ապագան: Ազգը, որը հրաժարվում է իր անցյալից, դժվար թե կարողանա վստահորեն կառուցել իր ապագան:

Հայ ժողովրդի համար իր այդ պատմական հիշողության կարևոր բաղադրիչ է հենց Արցախը: Անկախ քաղաքական իրադարձություններից՝ Արցախը հայ ժողովրդի պատմական, մշակութային և հոգևոր ժառանգության մասն է: Կորուստը կարող է ցավ պատճառել և ստիպել վերանայելու անցյալը, բայց չի կարող վերածվել ուրացման: Ժողովուրդը կարող է կորցնել տարածք, սակայն չի կարող կորցնել հիշողություն, եթե չի հրաժարվում իր ինքնությունից: Բայց այսօր՝ Արցախի կորստից հետո, մեզ՝ հայերիս

պարտադրվում է ոչ միայն համակերպվել փաստի հետ, այլ նաև վերանայել սեփական հիշողությունը, ուրանալ՝ բղավելով՝ ինչո՞վ է Արցախը մերը եղել: Մեկ բան է կորուստը, մեկ այլ բան՝ ուրացումը: Ժողովուրդը կարող է կրել ծանր պարտություն, կարող է ժամանակավորապես կորցնել իր պատմական տարածքների նկատմամբ վերահսկողությունը, սակայն եթե սկսում է ժխտել սեփական պատմական ներկայությունը, սեփական մշակութային հետքը կամ սեփական հիշողությունը, ապա վտանգվում է ոչ միայն տարածքը, այլև ինքնությունը, ապագայի պահանջատիրական իրավունքը և գոյությունը: Իսկ ներկայիս հակահայ իշխանությունը հենց ուրացում է սերմանում հայի մեջ, ուրացում իր արմատներից՝ ինչն անում է սպառնալիքով և հասարակության մեջ ազգային հարցերի շուրջ վախի մթնոլորտ ձևավորելով: Երբ փորձ է արվում փակել Արցախի թեման կամ այն ներկայացնել որպես արգելված քննարկման առարկա, ժողովուրդը ոչ միայն աստիճանաբար հեռացվում է իր պատմական հիշողությունից և ազգային ինքնության կարևոր բաղադրիչներից մեկից, այլև ազգային երազանք փայփայելուց, որը փոխանցվում է սերնդեսերունդ՝ որպես հիշողության, հույսի և ինքնության մի մաս՝ ապագայում հասնելու համար պատմական արդարության վերականգնմանը:

Պատմության մեջ բազմաթիվ են ժողովուրդները, որոնք պահպանել են իրենց ազգային նպատակները և երազանքը՝ նույնիսկ ամենադժվար պայմաններում: Եվ այսօր աշխարհում տարբեր պետություններ գիտակցաբար ձևավորում են իրենց ազգային գաղափարախոսությունները և երկարաժամկետ նպատակները՝ դրանք փոխանցելով հասարակությանը, որպես միասնական ուղղություն: Ազգային երազանքն այնտեղ դիտվում է ոչ թե որպես վերացարկված գաղափար, այլ որպես պետական–քաղաքական ռազմավարության հիմք: Այդ գաղափարի իրագործման մեջ իրենց ուրույն տեղն ունեն կրթությունը, գիտությունը, մշակույթը, և այս ոլորտներում ներդրված հստակ ռազմավարության միջոցով հաջորդ սերունդներին է փոխանցվում սեփական տեսլականը: Այդպես է վարվում Չինաստանը, որը մինչ օրս փայփայում է երազանք՝ ստեղծելու Մեծ Չինաստան՝ ինտեգրելով Թայվանը: Թուրքիան ունի իր երազանքը՝ ստեղծելու Մեծ Թուրանը: Ադրբեջանն ունի իր երազանքը՝ ստեղծելու Արևմտյան Ադրբեջան, որի իրագործմանը դեռ վաղուց տարվող գաղափարական գործընթացներն այսօր արդեն բացահայտ զարգանում և դրսևորվում են՝ պատմական նարատիվն ու երազանքը վերածելով քաղաքական նպատակադրումների և դրանցից բխող տեսանելի քայլերի: Ադրբեջանի պետական և ակադեմիական շրջանակներում «Արևմտյան Ադրբեջան» գաղափարը ներկայացվում է որպես պետական օրակարգի բաղադրիչ, որտեղ Հայաստանի Հանրապետության տարածքի որոշ հատվածներ ներկայացվում են որպես «պատմական հայրենիք»: Այդ մոտեցումն ուղեկցվում է գիտաժողովներով, հրապարակումներով և կրթական ծրագրերով, մի ողջ սերնդի պատրաստում են այդ մտածելակերպով և հոգեբանությամբ, շեշտում, որ կրթության և գիտության այսօրվա հիմնական ուղղություններից մեկը հենց Արևմտյան Ադրբեջան թեման է: Պետական մակարդակով հայտարարվում է, որ Արևմտյան Ադրբեջանի հարցն իրենց ազգային օրակարգի կարևոր ուղղություններից մեկն է, և Ադրբեջանը շարունակելու է իր ազգային շահից բխող այդ քաղաքականությունը:

Ի հակադրումն Ադրբեջանի բացահայտ զավթողական այդ ազգային քաղաքականության՝ մեր երկրում պետական մակարդակով որդեգրված է կեղծ ու պատրանքային խաղաղության օրակարգ, ոչ մի պարագայում հակամարտության չգնալու քաղաքականությունը: Ընդհուպ երբ անգամ ավերվում են հայկական պատմամշակութային ժառանգությունները Արցախում՝ հիմնավորելով, թե Ադրբեջանի սուվերեն տարածքն է, ինչ կուզի, այն էլ կանի, (երբ դրա իրավունքը պարզապես չունի) նույնպես արդարացվում է մերօրյա հակահայ իշխանությունների կողմից: Եվ ստրուկի այս պատվազուրկ կարգավիճակն ու հոգեբանությունն էլ երևի վերջինների պատկերացմամբ մեր ազգային շահն է, իսկ ցանկացած սեփական ազգային հարցի և իրավունքի արծարծում դիտվում է որպես սպառնալիք այդ կեղծ խաղաղությանը:

Բայց խաղաղությունը միակողմանի զիջումների գործընթաց չէ, այլ կողմերի՝ փոխադարձ վստահության և հարգանքի դրսևորում՝ միմյանց պետականության, ինքնիշխանության, ազգային ինքնության և պատմական հիշողության հարցերում: Ուստի այսօր ստեղծված իրավիճակը խաղաղություն կոչելը ոչ թե միամտություն է, այլ ուղիղ սպառնալիք մեր ազգային գոյությանը: Եվ այսօր ոչ միայն այս վտանգավոր խաղաղությունն են փորձում փաթաթել մեր վզին, այլև արգելում են մեզ՝ որպես ազգի, հիշել ու երազել, և հենց մեր այդ ազգային երազանքը դիտում են սպառնալիք, բայց որը մեր գոյության հիմքն է:

Այդպես չեն վարվում, սակայն, ազգերը, որոնք ունեն երազանք: Վերը նշեցինք չինացիների օրինակը, որոնք մեկ Մեծ Չինաստան ունենալու համար իրենց հասարակությանն ու սերունդներին դաստիարակում են այդ գաղափարախոսությամբ: Թուրքիան, Մեծ Թուրանը՝ իր վաղեմի երազանքը իրագործելու համար տարիներ շարունակ իր սերունդներին և հասարակությանը պատրաստում է այդ գաղափարախո-

սությամբ, վերահսկում բոլոր դասագրքերի բովանդակությունը, հատկապես պատմության վերաբերյալ ունի հստակ մշակած կրթական ռազմավարություն: Նույն կերպ է վարվում Ադրբեջանը՝ իր երազած Արևմտյան կամ Պատմական Ադրբեջան երազանքի համար և այդ «պատմական» բառն այնքան է շեշտում, որ այն արտառոց է հնչում նորածիլ և արհեստածին մի պետության համար: Իսկ մենք, որ մեր անունով կոչվող Հայկական լեռնաշխարհի բնիկներն ենք ու հազարավոր տարիների պատմություն ունենք, ոչ միայն չունենք մեր երազանքը, այլև զրկվում ենք այն ունենալու իրավունքից, որովհետև մեր երկրում մեկը պետական մակարդակով մատ է թափ տալիս ասելով՝ Ղարաբաղի հարցը փակված է, այդ հարցը բարձրացնողն ինձ հետ գործ կունենա: Այսինքն՝ հայ, մտքիդ ծայրով անգամ չանցկացնես, որ դու կարող ես երազանք ունենալ: Ու մենք, թերևս ոչ միայն երազանք չունենք, այլև հավաքականորեն գաղափարախոսություն էլ չունենք: Մենք ունենք մեր սերունդներին կրթելու, զիջելու, տալու, փոխանցելու գաղափարախոսություն, որի անունն է Խաղաղություն: Որովհետև այն ամենը, ինչ-որ հայրենասիրական ու ազգային է, կոչվում է ուռա-հայրենասիրություն հենց կրթության նախարար Ժաննա Անդրեասյանի կողմից: Ու մեզ մնում է երևի Հայաստանի դպրոցներում վերջերս մեծ տարածում գտած «Լա՛վ սովորիր, որ լավ ապրես» կոչ-ուղենիշը, թերևս որպես մեր գաղափարախոսության կարևոր հիմնասյուն: Այսօր այդ գաղափարախոսությամբ կրթում են սերունդներին: Նախկինում քարոզվում էր լավ սովորել, դառնալու համար պիտանի ու լավ մարդ-քաղաքացի առաջին հերթին երկրի համար, ներդրում ունենալ քո պետության ու հայրենիքի զարգացման գործում, հետո արդեն ավելի մեծ նպատակներ ու գաղափարներ ունենալ՝ մարդկության, աշխարհի հետ կապված: Այսօր դա չէ մեր երկրի կրթական ոլորտի գաղափարախոսությունը, որդեգրվել է նոր ռազմավարություն՝ ստամոքսի մակարդակի իջեցված «Լա՛վ սովորիր, որ լավ ապրես»-ը, որում կարևորվում է միայն ազգային ինքնությունն անտեսող անդեմ անհատի ես-ը, նրա լավ ապրելը, և ամեն բան ծառայեցվում ու տարվում է այդ ես-ի՝ որպես սպառողի ցանկությունների գոհացմանը, բնավ կարևոր չէ, թե որտեղ կապրես, քո ապրած տեղը Հայաստան կկոչվի, թե Արևմտյան Ադրբեջան, կամ էլ ինչ կարևոր է դու հայ կկոչվես, թե՞ ոչ: Կարևորը լավ ապրելն է: Այս պարագայում ավելորդ է խոսել ազգային երազանքից, ազգային նպատակներից, սերունդ աճեցնել այդ մտածողությամբ և հոգեբանությամբ: Մենք մեր սերունդներին դաստիարակում ենք զիջելու, հանձնելու, համակերպվելու պարտվողական հոգեբանությամբ, սերմանելով վախ ու հարմարվողականություն, ինչը հասարակությանը դիմադրողականությունից զրկելու և կառավարելի դարձնելու միջոց է: Պատմությունը բազմիցս ցույց է տվել, որ վախի վրա կառուցված հասարակությունները երկար ժամանակ չեն պահպանում իրենց ինքնությունը:

Գարեգին Նժդեհը գրել է. «Այն օրը, երբ հայը կվախենա մահից, օտարը կթագավորի մեր հայրենիքում»: Այս խոսքերը վերաբերում են ոչ միայն ռազմական իրավիճակին, այլ նաև ազգային կամքին, ինքնավստահությանը և պատասխանատվությանը: Եթե մենք չունենք մեր երազանքը, փոխարենը մեր երկրում ունենք թշնամու երազանքը իրագործողներ, որոնք կրթության ոլորտում կոչվում են առարկայական նոր չափորոշիչներով դասագրքերը ձևողներ և կարկատողներ, իսկ իշխանական ոլորտում դա արդեն մի ողջ քաղաքացիական կուսակցություն է, օրինիբուն լծված նրան, որ հայն ուրանա իր ինքնությունը, մոռանա իր պատմությունը: Թերևս դա է միակ ճանապարհը խոչընդոտելու, որ հայը երազանք ունենա, շեղվի միակ ուղուց, որով գնալով հայը կմնա ազգային ուրույն ինքնություն ունեցող էթնիկ միավոր, դադարի պահանջատերը լինելուց այն ամենի հարցում ինչն իրենն է:

Եվ մենք, որ Հայկական կոչվող լեռնաշխարհի հազարամյա տերերն ենք, մերը սուսուփուս տալիս ենք, երկրի ղեկավարի մակարդակով հայտարարում, թե չգիտենք, թե որն է զիջելու կարմիր գիծը՝ պատճառաբանելով՝ թույլ ենք, հնար չունենք, խաղաղություն ենք ուզում, վերածվելով Չարենցի ասած «անուղի ու անդեմ ժողովրդի» («Պատմության քառուղիներով»):

Բայց մենք ո՛չ թույլ ենք, ո՛չ անուղի և ո՛չ էլ անդեմ: Մենք պարզապես պիտի գիտակցենք, որ հազարամյա պատմություն ունեցող ժողովուրդ ենք, և այդ պատմությունը մեզ ոչ միայն հուշեր ու դասեր է տալիս, այլև իրավունք և, ամենակարևորը, պարտավորություն սերունդների առջև: Մենք ժառանգություն պիտի թողնենք սերունդներին, մենք պատասխանատու ենք նրանց առջև:

Ազգին կարելի է զրկել տարածքից, բայց եթե նա պահպանում է իր հիշողությունն ու երազանքը, նա շարունակում է ապրել: Իսկ եթե նրան զրկում են հիշողությունից և երազանքից, ապա, անգամ սեփական բնօրրանում առհավետ խաթարվում է նրա գոյությունը:

Ուստի այսօր, առավել քան երբևէ, անհրաժեշտ է պահպանել պատմական հիշողությունը, ամրացնել ազգային ինքնությունը և ձևավորել ապագայի այնպիսի երազանք, որը կծառայի ոչ միայն ներկային, այլև գալիք սերունդներին: Դա քաղաքական ընտրություն չէ. դա գոյության հրամայականն է:

Միացումից անկախացում: Ներքաղաքական խմորումները Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետությունում (1992-1993 թթ.)

Տարոն Վլադիկի Հակոբյան
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի աշխատակից, դասավանդում է ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայում

«Դրօշակի» 2026 թ. երկրորդ համարում «Միացումից անկախացում» խորագրի ներքո հրապարակել էինք պատմաբան Տարոն Հակոբյանի հոդվածաշարի առաջին հոդվածը՝ նվիրված Արցախյան շարժման 36-րդ տարեդարձին: Հոդվածաշարի առիթը, իհարկե, հայ ժողովրդի պատմության անքակտելի մասը դարձած Արցախյան սրբազան պայքարն է, պատերազմական դրամատիկ իրադարձությունների խորապարկերին անկախության ձեռքբերումն ու Հայոց Երկրորդ Հանրապետության կայացումը: Դյուրին ճանապարհ չի անցել այդ գործընթացը, երբ արտաքին մարտահրավերների կողքին ներարցախյան զարգացումները գտնվել են նաև Հայաստանի օրվա իշխանության քաղաքական ենթակայական հաշիվներով թելադրված ճնշման ներքո: Այնուամենայնիվ, հայության բոլոր հատվածներին միավորող միասնության հզոր գաղափարը այն ժամանակ հնարավորություն ընձեռեց անգամ ծանր կորուստների գնով հաղթահարելու Երկրորդ Հանրապետության պետականության կայացման ճանապարհին ընկած թե՛ արտաքին և թե՛ ներքին փորձությունները: «Դրօշակի» այս և հաջորդող համարներում կներկայացնենք պատմական իրողություններն ամբողջացնող հետաքրքրական այս հոդվածաշարի հերթական դրվագները՝ վստահ լինելով տվյալ նախաձեռնության արդիականության հարցում:

Խմբագրության կողմից

1992 թ. ապրիլի 14-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) առաջին գումարման Գերագույն խորհրդի (ԳԽ) նախագահ Արթուր Մկրտչյանի ողբերգական մահից հետո երկրում ստեղծված ներքաղաքական լուրջ ցնցումները չսասանեցին ԼՂ պետականության հիմքերը, ավելին, ներքաղաքական կայունության ապահովման գործում մեծ դեր խաղացին օրենսդիր մարմնի դրսևորած քաղաքական կամքը և պատասխանատվության զգացումը, որի վճռականության շնորհիվ հնարավոր եղավ հարթել ստեղծված իրավիճակը:

Մայիսյան հաղթանակներից հետո թվում էր, թե ԼՂՀ-ում հանդարտվել են ներքաղաքական հակասությունները, սակայն հունիսի 2-6-ը տեղի ունեցած ԼՂՀ ԳԽ առաջին նստաշրջանն ապացուցեց հակառակը: Նստաշրջանում ԼՂՀ ԳԽ նախագահի ընտրությունների ժամանակ իրենց նորից զգացնել տվեցին ներքին հակասությունները:

Նստաշրջանին մասնակցելու համար ԼՂՀ էին ժամանել Մեծ Բրիտանիայի լորդերի պալատի փոխխոսնակ բարոնուհի Քերոլայն Քոքսը, Հայաստանի Հանրապետության (ՀՀ) ԳԽ նախագահ Բաբկեն Արարքցյանը, ՀՀ հատուկ ծրագրերի վարչության պետ Վահան Շիրխանյանը, ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը, ՀՀ ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչներ, ՀՀ ԳԽ պատգամավորներ Կիմ Բալայանը,[1] Դավիթ Վարդանյանը և ուրիշներ: Նշենք մի ուշագրավ հանգամանք. ՀՀ-ից եկած պաշտոնական պատվիրակության՝ ԼՂՀ ԳԽ նախագահ ընտրելու վերաբերյալ պահանջն արդեն հայտնի էր պատգամավորներին: Նստաշրջանը վարում էր ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանը:

Մինչև ԳԽ նախագահի և նրա առաջին տեղակալի ընտրությունների անցկացումը, խոսքը տրվեց ՀՀ ներկայացուցիչներին: Այնուհետև ԳԽ նստաշրջանն աշխատանքը շարունակեց դռնփակ նիստով, որտեղ ելույթ ունեցան ՀՀ ԳԽ նախագահ Բաբկեն Արարքցյանը և ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը: Նրանք ՀՀ ղեկավարության տեսակետները հայտնեցին ԼՂՀ-ին առնչվող քաղաքական, տնտեսական, ռազմական և այլ հարցերի վերաբերյալ՝ միաժամանակ հաղորդելով ԼՂՀ ԳԽ նախագահի «բարեհաջող» ընտրությունից հետո ՀՀ-ից սպասվող ծրագրված օգնության մասին:

Պատգամավորների քվեարկությամբ ընդունվեց Արցախի պետականության խորհրդանիշներից մեկը՝

ԼՂՀ պետական դրոշը (կարմիր, կապույտ, նարնջագույն, որի աջ փոքրիկ հատվածը եռանկյունի սպիտակ գծով անջատված է դրոշի հիմնական մասից, ինչը խորհրդանշում էր թե՛ Արցախի օրվա կացությունը, թե՛ ապագայի ձգտումը):

Դրոշի հեղինակը սփյուռքահայ նկարիչ Վահե Ֆատտալն էր: Ինչպես ժամանակին ասել է ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանը՝ «Դրոշի նախագիծը հավանության է արժանացել ԼՂՀ ԳԽ նախագահ Արթուր Մկրտչյանի կողմից»:[2]

Հունիսի 3-ի առավոտյան նիստում խորհրդարանն անցավ օրակարգի չորրորդ հարցին՝ ԼՂՀ ԳԽ նախագահի ընտրություններին: Նախագահի թափուր պաշտոնի համար առաջադրվեցին Ռոբերտ Քոչարյանի և Գեորգի Պետրոսյանի թեկնածությունները: Պատգամավոր Հրանտ Խաչատրյանն առաջարկեց նախքան թեկնածուների նախընտրական ծրագրերը լսելը ստանալ ՀՀ ԳԽ պատվիրակության հավաստիացումն առ այն, որ ընտրության արդյունքները չեն անդրադառնա ՀՀ և ԼՂՀ փոխհարաբերությունների վրա: Նման հավաստիացումներ ստանալով ՀՀ ԳԽ նախագահ Բաբկեն Արարքցյանից, որը նաև ընդգծեց հարցի երկկողմանիությունը, խորհրդարանը թեկնածուներին հնարավորություն տվեց ներկայացնել իրենց ծրագրերը և պատասխանել հարցերին:[3]

Փակ գաղտնի քվեարկության առաջին փուլում ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանն իր մրցակցից 7 ձայն ավելի (30) ստացավ, սակայն դա բավական չէր ընտրվելու համար, քանի որ պահանջվում էր ստանալ ընտրող պատգամավորների երկու երրորդի (41) աջակցությունը:

Դարձյալ ԳԽ նախագահի թեկնածուներ առաջադրվեցին Գեորգի Պետրոսյանն ու Ռոբերտ Քոչարյանը, ինչպես նաև Լեոնարդ Պետրոսյանն ու Վագիֆ Գալստյանը: Սակայն վերջին երկուսը հանեցին իրենց թեկնածությունները: Քվեարկությունից առաջ պատգամավորներն իրենց կարծիքը հայտնեցին ստեղծված կացության և թեկնածուների մասին: Երկրորդ անգամ ելույթ ունենալով՝ ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը նորից պատգամավորների ուշադրությունը հրավիրեց անձամբ իր և ՀՀ իշխանությունների դիրքորոշման վրա: Քվեարկության երկրորդ փուլն ավարտվեց հետևյալ արդյունքներով. Գեորգի Պետրոսյանի օգտին՝ 26, Ռոբերտ Քոչարյանի օգտին՝ 27 ձայն: Քվեարկությունից անմիջապես հետո կրկին ելույթ ունեցավ ՀՀ ԳԽ նախագահ Բաբկեն Արարքցյանը՝ պաշտպանելով Վազգեն Սարգսյանի տեսակետը: Ապա հանդես եկան ՀՀ ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչները:

Հաջորդ օրը՝ հունիսի 4-ին, պատգամավորները նախ քննարկեցին ԼՂՀ պատվիրակության՝ ԵԱՀԽ նիստին մասնակցելու նպատակով Հռոմ մեկնելու հնարավորություններն ու նպատակահարմարությունը: Ելույթ ունեցող պատգամավորները քննադատության ենթարկեցին ՀՀ իշխանությունների արտաքին քաղաքականությունը՝ նրանց մեղադրելով վերջին ժամանակներում մի շարք փաստաթղթեր ստորագրելու համար, որոնցում ԼՂ-ն հանիրավի դիտվում էր Ադրբեջանի կազմում:

Մինչև ԼՂՀ ԳԽ նախագահի թեկնածուների առաջադրմանն անցնելը, խորհրդարանը որոշեց, որ յուրաքանչյուր թեկնածու կարող է քվեարկվել երե-

քից ոչ ավելի անգամ: Ապա վերստին առաջադրվեցին Ռոբերտ Քոչարյանի ու Գեորգի Պետրոսյանի թեկնածությունները՝ այս անգամ, սակայն, Շահեն Մեղրյանի, Վլադիկ Հակոբյանի և Բորիս Առուշանյանի թեկնածությունների «ընկերակցությամբ»: Վերջին երկուսն իսկույն հանեցին իրենց թեկնածությունները, ապա անսպասելիորեն ինքնաբացարկ հայտնեցին Գեորգի Պետրոսյանը և Ռոբերտ Քոչարյանը:

Թեկնածու Շահեն Մեղրյանը հանդես եկավ նախընտրական ծրագրով, պատասխանեց պատգամավորների հարցերին, որից հետո գաղտնի քվեարկության թերթիկ մտցվեց միայն Շահեն Մեղրյանի ազգանունը: Նրա օգտին քվեարկեց 33 պատգամավոր: Արդյունքում ԳԽ նախագահի պաշտոնը կրկին մնաց թափուր:

Մտքերի փոխանակությունից և դարձյալ համաձայնության չգալուց հետո որոշվեց նիստն անցկացնել դռնփակ: Փակ նիստում պատգամավորները պաշտպանեցին ԼՂՀ Նախարարների խորհրդի (ՆԽ) նախագահ Օլեգ Եսայանի առաջարկը՝ ստեղծված իրավիճակից դուրս գալու համար կազմավորել կողմերի ներկայացուցիչներից բաղկացած համաձայնեցնող հանձնաժողով: Բանակցությունների սեղանի շուրջ նստեցին Գեորգի Պետրոսյանը, Շահեն Մեղրյանը, Լևոն Մելիք-Շահնազարյանը, Վալերի Բալայանը՝ մի կողմից, և Ռոբերտ Քոչարյանը, Լեոնարդ Պետրոսյանը, Օլեգ Եսայանը, Սերժ Սարգսյանը՝ մյուս կողմից:[4]

Հունիսի 5-ի առավոտյան նիստը սկսելիս պատգամավորներն իմացան, որ բանակցություններն անպտուղ են անցել: Ինչպես հայտնի դարձավ, մի կողմը պաշտպանել է Շահեն Մեղրյանի թեկնածությունը, իսկ մյուսը կողմն առաջարկել է ԼՂՀ-ում մտցնել նախագահական կառավարում:[5] Այնուհետև Շահեն Մեղրյանը հանդես եկավ հայտարարությամբ, նշելով, որ ԳԽ նախագահի համար իր թեկնածության առաջադրումից հետո նստաշրջանի ընդմիջումների ընթացքում ետնաբեմում հնչել են տարբեր հայտարարություններ. իբր ԻՊՈՒ ստորաբաժանումները խանգարում են նստաշրջանի աշխատանքին, ինչպես նաև խոսակցություններ են եղել Շահումյանի շրջանի պատվիրակության հասցեին, թե ինչու ԼՂՀ ԳԽ նախագահը պիտի ընտրվի Շահումյանի շրջանից: Ի նշան վիրավորվածության՝ Շահումյանի շրջանի պատվիրակությունը հեռանում է դահլիճից:[6] Ստեղծվում է մի իրադրություն, որը կարող էր հանգեցնել ներքին ընդհարումների: Նշենք նաև, որ առաջարկություններ են եղել իշխանությունը տալ բանակին և ցրել խորհրդարանը:[7]

Պատգամավոր Վալերի Հայրիյանը կարդաց ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի (ԻՊՈՒ) հրամանատարական կազմի դիմումը խորհրդարանին: Որոշվեց ԼՂՀ ԻՊՈՒ հրամանատար Արկադի Տեր-Թադևոսյանին և Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգև սրբազան Մարտիրոսյանին հրա-

վիրել նստաշրջան: Ընդմիջումից հետո ելույթ ունեցավ ՀՀ հատուկ ծրագրերի վարչության պետ Վահան Շիրխանյանը: Նա իր ելույթով հասկացրեց, որ ՀՀ իշխանությունների հետ առճակատումը կարող է հանգեցնել բացասական հետևանքների: Այնուհետեւ ելույթ ունեցավ ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանը, նշելով, որ ինքն այժմ հանդես է գալիս որպես իր ժողովրդի ճակատագրով մտահոգված արցախցի և անհանգստացած է Վազգեն Սարգսյանի այն հայտարարությամբ, թե, իբր, Հայաստանը ներքաշվել է պատերազմի մեջ, և այդ ամենը կատարվել է Դաշնակցության մեղքով:

Ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին մի շարք պատգամավորներ, այդ թվում՝ ԻՊՈՒ հրամանատար Արկադի Տեր-Թադևոսյանը: Նա պատգամավորներին մասնավորապես հաղորդեց ԼՂՀ սահմանում ադրբեջանական ուժերի կուտակման մասին և առաջարկեց վերջ դնել երկպառակությանը:[8]

Ի վերջո, ձայների ճնշող մեծամասնությամբ որոշվեց ԳԽ նախագահի ընտրությունները հետաձգել մինչև հուլիսի վերջը՝ խորհրդարանի պատգամավորական թափուր տեղերի համար կրկնական ընտրությունների անցկացումից հետո:

Երեկոյան նիստում պատգամավորներն անցան «ԼՂՀ պետական անկախության հիմունքների մասին» ԼՂՀ սահմանադրական օրենքի քննարկմանը, ապա և ընդունեցին այն: Նիստի վերջում նրանք ձեռնամուխ եղան ԼՂՀ Սահմանադրության մշակման հանձնաժողովի ստեղծմանը:

Հունիսի 6-ին նստաշրջանն առաջին ընթերցմամբ ընդունեց զինապարտության և զինվորական հանցագործության համար քրեական պատասխանատվության մասին ԼՂՀ օրենքները, որոնք միտված էին հանրապետության ռազմաքաղաքական իրավիճակի կայունացմանը: Պատգամավորները չկարողացան որոշումներ կայացնել ևս մի շարք օրախնդիր հարցերի վերաբերյալ: Նստաշրջանն ընդհատվեց պատգամավորների անբավարար ներկայության պատճառով, քանի որ սահմանային շրջաններում վիճակը վատթարացել էր, և մի շարք պատգամավորներ, լինելով ԻՊՈՒ ստորաբաժանումների մարտիկներ ու հրամանատարներ, շտապ մեկնեցին ճակատային գիծ: Որոշվեց նստաշրջանի աշխատանքը շարունակել հունիսի 17-ին:

Այսպիսով, ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանը ցույց տվեց, որ, ինչպես արդեն նշել ենք, ԼՂՀ-ում ոչ միայն չէին մարել ներքաղաքական հակասությունները, այլև, կարելի է ասել, դրանք զարգանում էին արդեն կայծակնային արագությամբ:

Դրանում կարևոր դեր են խաղացել արտաքին ուժերը, որոնք ամեն գնով ձգտում էին իշխանափոխություն իրականացնել ԼՂՀ-ում:

Պատմագրության մեջ հանիրավի կերպով չի բարձրաձայնվում այն պատմական ճշմարտությունը, որ ԼՂՀ ԳԽ ընտրություններում հաղթանակեցին

և իշխանության եկան պաշտոնական Երևանի համար կատարելապես անցանկալի ուժեր, ինչը ՀՀ իշխանությունների, հատկապես նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի համար անսպասելի էր: Ամենայն հավանականությամբ, նա գտնում էր, որ Արցախը կարող է որոշակի քաղաքական ինքնուրույնություն ձեռք բերել և զատվել Հայաստանի ներքին կյանքից, իսկ արտաքին քաղաքական ասպարեզում իր պահանջները թելադրել, որպես անկախ երրորդ կողմ: Այսինքն՝ ՀՀ իշխանությունները կորցնում էին անչափ կարևոր խաղաքարտ, որն անհրաժեշտության դեպքում կարող էր ներքին կայունության գրավական լինել: ՀՀ նախագահը նաև երկյուղ ուներ, որ այդ խաղաքարտը կարող է օգտագործել ընդդիմությունը: Բացի այդ, պաշտոնական Երևանը կարող էր զրկվել հայադրբեջանական հակամարտության, ինչպես նաև Արցախյան շարժման մեջ առաջատարի դերից: ■

(Շարունակելի)

Հղումներ

1 Նստաշրջանի ժամանակ լուր տարածվեց ՀՀ ԳԽ պատգամավոր Կ. Բալայանի առեւանգման մասին, ինչի հետեւանքով քաղաքական մեծ աղմուկ բարձրացավ, և որոշ ժամանակ անց նա ազատ արձակվեց: Պատահարի հանգամանքները պարզելու համար ստեղծվեց պատգամավորական հանձնաժողով:

2 «Երկիր», 03.06.1992թ.:

3 «Արցախ», 08.06.1992թ.:

4 Տես Հակոբյան Տ., 2011, 95:

5 Տես ԱՀ պետարխիվ, Ֆոնդ 254, ցանկ 4, պահպանման միավոր 2, կապ 1, թերթ 98:

6 Տես նույն տեղում, թ. 95:

7 Տես նույն տեղում, թ. 86:

8 Տես նույն տեղում, թ. 94:

«Օղակ» գործողություն. արցախահայության բռնի տեղահանում և պետական ահաբեկչություն

Մարի Հովհաննիսյան
Քաղաքագիտության մագիստրոս

Արցախյան հակամարտության պատմության մեջ «Օղակ» գործողությունը (ռուսերեն՝ Операция «Кольцо») պետական ահաբեկչության, էթնիկ զտումների և միջազգային հումանիտար իրավունքի զանգվածային խախտումների դասական օրինակ է: 1991 թվականի գարնանն ու ամռանն իրականացված այս ռազմական գործողությունը, որը պաշտոնապես ներկայացվում էր որպես «անձնագրային ռեժիմի ստուգում», իրականում նպատակ ուներ վերջնականապես լուծելու Արցախի հարցը՝ բնիկ հայ բնակչությանը բռնի տեղահանելու և տարածաշրջանի ժողովրդագրական պատկերն արմատապես փոխելու միջոցով:*

Սույն հոդվածի նպատակն է համապարփակ վերլուծության ենթարկել «Օղակ» գործողության պատմաքաղաքական նախադրյալները, իրագործման մեխանիզմները, ներգրավված դերակատարների պատասխանատվությունը և հումանիտար հետևանքները: Հոդվածում հատուկ ուշադրություն է դարձվում իրավական և քաղաքական որակումներին՝ միջազգային իրավունքի և արդի գիտական հայեցակարգերի համատեքստում համապատասխան գնահատական տալու նպատակով:

Պատմական և աշխարհաքաղաքական համատեքստը

«Օղակ» գործողությունը պետք է դիտարկել և քննել Խորհրդային Միության փլուզման և դրան նախորդած էթնիկ լարվածությունների համատեքստում: Հակամարտության արմատները հասնում են 1921 թ., երբ ՌԿ(բ)Կ Կովկասյան Բյուրոյի որոշմամբ Լեռնային Ղարաբաղը կցվեց Ադրբեջանական ԽՍՀ-ին:[1] Տասնամյակներ շարունակ ադրբեջանական իշխանությունները վարել են հայկական ինքնության ճնշման և տարածաշրջանի «ադրբեջանականացման» հետևողական քաղաքականություն, ինչը 1988 թվականին հանգեցրեց Արցախյան շարժման վերածննդին:[2]

1991 թվականին իրավիճակը ողջ ԽՍՀՄ-ում ճգնաժամային էր: ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունները՝ Միխայիլ Գորբաչովի գլխավորությամբ, փորձում էին պահպանել միասնական պետությունը նոր Միութենական պայմանագրի միջոցով: Հայաստանի Հանրապետությունը, որդեգրելով անկախության ուղին, բոյկոտեց 1991 թվականի մարտի 17-ի համամիութենական հանրաքվեն:[3] Ի հակադրություն Հայաստանի դիրքորոշման, Ադրբեջանի ղեկավարությունը՝ Այազ Մութալիբովի գլխավորությամբ, հավատարմություն հայտնեց Մոսկվային՝ դրա դիմաց ստանալով Խորհրդային Միության զինված ուժերի աջակցությունը հայկական դիմադրությունը ճնշելու հարցում:[4] Այսպիսով, «Օղակ» գործողությունը դարձավ պատժիչ միջոցառում ընդդեմ Հայաստանի անկախության ձգտումների և Արցախի ինքնորոշման պայքարի:

Գործողության ծրագրումը և հիմնական դերակատարները

«Օղակ» գործողության գաղափարախոսության մշակումն ու դրա իրագործման ծրագրի կազմումը սկսվել էր դեռևս 1989-1990 թվականներին: Ինչպես վկայում են արխիվային նյութերը և հետագայում արված հարցազրույցները, Ադրբեջանի Կոմկուսի կենտկոմի երկրորդ քարտուղար Վիկտոր Պոլյանիչկոն այս ծրագրի գլխավոր ճարտարապետներից էր: Պոլյանիչկոն նմանատիպ գործողություններ իրագործելու փորձ ձեռք էր բերել Աֆղանստանում: Նա էր կազմել հայաբնակ գյուղերի ամբողջական հայաթափման հրեշավոր ծրագիրը:[5]

Գործողությունն իրականացվում էր մի քանի ուժային կառույցների սերտ համագործակցությամբ: Հիմնական հարվածային ուժն ապահովում էին ԽՍՀՄ Պաշտպանության նախարարության զորքերը՝ մասնավորապես Գանձակում (Կիրովաբադ) տեղակայված 4-րդ բանակը և դրա կազմում գտնվող 23-րդ գվարդիական մոտոհրաձգային դիվիզիան: Գյուղերի անմիջական շրջափակումն ու «օղակի» ստեղծումն

իրականացնում էին ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերը: Իսկ բնակավայրեր ներխուժելու, բռնություններ, թալան և բնակչության բռնի տեղահանում իրականացնելու գործառույթը վստահված էր «սև բերետավորներ» անվամբ հայտնի Ադրբեջանական ԽՍՀ ՆԳՆ հատուկ նշանակության միլիցիայի ջոկատներին (ՕՄՕՆ):[6]

Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովը խոստովանել է, որ դեռևս 1989 թվականին նման գործողությունների ծրագրեր են քննարկվել Մոսկվայի հետ:[7] Մոսկվան այս գործողությամբ փորձում էր քաղաքական ճնշում գործադրել հայ բնակչության վրա և ստիպել հրաժարվելու անկախության գաղափարից, մինչդեռ Բաքուն դիտարկում էր այն որպես տարածաշրջանի վերջնական հայաթափման հնարավորություն:[8]

Գործողության իրականացման մեխանիզմը և փուլերը

«Օղակ» գործողությունն առանձնանում էր ռազմական հստակ մարտավարությամբ, որը կրկնվում էր բնակավայրից բնակավայր: Սկզբնական փուլում ԽՍՀՄ ներքին զորքերը և խորհրդային բանակի ստորաբաժանումները՝ օգտագործելով զրահատեխնիկա (S-72 տանկեր, ՀՄՄ-ներ) և մարտական ուղղաթիռներ (ՄԻ-24), շրջափակում էին հայկական գյուղերը՝ կտրելով հաղորդակցության բոլոր ուղիները, հեռախոսակապը և էլեկտրաէներգիան:[9]

Երբ գյուղը հայտնվում էր լիակատար մեկուսացման մեջ, բարձրախոսներով հայտարարվում էր «անձնագրային ռեժիմի» ստուգման մասին: Գյուղացիներից պահանջում էին դուրս գալ տներից և հավաքվել կենտրոնական հրապարակում: Սա ծառայում էր որպես իրավական քողարկում լայնամասշտաբ բռնությունների համար: Այնուհետև գյուղ էին մտնում ադրբեջանական ՕՄՕՆ-ի ջոկատները և բնակարանների «զննության» անվան տակ թալանում, սպանում, խոշտանգում հայությանը:

Գործողությունը 1991 թվականի ապրիլի 30-ին սկսվեց Գետաշեն և Մարտունաշեն գյուղերի վրա հարձակմամբ:[10] Այս բնակավայրերը, գտնվելով ԼՂԻՄ սահմաններից դուրս, ունեին ռազմավարական մեծ նշանակություն: Գետաշենի պաշտպանությունը ղեկավարում էր Թաթուլ Կրպեյանը, իսկ Մարտունաշենինը՝ Սիմոն Աչիքգյոզյանը: Հարձակումը սկսվեց վաղ առավոտյան՝ զանգվածային հրետակոծությամբ: Չնայած խորհրդային բանակի տրամադրած ահռելի ուժային առավելությանը՝ հայ կամավորները ցույց տվեցին կատաղի դիմադրություն: Թաթուլ Կրպեյանը, փորձելով կանխել խաղաղ բնակչության կոտորածը, գերի վերցրեց խորհրդային բանակի մի քանի սպաների, այդ թվում՝ գնդապետ Մաշկովին, օգտագործելով նրանց որպես կենդանի վահան բանակցությունների համար: Այնուամենայնիվ, անհավասար պայքարում Թաթուլ Կրպեյանը և Սիմոն Աչիքգյոզյանը հերոսաբար զոհվեցին:[11]

Գյուղ ներխուժած ՕՄՕՆ-ականները դրսևորեցին ծայրահեղ դաժանություն: «Մեմորիալ» կազմակերպության տվյալներով՝ սպանվեցին տասնյակ մարդիկ, հիմնականում տարեցներ, ովքեր չէին կարողացել լքել տները: Բնակիչներին ուժով նստեցնում էին ուղղաթիռներ և տեղափոխում Ստեփանակերտ կամ Հայաստան՝ ստիպելով նախապես ստորագրել «կամավոր» հեռանալու մասին փաստաթղթեր:[12]

Գետաշենի և Մարտունաշենի անկումով սկզբնավորված «Օղակ» գործողության աշխարհագրությունն արագորեն ընդլայնվեց՝ ընդգրկելով Հյուսիսային Արցախի, Լեռնային Ղարաբաղի և հարակից շրջանների այլ հայաբնակ վայրեր ևս: Շահումյանի շրջանի այս առաջնագծային բնակավայրերի ամբողջական տեղահանումից հետո (ապրիլի 30 - մայիսի 8), արդեն մայիսի կեսերին բռնաճնշումների հաջորդ թիրախը դարձավ Հադրութի շրջանը, որտեղ մայիսի 13-ից 16-ն ընկած ժամանակահատվածում խորհրդային զորքերի և ադրբեջանական ՕՄՕՆ-ի համատեղ գործողություններով իրականացվեց մի շարք հայկական գյուղերի բնակչության բռնի տեղահանությունը:[13]

1992 թվականի հունիսի 12-ին ադրբեջանական զինված ստորաբաժանումները, օգտագործելով Գանձակում տեղակայված խորհրդային նախկին 4-րդ բանակի զգալի ռազմական ներուժն ու սպառազինությունը, լայնածավալ հարձակողական գործողություն ծավալեցին Լեռնային Ղարաբաղի հյուսիս-արևելյան, արևելյան և հարավ-արևելյան սահմանագծի ողջ երկայնքով՝ Շահումյանից մինչև Հադրութ: Ռազմական գործողությունների կիրառմամբ ադրբեջանական կողմը բռնազավթել է ամբողջ Շահումյանի շրջանը, Մարտակերտի շրջանի մեծ մասը, ինչպես նաև Ասկերանի շրջանի մի շարք գյուղեր:[14]

Այսպիսով, շուրջ երկու ամիս տևած «Օղակ» գործողության հետևանքով ընդհանուր առմամբ հայաթափվեց ավելի քան 24 գյուղ: Բռնի տեղահանված և սեփական հայրենիքից արտաքսված խաղաղ հայ բնակչության թիվը, ըստ պատմագիտական և իրավապաշտպան աղբյուրների համադրված տվյալների, կազմեց 10.000 մարդ:[15]

«Օղակ» գործողությունն ուղեկցվել է մարդու իրավունքների համակարգված և զանգվածային խախտումներով, որոնք արձանագրվել են ինչպես տեղական, այնպես էլ միջազգային իրավապաշտպան կառույցների, մասնավորապես՝ Helsinki Watch (ներկայումս՝ Human Rights Watch) կազմակերպության զեկույցներում: Գործողության ընթացքում իրականացված բռնությունները ներառում էին արտադատական սպանություններ, ֆիզիկական խոշտանգումներ և անձնագրային ռեժիմի ստուգման պատրվակով խաղաղ բնակչության, այդ թվում՝ կանանց և երեխաների նկատմամբ կիրառված ուժային հարկադրանք, ինչի հետևանքով սպանվեց շուրջ 100 հայ խաղաղ բնակիչ:[16]

Արձանագրվել են նաև մարդկանց ողջ-ողջ այրելու և մարմնական ծանր խեղումների ենթարկելու առանձին փաստեր:

Բնակչության ահաբեկման և հայկական ինքնապաշտպանական ջոկատների վրա լրացուցիչ քաղաքական ու հոգեբանական ճնշում գործադրելու նպատակով լայնորեն կիրառվել է պատանդառության մարտավարությունը: «Օղակ» գործողության ողջ ընթացքում պատանդ է վերցվել շուրջ 700 հայ: Նրանց զգալի մասը տեղափոխվել է Գանձակի քննչական մեկուսարան և բանտեր, որտեղ ձերբակալվածները ենթարկվել են համակարգված խոշտանգումների ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի:[17]

Մարդկային կորուստներին զուգահեռ, գործողությունն ուներ ընդգծված տնտեսական բաղադրիչ, որն արտահայտվում էր խաղաղ բնակչության գույքի համատարած կողոպուտով ու ոչնչացմամբ: Բնակչության բռնի տեղահանումից անմիջապես հետո ադրբեջանական ՕՄՕՆ-ը և տեղի ադրբեջանցի բնակիչները հրկիզում էին հայերի տները, թալանում գյուղտեխնիկան, յուրացնում անասունը և միտումնավոր ոչնչացնում այն ամենը, ինչը հնարավոր չէր կողոպտել:[18] Գույքի և կենսական ենթակառուցվածքների այսօրինակ կազմակերպված ոչնչացումն ուներ հստակ ռազմավարական նպատակ՝ ամբողջությամբ բացառել հայերի հնարավոր վերադարձը հայրենի օջախներ:

Համաշխարհային մամուլի արձագանքը

Չնայած խորհրդային տեղեկատվական շրջափակմանը՝ «Օղակ» գործողության մասին տեղեկությունները ներթափանցեցին միջազգային լրահոս: Արևմտյան մի շարք լրատվամիջոցներ տեղի ունեցածը բնութագրում էին որպես էթնիկ զտում և պետական մակարդակով կազմակերպված ահաբեկչություն:

Ամերիկյան և բրիտանական խոշորագույն լրատվական գործակալություններն ու հեռուստառադիոընկերությունները, մասնավորապես՝ Associated Press-ը, United Press International-ը, Reuters-ը, BBC-ն, ինչպես նաև CNN հեռուստաընկերությունը (որը 1991 թ. ապրիլի 30-ին կեսժամանոց հատուկ թողարկում հեռարձակեց Գետաշենի դեպքերի վերաբերյալ), ռուսերենով և անգլերենով պարբերական տեղեկատվություն էին հաղորդում Արցախում և Շահումյանում տեղի ունեցող բռնագաղթի մասին:[19]

Միջազգային մամուլի վերլուծություններում հստակորեն մատնանշվում էր Մոսկվայի կողմնակալ դիրքորոշումը. The Washington Post պարբերականում Մայքլ Դոբսն արձանագրում էր, որ ռազմական գործողությունները ծավալվել են այն բանից հետո, երբ տանկերով ու զրահամեքենաներով զինված խորհրդային ՆԳՆ զորքերը ադրբեջանական ՕՄՕՆ-ի հետ համատեղ շարժվել են հայաբնակ գյուղերի վրա՝ փորձելով նախագահ Մ. Գորբաչովի գլխավորությամբ Հայաստանը ներքաշել պատերազմի մեջ: Իր հերթին, The Washington Times-ը շեշտում էր, որ ԽՍՀՄ նախագահը, ՊԱԿ-ը և ՆԳՆ-ն մեղադրվում են պետական ահաբեկչություն թույլ տալու մեջ, իսկ The Los Angeles Times-ն արձանագրում էր, որ «Անկախության ուղի բռնելու համար Հայաստանը պատժվեց Խորհրդային Միության իշխանությունների կողմից»:[20]

Իրավական գնահատական. էթնիկ զտո՞ւմ, թե՞ ցեղասպանություն

«Օղակ» գործողության իրավական որակումն առանցքային է պատմական արդարության վերականգնման համար: «Օղակ» գործողության ընթացքում իրագործված արարքները, արդի գիտական և միջազգային-իրավական վերլուծություններում, դասակարգվում են երկու հիմնական հասկացությունների շրջանակներում:

Միջազգային իրավունքի տեսանկյունից «Օղակ» գործողությունն իրագործման մեթոդաբանությամբ և նպատակադրմամբ դասական էթնիկ զտում է: Ըստ ՄԱԿ-ի սահմանման՝ այս երևույթը բնորոշվում է որպես մի էթնիկ խմբի կողմից մյուսին որոշակի տարածքից բռնի ուժով հեռացնելու նպատակաուղղված քաղաքականություն:[21] Գործողության ըն-

թացքում արձանագրված և համակարգված բնույթ կրող այնպիսի հանցագործությունները, ինչպիսիք են արտադատական սպանությունները, պատանդառությունը, ֆիզիկական խոշտանգումներն ու խաղաղ բնակչության գույքի միտումնավոր ոչնչացումը, միջազգային պրակտիկայում դիտարկվում են որպես էթնիկ զտումների իրագործման բազային գործիքակազմ:

Միևնույն ժամանակ, համաձայն 1948 թվականի «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի II հոդվածի՝ ցեղասպանություն է համարվում որոշակի ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբի անդամների սպանությունը կամ նրանց համար կանխամտածված այնպիսի կենսապայմանների ստեղծումը, որոնք միտված են այդ խմբի լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը:[22] Այս համատեքստում, Հյուսիսային Արցախի հայաբնակ գյուղերում իրականացված կազմակերպված կոտորածները, բնակչության ամբողջական բռնի տեղահանումն ու կենսական միջավայրի հետևողական ոչնչացումը լիովին համապատասխանում են ցեղասպանության հանցակազմի իրավական հատկանիշներին:

Հատկանշական է, որ միջազգային կառույցները ոչ միայն ժամանակին չտվեցին «Օղակ» գործողության պատշաճ իրավաքաղաքական գնահատական, այլև տասնամյակներ շարունակ դրա կազմակերպիչներն ու անմիջական իրագործողներն այդպես էլ չենթարկվեցին քրեաիրավական պատասխանատվության: Միջազգային իրավունքի տեսանկյունից այս հանցագործության համար պատասխանատվությունը բաշխվում է երկու հիմնական՝ պետական[23] և անհատական քրեական մակարդակներում:

Պետական պատասխանատվության տիրույթում առաջնային սուբյեկտ է Ադրբեջանի Հանրապետությունը, որը, որպես Ադրբեջանական ԽՍՀ իրավահաջորդ, կրում է ուղղակի պատասխանատվություն իր վարչական սահմաններում իրականացված էթնիկ զտումների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների և բռնի տեղահանությունների համար: Նույն տրամաբանությամբ, իրավական պատասխանատվության համապարտ բաժին է կրում նաև Ռուսաստանի Դաշնությունը՝ որպես ԽՍՀՄ միջազգային-իրավական իրավահաջորդ և շարունակող պետություն, քանի որ խորհրդային կենտրոնական իշխանության վերահսկողության տակ գտնվող կանոնավոր զորքերն ու ՆԳՆ ստորաբաժանումները գործուն և առանցքային աջակցություն են ցուցաբերել այդ հանցագործությունների իրագործմանը:

Պետական պատասխանատվությանը զուգահեռ ժամանակակից իրավագիտության մեջ գործում է նաև անհատական քրեական պատասխանատվության սկզբունքը:[24] Այս համատեքստում, Ադրբեջանի նախկին նախագահ Այազ Մութալիբովի, Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի երկրորդ քարտուղար Վիկտոր Պոլյանիչկոյի, ինչպես նաև գործողությանը մասնակից խորհրդային և ադրբեջանական բարձրաստիճան

զինվորականների ու հրամանատարների նպատակաուղղված գործողությունները, ըստ միջազգային քրեական իրավունքի չափանիշների, բնորոշվում են որպես պատերազմական հանցագործություններ և մարդկության դեմ ուղղված արարքներ, որոնք չունեն վաղեմության ժամկետ:

Եզրակացություն

«Օղակ» գործողությունը դարձավ այն «կարմիր գիծը», որից հետո Արցախյան հակամարտությունն անդառնալիորեն անցավ լայնամասշտաբ պատերազմական փուլի:

Հայկական կողմի համար սա դաս եղավ, որ միայն սեփական զինված ուժերի ստեղծումը կարող է երաշխավորել բնակչության ֆիզիկական անվտանգությունը: Սա խթանեց Հայաստանի Պաշտպանության նախարարության ձևավորումը 1992 թվականին և կամավորական ջոկատների միավորումը կանոնավոր բանակի կազմում:

«Օղակ» գործողությունը սոսկ տեղային ռազմական իրադարձություն չէր, այլ պետականորեն ծրագրված էթնիկ զտման քաղաքականություն, որի հեռահար նպատակն Արցախում հայկական գործոնի լիակատար վերացումն էր: Մայրամուտին գտնվող խորհրդային կայսրության իրական դեմքը բացահայտած այս իրադարձությունների իրավական գնահատականը պետք է լինի անդառնալի. դրանք մարդկության դեմ ուղղված հանցագործություններ են, որոնք չունեն վաղեմության ժամկետ: 1991 թվականի այս դասերն արդիական են նաև այսօր, քանի որ միջազգային հանրության այնժամանակյա լռությունն ու անպատժելիության նախադեպը ճանապարհ հարթեցին Ադրբեջանի հետագա ագրեսիաների համար՝ վկայելով, որ առանց անցյալի հանցագործությունների իրավական ճանաչման հնարավոր չէ կառուցել կայուն և արդար տարածաշրջանային ապագա:

Այս առումով, 1991 թվականի և 2023 թվականի պատմական ողբերգությունների միջև առկա է բացահայտ պատճառահետևանքային կապ, որի հիմքում

ընկած է հենց անպատժելիության սինդրոմը: 1991-ին իրականացված պետական ահաբեկչությունն ու էթնիկ զտումները այդպես էլ չարժանացան պատշաճ միջազգային արձագանքի, ինչը կանաչ լույս վառեց Բաքվի հաջորդող ռազմական նկրտումների համար: Սրա հետևանքով 32 տարի անց նույնությամբ կրկնվեց միևնույն մեթոդաբանությունը. այն սցենարը, որն Ադրբեջանը փորձարկեց «Օղակ» գործողության ընթացքում՝ ներառելով բնակավայրերի լիակատար շրջափակումը, հումանիտար ճնշումը, հոգեբանական տեռորը, ավելի մեծ ծավալով արտապատկերվեց 2022-2023 թվականներին՝ Արցախի 10-ամյա շրջափակման, Բերձորի միջանցքի արգելափակման և 2023 թ. սեպտեմբերի 19-ի ռազմական ագրեսիայի ժամանակ:

Արձանագրված փաստերը վերահաստատում են Ադրբեջանի որդեգրած ռազմավարական նպատակների նույնականությունը, այն է՝ հայության նկատմամբ ցեղասպանական քաղաքականության հետևողական իրագործումը: Եթե 1991 թվականին «Օղակ» գործողությունը Արցախի լայնածավալ էթնիկ զտման մեկնարկային փուլն էր, ապա 2023 թվականին Ադրբեջանի պետական քաղաքականությամբ ավարտին հասցվեց այդ ցեղասպանական ծրագիրը՝ բնօրրանից բռնի տեղահանելով ընիկ հայ ժողովրդին և ամբողջապես հայաթափելով Արցախը: Ուստի, պատմագիտական լիակատար հիմքերով կարող ենք պնդել, որ «Օղակ» գործողությունն Արցախի ամբողջական բռնազավթման և հայաթափման փորձնական տարբերակն էր՝ յուրօրինակ մի մեթոդաբանական լաբորատորիա, որտեղ մշակված և փորձարկված գործիքակազմը, միջազգային հանրության անտարբերության պայմաններում, Ադրբեջանի կողմից հաջողությամբ և ամբողջ ծավալով կիրառվեց 2023 թվականին: ■

Հղումներ

* Տես Աշոտ Մելքոնյան (խմբ.), Հայոց պատմություն, հդ. IV, գիրք 2-րդ (Ժամանակակից շրջան) (Երևան: «Զանգակ» հրատարակչություն, 2016), էջ 442–445; Ղարաբաղյան հիմնախնդիր. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու (1988–2001 թթ.) (Երևան: ՀՀ ԱԳՆ, 2002), էջ 84–89: Հմմտ. Human Rights Watch / Helsinki Watch, Bloodshed in the Caucasus: Escalation of the Conflict in Nagorno Karabakh (New York: Human Rights Watch, 1992), pp. 9–11; Правозащитный центр «Мемориал», Нарушения прав человека в ходе проведения операции “Кольцо” в связи с конфликтом в Нагорном Карабахе (апрель–июль 1991 г.) (Москва: Мемориал, 1991), с. 12–15; Thomas de Waal, Black Garden: Armenia and Azerbaijan Through Peace and War (New York: New York University Press, 2003), pp. 114–117.

1 ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի որոշման տեքստի և պատմական համատեքստի համար տես Արցախի պատմությունը. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու (Երևան: ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2015), էջ 214: Հմմտ. Gérard Chaliand, The Karabagh Crisis: Context and Factors, in: Minorities in the Age of Nation-States (London: Pluto Press, 1989), pp. 54–57.

2 Լենդրուշ Խուրշուդյան, Ղարաբաղյան հիմնախնդիրը (պատմական ակնարկ) (Երևան: ԵՊՀ, 1999), էջ 48: ԼՂԻՄ հայության տնտեսական ու ժողովրդագրական ճնշումների, այդ թվում՝ տարածաշրջանի ժողովրդագրությունը փոխելու վերաբերյալ Հեյդար Ալիևի բացահայտ խոստովանությունների մասին տես De Waal, Black Garden, pp. 138–139.

3 ՀՀ Գերագույն խորհրդի 1991 թ. հունվարի 30-ի և մարտի 1-ի որոշումները համամիութենական հանրաքվեին չմասնակցելու և սեպտեմբերի 21-ին ՀՀ անկախության հանրաքվե անցկացնելու մասին տես Ղարաբաղյան հիմնախնդիր. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու (1988–2001 թթ.) (Երևան: ՀՀ ԱԳՆ, 2002), էջ 78–81: Պատմաքաղաքական համատեքստի համար տես նաև Աշոտ Մելքոնյան (խմբ.), Հայոց պատմություն, հդ. IV, գիրք 2-րդ (Երևան: «Զանգակ», 2016), էջ 440:

4 ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների և Ադրբեջանի ղեկավարության քաղաքական փոխհամաձայնության և դրա հետևանքով խորհրդային բանակի ու ներքին զորքերի ներգրավման մասին տես Правозащитный центр «Мемориал», Нарушения прав человека в ходе проведения операции «Кольцо»..., с. 6–8: Հմմտ. Svante E. Cornell, Small Nations and Great Powers: A Study of Ethnopolitical Conflict in the Caucasus (London: Routledge, 2001), p. 78; De Waal, Black Garden, p. 114.

5 Վ. Պոլյանիչկոյի կողմից ԼՂԻՄ կազմկոմիտեի միջոցով 1989–1990 թթ. հայաթափման ծրագրերի նախապատրաստման և նրա «աֆղանական փորձի» կիրառման մասին մանրամասն տես De Waal, Black Garden, pp. 104–106: Տես նաև ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների վկայություններն ու զեկույցները՝ Информационный бюллетень Правозащитного центра «Мемориал», № 3, 1991, с. 9.

6 Բարսեղյան-Կրպեյան Ի., «Թաթուլ Կրպեյան. Հյուսիսային Արցախի Գետաշենի ենթաշրջանի ինքնապաշտպանությունը», Երևան, 2016, էջ 125–126:

7 De Waal, Black Garden, p. 114:

8 Правозащитный центр «Мемориал», Нарушения прав человека в ходе проведения операции «Кольцо»..., с. 4–6; De Waal, Black Garden, pp. 115–116; Cornell, Small Nations and Great Powers, p. 78; Հայոց պատմություն, հդ. IV, գիրք 2-րդ, էջ 441–442:

9 Բալայան Վ., Արցախի պատմությունը. Հնադարից մինչև մեր օրեր, Երևան, 2011, էջ 270:

10 Այս մասին առավել մանրամասն տես հեղինակի՝ ««Օղակ» գործողության նախերգանքը. Արցախի հյուսիսային դարպասի՝ Գետաշենի և Մարտունաշենի անկումը» հոդվածում, Դրօշակ, 2026, թիվ 5, էջ 33-37:

11 Բարսեղյան-Կրպեյան Ի., «Թաթուլ Կրպեյան...», էջ 85-125:

12 Правозащитный центр «Мемориал», Нарушения прав человека в ходе проведения операции «Кольцо» в ЛНՂՀ (апрель-май 1991 г.), Москва, 1991, с. 14–16, 21–23.

13 Բալայան Վ., Արցախի պատմությունը., էջ 271:

14 Նշված աշխ., էջ 273:

15 Правозащитный центр «Мемориал», նշվ. աշխ., էջ 4, 24:

16 https://www.hrw.org/report/1992/09/01/bloodshed-caucasus/escalation-armed-conflict-nagorno-karabakh (հասանելիության ամսաթիվը՝ 10.06.2026 թ.):

17 Правозащитный центр «Мемориал», նշվ. աշխ., էջ 21-25, 29-31:

18 Բարսեղյան-Կրպեյան Ի., «Թաթուլ Կրպեյան...», էջ 225:

19 Նշված աշխ., էջ 212:

20 “The Washington Post”, Dobbs Michael. “Armenia-Azerbaijan clash leaves at least 25 dead”, May 2, 1991.

21 https://www.un.org/en/genocide-prevention/definition (հասանելիության ամսաթիվը՝ 12.06.2026 թ.):

22 https://www.un.org/en/genocide-prevention/definition (հասանելիության ամսաթիվը՝ 11.06.2026 թ.):

23 https://legal.un.org/ilc/texts/instruments/english/draft_articles/9_6_2001.pdf (հասանելիության ամսաթիվը՝ 20.06.2026 թ.):

24 https://legal.un.org/ilc/texts/instruments/english/draft_articles/7_4_1996.pdf (հասանելիության ամսաթիվը՝ 20.06.2026 թ.):

Տարագիրների հանդեպ քաղաքականությունը Հայաստանի Առաջին հանրապետությունում
(ըստ Կ.Պոլսի «Ճակատամարտ» օրաթերթի հրապարակումների)

Մարիամ Հովսեփյան
ԳԱԱ Պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու

«Ճակատամարտ» օրաթերթը հրատարակվել է 1918-1924 թթ. Օսմանյան Թուրքիայի մայրաքաղաք Կ.Պոլսում: Այն ունեցել է բարձր վարկանիշ: Պարբերականի հրապարակումների օգնությամբ կաշխատենք ներկայացնել Հայաստանի Առաջին հանրապետության կողմից արևմտահայ տարագիրների և որբերի համար իրականացվող ծրագրերը, այդ ոլորտում թերթի բարձրացրած առաջնահերթ կարևորության հիմնախնդիրները և դրանց լուծման նպատակով խմբագրակազմի առաջարկած տարբերակներն ու եղանակները: Պետք է փաստել, որ «Ճակատամարտը» ՀՅԴ ոչ պաշտոնական օրգանն էր ու համարվում էր այդ կուսակցության Արևմտյան բյուրոյի 1909-1915 թթ. պաշտոնաթերթ «Ազատամարտի» իրավահաջորդը:[1] Այն «Ազատամարտի» նման կարողացել է վեր կանգնել նեղ կուսակցականությունից՝ դառնալով ժողովրդական կամ հանրային սիրված ու փնտրված պարբերական: Այստեղ արծարծվում էին տարբեր տեսակետներ մտահոգիչ հիմնախնդիրների վերաբերյալ: Թուրքական իշխանությունների գրաքննության պայմաններում անգամ թերթի լրագրողներն ու թղթակիցները, ի պատիվ իրենց, փորձել են հնարավորինս պահպանել ազատ խոսքի իրավունքը:

1918 թվականի հոկտեմբերի 30-ին Մուդրոսում Անտանտի և թուրքական իշխանությունների միջև կնքված զինադադարի պայմանագիրը[2] հնարավոր դարձրեց թուրքերի գերեվարած և նրանց կողմից բռնի կերպով տեղահանված հայերի վերադարձը Կ. Պոլիս և իրենց նախկին բնակավայրերը:[3] Այդ փաստաթուղթն Առաջին աշխարհամարտում պարտություն կրած Թուրքիայում բնակվող ազգություններին տալիս էր խոսքի և հասարակական գործունեության ազատություն: Օգտվելով երկրում ստեղծված հանգամանքներից՝ արևմտահայ հայտնի հրապարակախոս, «Ազատամարտի» պատասխանատու խմբագիրներից Հակոբ Սիրունին (Ճոլոյանը) և նրա գաղափարակից ընկերները որոշել էին հրատարակել «Ճակատամարտ» օրաթերթը:[4] «Ճակատամարտը» 1918-1920 թթ. գրեթե բոլոր համարներում անդրադարձել էր հայ գաղթականների ունեզրկման և որբերի ուծացման խնդիրներին «Վերապրողները», «Գավառի ձայներ» և «Հայկական կյանք» խորագրերի ներքո, ինչպես նաև՝ «Մեր խոսքը» վերնագրով խմբագրականներում: Հայոց ցեղասպանությունից մազապուրծ տարագիրներն ապաստան էին փնտրել

հարևան երկրներում, իսկ Հայաստանի Առաջին հանրապետության հիմնադրումից հետո նրանց մեծ մասը համախմբվել էր հենց այնտեղ՝ փրկված ու անկախ հայրենիքում: Նրանք հուսով էին, որ շուտով վերադառնալու էին Էրգիր՝ իրենց ծննդավայր հայրենիքը: Սակայն մինչ կհասներ այդ բաղձալի օրը, փորձում էին գոյատևել Անկախացած Հայաստանում, որտեղ մոլեգնում էր սովը, և չկային ապրուստի ու կեցության տարրական պայմաններ: Հայոց նորաստեղծ պետությունը հնարավորության սահմաններում անում էր ամենը՝ հայ գաղթականների և որբերի կյանքը փրկելու, նրանց կացարանի և գոյատևման հիմնահարցերը լուծելու համար: Փաստենք, որ եթե չլիներ արտաքին օգնությունը, ապա 1918-1920-ականներին Հայաստանում ապաստանած գաղթականներին ու որբերին սովամահությունը կպատուհասեր: 1918 թ. հոկտեմբերին Սիմոն Վրացյանը գրում էր, որ սպառվել էին երկրի հացի պաշարները. «Ոչ միայն գաղթականութիւնը, այլեւ տեղացիներից շատերը մատնուեցին սովամահութեան: 6 ամսայ ընթացքում սովից ու հիւանդութիւններից Հայաստանում մեռաւ մօտ 180.000 մարդ»:[5] 1918 թ. նոյեմբերին Հայաստանում գտնվող յուրաքանչյուր 5000 որբից 480-ը մահանում էր:[6] Սովը Հայաստանում շարունակվել էր մինչև 1919 թ. կեսերը, և այդ ընթացքում տասնյակ հազարավոր գաղթական-

ՀԱԿԱՏԱՄԱՐՏ

ՕՐԱԼՔԵՐԸ

ԴԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ներ ու որբեր էին մահացել սովից ու համաճարակներից:[7]

1918 թ. հուլիսին Հայաստանում գործում էր 35 որբանոց՝ ավելի քան 2250 որբերով, իսկ Վրաստանում՝ 27 որբանոց ավելի քան 1950 որբերով:[8] 1918 թ. սեպտեմբերին Հայաստանում որբանոցների թիվը դառնում է 32, իսկ որբերինը՝ 2400:[9] Այդ որբանոցների կարիքները հոգում էին մի շարք բարեգործական կազմակերպություններ, ի թիվս որոնց՝ «Եղբայրական օգնության» կոմիտեն, Մոսկվայի Հայկական կոմիտեն, Կովկասի Հայկական բարեգործական ընկերությունը, Անգլիական բարեգործական ընկերությունը, Ամերկոմը և այլն:[10] 1919 թ. հունվարին Հայաստանում առկա էր 46 որբանոց 6567 որբերով:[11] 1919 թ. ապրիլի 25-ին Հայաստանի կառավարությունում ներկայացված զեկուցագրի տվյալներով՝ Հայաստանի Առաջին հանրապետությունում ապաստանած արևմտահայ գաղթականների թիվը 263.000 էր, իսկ Ատրպատականում, Վրաստանում, Հյուսիսային Կովկասում, Ռուսաստանի այլ բնակավայրերում՝ 200.000:[12] Նույն զեկուցագրից պարզվում էր, որ Հայաստանում գտնվում էին ավելի քան 40.000 որբեր, որոնցից 15.612-ը տեղավորված էին որբանոցներում:[13]

Պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ 1918 թ. սկզբներին թուրքերի՝ Արևելյան Հայաստան ներխուժելու հետևանքով գաղթական էին դարձել արևելահայ որոշ բնակավայրերի (Կարսի, Ալեքսանդրապոլի, Սուրմալուի, Էջմիածնի, Ղարաքիլիսայի և այլն) բնակիչներից շատերը, և այդպիսով՝ Հայաստանի Առաջին հանրապետության բնակչության գրեթե կեսը՝ 450.000-ը, գաղթականի կարգավիճակում էր հայտնվել:[14]

Գաղթականների խնդիրներով զբաղվում էր պետական 4 կառույց՝ Հայաստանի Խորհրդարանի գաղթականության հարցերի մշտական հանձնաժողովը, խնամատարության ու աշխատանքի, ներքին գործերի և հանրային կրթության նախարարությունները:

1918 թ. Հայաստանում ընդունվել էին մի շարք օրենքներ՝ ուղղված տարագիր գաղթականների առջև ծառացած կենսական խնդիրների լուծմանը: Պետությունը փորձում էր սովի, համաճարակների, պատերազմական իրավիճակում անգամ հնարավորինս հոգալ գաղթականների և որբերի ներգաղթի, կեցության, խնամքի, աշխատանքով ապահովվածության, կրթության և առողջության պահպանման հարցերը:

ԳԱԱ Պատմության ինստիտուտի հրատարակած «Հայոց պատմություն» բազմահատորյակից տեղեկանում ենք հետևյալ մանրամասներին. «Գաղթականների դրամական նպաստը օրական կազմում էր 60 կոպեկ (մեկ շնչի հաշվով): Գաղթականների սոցիալական պաշտպանության նպատակից ելնելով՝ յուրաքանչյուր շնչին օրական տրվում էր կես ֆունտ ալյուր՝ որպես նվազագույն չափաբաժին: 1918 թ. հոկտեմբերի մեկից մինչև 1919 թ. հունվարի մեկը գաղթականությանը ցույց տրված օգնության ծախսերը, ըստ կառավարության կազմած նախահաշվի, կազմել էին ավելի քան 12.7 միլիոն ռուբլի: Կառավարության կազմած նախահաշվով՝ 10 հազար որբի ծախսերը հոգալու համար ամսական պահանջվում էր 1.5 միլիոն ռուբլի»,[15] - նշված է վերոհիշյալ գրքում:

Հայոց նորաստեղծ պետությունը, 1918 թ. հոկտեմբերի 11-ին ընդունված օրենքի համաձայն, ստանձնել էր որբերի խնամքն ու դաստիարակությունը: Դեկտեմբերին խնամատարության և աշխատանքի նախարարության զեկույցի համաձայն՝ Հայաստանում ապաստանել էին շուրջ 40.000 որբեր, որոնցից 15.612-ն էին խնամվում պետական ու բարեգործական կազմակերպությունների կողմից:[16] Կային 50 որբանոցներ, որոնցից թվով ամենաշատ՝ 1219 որբ էր ապաստանել Ալեքսանդրապոլում գործող որբանոցը:[17]

1919 թ. ապրիլին խնամատարության և աշխատանքի նախարարությունը երկրի տարածքում գտնվող որբանոցներում և այլ վայրերում, այդ թվում՝ փողոցներում ապրող որբերի խնամքը հանձնում է Ամերկոմին՝ Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեին,[18] որը ստանձնել էր նաև Վրաստանում հայտնված հայ որբերի խնամքը:[19] Ամերկոմի խնամքին թողնված հայ որբերի կրթության և դաստիարակության խնդիրներն սկզբնապես դրվել էին խնամատարության և աշխատանքի նախարարության վրա:[20] 1919 թ. հունիսի 5-ի Նախարարների խորհրդի որոշմամբ Ամերկոմին հանձնված որբանոցների սաների կրթության և դաստիարակության գործառույթը հանձնվել էր հանրային կրթության նախարարությանը:[21] 1919 թ. մայիսից խնամատարության և աշխատանքի նախարարությանը ենթակա որբանոցները պետությունը հանձնում է Ամերկոմին:[22]

1919 թ. մայիսին Հայաստանում գործում էին 86 որբանոց և մանկական 10 հիվանդանոց, որոնցում եղած որբերի թիվը 13.820 էր:[23]

Հայաստանի Առաջին հանրապետության որբանոցների գործերի գլխավոր կառավարիչը բժիշկ Գրիգոր Սաղյանն էր:[24]

Հայաստանում սոցիալական պայմանների որոշակի բարելավմանը զուգընթաց՝ կառավարությունը որոշում է Ամերկոմի խնամքին հանձնված որբանոցները կամ գոնե դրանց մի մասը վերցնել իր խնամքի տակ, որպեսզի հայ որբերը չենթարկվեին ամերիկյան

դաստիարակության և վարք ու բարքի, նաև՝ կրոնագաղափարական ազդեցությանը:[25] Արդեն 1919 թ. հուլիսին Հայաստանն այդ կազմակերպությունից ետ է վերցնում 25 որբանոց ու մանկական 4 հիվանդանոց, որոնցում խնամվում էր 2498 որբ:[26] Նույն թվականի աշնանը Հայաստանի որբանոցներում (թե՛ պետական, թե՛ Ամերկոմի) գտնվող որբերի թիվը 23.110 էր:[27]

Հայոց պետության կողմից իրականացվող որբախնամ ու գաղթականների տեղավորման, նրանց խնդիրները լուծելու նպատակով կատարվող աշխատանքները հանգամանորեն ներկայացվել են «Ճակատամարտ» օրաթերթի էջերում՝ առավելապես «Կյանքը Հայաստանի մեջ» խորագրի ներքո: Օրինակ՝ «Սով կա» հոդվածում պատկերացում էր տրվում, թե տիտանական ինչ ջանքեր էր գործադրում Հայաստանի կառավարությունը գաղթականների տեղավորման, ներգաղթի և պարենավորման հիմնահարցերը վերացնելու ուղղությամբ:[28] Դա արվում էր մի երկրի կողմից. «որից կտրուած էին բոլոր հացառատ վայրերը, որ ինքը քաղցած լինելով, կերակրում էր կէս միլիոնի հասնող գաղթականների հսկայական բանակ»:[29]

Հայաստանի Առաջին հանրապետության պետական այրերին մշտապես զբաղեցրել է արևմտահայ գաղթականներին և որբերին դեպի Էրգիր ներգաղթեցնելու խնդիրը: Հատկապես խոսքը վերաբերում է 1920 թ. գարնան ժամանակահատվածին, երբ այդ հարցի լուծման փնտրտուքը հանձնարարվել էր կոնկրետ մարմնի՝ 1920 թ. մարտին հիմնված ներգաղթի հանձնաժողովին: Այս կառույցը պետք է ծրագիր մշակեր, ըստ որի՝ Հայաստանում և դրա սահմաններից դուրս գտնվող արևմտահայ տարագիրները պիտի վերադառնային Արևմտյան Հայաստան: Այս շրջանում ստեղծվել էին պատմաքաղաքական որոշակի հանգամանքներ, որոնք հնարավորություն էին տալու Թուրքիայի հետ ձեռք բերել պայմանավորվածություն՝ արևմտահայ գաղթականների և որբերի վերադարձի վերաբերյալ:[30]

Արևմտահայ տարագիրների ներգաղթի խնդիրներն իրենց անդրադարձն են գտել «Ճակատամարտի» էջերում: Թերթի հրապարակումներում զգացվում է մտահոգություն և թերահավատություն, որ Թուրքիան թույլ կտար նրանց վերադառնալ իրենցից բռագրավված հայրենիքն ու հայրենի շեները: Թեև խմբագրակազմն առաջարկում էր Հայաստանի Հանրապետության կառավարությանը եռանդուն կերպով պահանջել թուրքական իշխանություններից հնարավորություն և իրավունք տալ գաղթականներին վերադառնալու իրենց ծննդավայրը,[31] բայց նաև գիտակցում էր, որ Թուրքիան չէր բավարարելու Հայաստանի այդ պահանջը: Այս առումով բնորոշ է 1918 թ. դեկտեմբերի 31-ին օրաթերթում տպագրված Հայաստանի Առաջին հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից թուրքական կառավարությանը հղված ծանուցագիրը, որում արտահայտված էր բողոք հայ գաղթականների վերադարձն արգելող թուրքական քաղաքականության դեմ:[32]

1919 թ. մարտի 20-ին «Ճակատամարտը» տպագրել է Հայաստանի վարչապետ Հովհաննես Քաջազնունու հեռագիրը՝ ուղղված Թիֆլիսի Դաշնակից պետությունների զինվորական պետին, որտեղ բարձրացված էր Կարսի շրջանի գաղթականության՝ Արփաչայի ափին կանգ առնելու խնդիրը:[33] Նշվում էր, որ զորավար Քրիստոֆեր Ռոկկերի ստորագրած պայմանագրի համաձայն՝ Կարսի գաղթականությունը պետք է վերադառնար իր հայրենիքը, ուստի Հայաստանի բոլոր կողմերից գաղթականները Արփաչայի ափին էին կուտակվել:[34] «Մուտքը Կարսի շրջանը անկարելի ըլլալով, գաղթականները իրարու վրայ դիզուած կը մնան ու բառիս բուն նշանակութեամբ կը կոտորուին, քանի որ այդ շրջանի հացովն է, որ տաճիկ զօրքը 8 ամիս շարունակ ապրեր է, իսկ մնացածն ալ հետը տարեր է»,[35]- գրում էր վարչապետ Հովհաննես Քաջազնունին: «Ճակատամարտը» ներկայացրել էր Հայաստանի Առաջին հանրապետության խորհրդարանի նախագահ Ավետիս Սահակյանի դիմումը դաշնակից խորհրդարանների նախագահներին, որով նրանց տեղեկացնում էր, թե ինչպես էին հայ տարագիրներն երկրի ազգաբնակչության հետ զոհ գնում Հայաստանում տիրող քաղցին ու բծավոր ժանտատենդի համաճարակին[36] (օրական մահանում էր 2000-3000 մարդ):[37]

1919 թ. մայիսին տպագրած վերլուծականներում «Ճակատամարտը» հուսադրում էր ընթերցողներին այն լուրով, որ Հայաստանի Առաջին հանրապետությունում սովն սկսել էր կենտրոնից նահանջել դեպի ծայրագավառները, իսկ արևմտահայ գաղթականության մտահոգության կիզակետում առավելապես խորհրդարանական ընտրություններին տարագիրների մասնակցության և նրանց ներգաղթի կազմակերպման հարցերն էին:[38] «Ներգաղթի խնդիրը կեանքի և մահուան խնդրի ձեւ է ստացեր թրքահայերու համար: Արևմտահայ փախստականը, որ 5 տարիներէ ի վեր թափառական, աստանդական, նպաստընկալ կերպով ապրեցաւ, մերթ գնաց իր հայրենիքը՝ զայն շէնցնելու և մարած օջախը վերականգնելու յոյսով, մերթ յուսալքուած բռնեց նորէն գաղթի ճամփան, թողուց իր հուսկ ինչքն ու ստացուածքը, թողուց իր զաւակները յաճախ ճամբու եզերքին ու ետ եկաւ դէպի օտարու-

թիւնը, այսօր այլեւս չի կրնար շարունակել նոյն վիճակը և կ'ուզէ ամեն գնով իր երկիրը վերադառնալ, բայց ճամփայ չկայ»,[39] - կարդում ենք թերթում:

1919 թ. հուլիսի 25-ի համարում Մ. Պետրոսյանն անդրադառնում էր Հայաստանի խորհրդարանի ընդունած այն բանաձևին, որը մասնավորապես վերաբերում էր Հայաստանի, Վրաստանի, Ատրպատականի սահմաններում ապաստանած փախստականների և Մուսուլի, Բաղդադի ու Հալեպի հայ գաղթականների և որբերի ներգաղթի խնդիրներին:[40] Նրա կարծիքով՝ ներգաղթի և հայրենիքի վերածնության խնդիրները կապված էին Հայկական հարցի լուծման և Էրգրի ազատագրման հետ: Պնդում էր հետևյալը. «Մինչեւ որ Երկիրը չգրաւուի, կորստաբեր է ներգաղթը: Ամեն ճիգ պէտք է թափել՝ կասեցնելու տարերային շարժումը գաղթականներուն, որքան ալ անհանդուրժելի ըլլայ իրենց ներկայ վիճակը»:[41] Ներգաղթը բարդ և գրեթե անիրականանալի գործընթաց էր, որը նախապատրաստական մեծ աշխատանք էր ենթադրում: Ըստ հոդվածագրի՝ աշխարհագրական դիրքի, փոխադրության և պարենավորման միջոցների դժվարությունն անհնարին էր դարձնում ներգաղթի ղեկավարումը մեկ կենտրոնի կողմից, ուստի անհրաժեշտ էր հիմնել Կ.Պոլսում ևս մեկ կենտրոն, որ «օժանդակէ Հայաստանի կառավարութեան և լրացնէ անոր գործը»:[42]

«Ճակատամարտի» հրապարակագիրներից Վահան Հարությունյանը պահանջում էր մշակել ներգաղթի հեռահար ծրագրեր:[43] «Անհրաժեշտ է, որ դէպի Հայաստան վերադառնալու սահմանուած հայութիւնը լրջօրէն պատրաստուի այդ մեծ ու կենսական գործին: Անհրաժեշտ է հոգ տանիլ, որպէսզի տարագրութեան ճամբաներուն վրայ ցրուած հայութիւնը չկորսուի, և մեզի աւանդ թողուած որբուկները ընդհանուրին գուրգուրանքին առարկայ դառնան»[44],- գրում էր հոդվածագիրը: Ներգաղթի գործը պիտի սկսվեր հավաքաբար և արվեր որոշակի մեթոդով մշակված ծրագրով, որ հայության վերադարձը հայրենիք այս անգամ չլիներ որպես հալածանքի հետևանք կամ որպես անկազմակերպ ներխուժում, կամ էլ որպես անստույգ վախճանով մի նոր տարագրություն:[45] Հոդվածագրի կարծիքով՝ կազմվելիք ներգաղթի միություններն առաջին հերթին պիտի ունենային հողագործական ուղղվածություն, որ նպաստեին Արևմտյան Հայաստանի տնտեսական վերազարթոնքին:[46] Իբրև հավաքական ներգաղթի կազմակերպված մարմին պիտի հանդես գային նաև ներգաղթի արհեստավորական միությունները՝ նպատակ ունենալով արևմտահայ գավառ ուղարկել զանազան արհեստավորական խմբեր:[47] Անհրաժեշտ էր կազմակերպել ներգաղթի մտավորական միություններ նույնպես:[48] Ներգաղթի միությունների գլխավոր նպատակներից մեկը պետք է լիներ հայության բոլոր կարող ուժերի մեկտեղումը և նրանց հայրենիք փոխադրելու գործառույթը:[49] Այդ միությունները պիտի իրենց ճյուղերն ունենային արտասահմանի հայկական գաղութներում, բացի այդ՝ պիտի սերտորեն համագործակցեին հայկական ու միջազգային Կարմիր խաչերի, նաև՝ հայրենակցական միությունների հետ:[50] Գլխավոր ներգաղթից հետո ներգաղթի միությունները պիտի շարունակեին իրենց գործունեությունը մինչև այն ժամանակ, երբ հայրենիք բոլոր վերադարձողները կկարողանային հարմարվել նոր կենսապայմաններին և կապրեին բնականոն կյանքով:[51]

1920 թ. կեսերից գաղթականության ներգաղթի խնդիրները մտան փակուղի: Դա պայմանավորված էր Հայաստանի Առաջին հանրապետության համար ստեղծված միջազգային անբարենպաստ աշխարհաքաղաքական հանգամանքներով: Այդ ամենի հետևանքով Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում մինչև 1920 թ. դեռևս բնակվող հայությունն աստիճանաբար, մանավանդ 1923 թ. հետո Թուրքիայում ընդունված օրենքների պատճառով, ստիպված լքեց բնօրրան հայրենիքը, իսկ շատ հայեր էլ կրոնափոխվեցին, թրքացան ու քրդացան:[52]

«Ճակատամարտի» հրապարակումները վկայում էին, որ 1919 թ. մայիսին սովի դեմ պայքարող Հայաստանի Հանրապետությունն արտերկրից ստացած սննդամթերքն անխտիր բաժանում էր «թէ՛ տեղացի և թէ՛ գաղթական ժողովուրդին հաւասարապէս»:[53] Հայաստանին արտաքին տնտեսական օժանդակություն էր հատկացնում Ամերիկյան Նպաստամատույց ընկերությունը: Այն հանձն էր առել տարագիր հայերի խնամատարությունը, նրանց համար արհեստանոցների կազմակերպումը և պարենավորումը՝ սննդա- մթերքների բաշխման աշխատանքը հանձնելով Հայաստանի խնամատարության նախարարությանը, որը պետք է կատարեր նաև սերմնացուի բաշխումը:[54] Ամերիկյան Նպաստամատույց ընկերությունն ստանձնել էր 1500 հայ որբերի խնամատարության գործը:[55] Հայաստանում նշված ժամանակահատվածում հաշվառված էին 45.000-50.000 տեղաբնակ ու գաղթական որբեր, «որոնք կը կարօտին անմիջական խնամատարութեան»,[56] - այս մասին տեղեկացնում էր Վաղարշակ Հոխիկյանը 1919 թ. ապրիլի 6-ին Երևանից «Ճակատամարտին» ուղարկած թղթակցության մեջ:

«Արևմտահայ որբերը Հայաստանի Հանրապետության մեջ» վերլուծական հոդվածում Հ. Բագրունին խորությամբ էր վերհանում հիմնախնդիրը՝ առկա

իրավիճակի մասին տալով օբյեկտիվ պատկերացում՝ հիմնվելով թվային տվյալների և փաստերի վրա:[57] Ըստ այդմ՝ 1914 թ. դեկտեմբերին տեղի ունեցած Բագրևանդի նահանջը, 1915 թ. հուլիսին Վասպուրականի և դրան հաջորդած նահանջները, ինչպես և 1918 թ. թուրքական առաջխաղացման հետևանքով Վանի, Սարիղամիշի, Ալեքսանդրապոլի և Մեծ Ղարաքիլիսայի գրավումներն ու կոտորածներն առաջացրել էին հայ որբերի հսկայական կուտակումներ, ընդ որում, նրանց մեծ մասը հյուծվելով՝ մահացավ, իսկ որոշ մասն էլ Հայաստանի կառավարության ու հանրային զանազան հիմնարկությունների և միությունների նախաձեռնությամբ պատսպարվեց որբանոցներում:[58]

1917 թ. ամռանը, համաձայն «Եղբայրական օգնության» կազմակերպության Երևանի գլխավոր հանձնաժողովի կատարած ցուցակագրման, Կովկասում և տարբեր վայրերում գործում էր 68 որբանոց՝ 6890 որբ-որբուհիներով,[59] իսկ Կարսում, Քանաքեռում, Բաթումում, Սոխումում, Սանահինում, Ղուրլուղուլիում, Ջալալ Օղլիում գործում էին մեկական որբանոցներ՝ 1080 որբերով:[60] Նրանց հոգածությունը և խնամատարությունն այսպես էր բաշխված մի շարք ընկերությունների ու կազմակերպությունների, ի թիվս որոնց Կենտրոնական կոմիտեի, Մոսկվայի, Բաքվի, Պետրոգրադի հայկական կոմիտեների, «Եղբայրական օգնության» և Քահանաների միություններ, Նպաստամատույց ընկերության և այլ հիմնարկությունների վրա:[61] Այս որբերի սնունդը, հագուստը, սենյակներն ու դրանց կահավորանքը բավարար վիճակում էին, և նույնիսկ մահացածության ցուցանիշը հիշյալ որբանոցներում բավական ցածր էր:[62] «Եղբայրական օգնության» Երևանի գլխավոր հանձնաժողովի և Էջմիածնի մասնաճյուղի, նաև Մոսկվայի կոմիտեի և Բարեգործական ընկերության ջանքերի շնորհիվ Երևանի, Էջմիածնի, Բաքվի ու Աշտարակի որբանոցների սաների համար կազմակերպվում էին դպրոցական պարապմունքներ որբանոցներում բացված դպրոցներում կամ դրանցից դուրս գործող ցերեկային դպրոցներին կից:[63] Հ. Բագրունին հիշատակում էր այն փաստը, որ Երևանի, Աշտարակի, Բաքվի և Դիլիջանի որբանոցներում բացվել էին արհեստանոցներ:[64] Դրանցում որբերի կողմից պատրաստվում էին ամեն տեսակի առարկաներ ու գործիքներ, որոնց շուկայական վաճառքից եկամուտ էին ստանում որբանոցները:[65]

Հ. Բագրունին փաստում էր, որ 1918 թ. Հայաստանի Առաջին հանրապետության կառավարությունն որբերի խնամատարության նախնական ծախսերի նպատակով հատկացրել էր յուրաքանչյուր որբի համար ամսական 15 ռուբլի, իսկ մնացյալ կարիքների լուծմանը հատկացվող գումարը հատուցվում էր հանրային կազմակերպությունների ջանքերով այնքան ժամանակ, մինչև մեծահասակ որբերի խնամատարության գործը ստանձնեց Արևմտահայ խորհուրդը, իսկ որբանոցային գաղութներ հիմնելու գործն իրենց վրա վերցրին Մոսկվայի հայկական կոմիտեն և Բարեգործական ընկերությունը: Վերջին երկու կազմակերպությունները 2000-ից ավելի որբ էին կենտրոնացրել Ջալալ Օղլիի որբանոցում:[66] 1918 թ. հունիսին Հայաստանում գործում էր 35 որբանոց՝ 2250 որբերով, իսկ Վրաստանում՝ 27 որբանոց՝ 1950 որբերով:[67] Երևանում և Էջմիածնում նոր հավաքված որբերի թիվը 2600-ի էր հասնում, ընդ որում՝ այդ որբերը հավաքվել էին 1918 թ. Հայաստանում ստեղծված հայ փախստականական կազմակերպության գլխավոր խորհրդի ջանքերով:[68] Նյութական անձուկ կացության պատճառով, սակայն, այդ կազմակերպությունն ի վիճակի չէր շարունակելու որբախնամ գործը սեփական նախաձեռնությամբ և միջոցներով: Նույն պատճառներով որբախնամ գործունեության սահմանները չէին կարողանում ընդարձակել «Եղբայրական օգնությունն» ու Մոսկվայի Հայկական կոմիտեն, ուստի հայոց նորակազմ պետությունն ինքն է ստանձնում հայ որբերի խնամատարությունը:[69] Հայաստանի խորհրդարանը հատուկ օրենքով որբանոցային գործը հանձնել էր խնամատարական նախարարությանը և, սկսած 1918 թ. հոկտեմբերից՝ 3 ամսվա համար 7.5 միլիոն գումար էր տրամադրել պետական այդ կառույցին 10.000 որբի հաշվարկով՝ յուրաքանչյուր որբի համար նկատի ունենալով 150-ական ռուբլի:[70] Խնամատարական նախարարությունը 1918 թ. հոկտեմբերից մինչև 1919 թ. մարտ ամիսը կարողացել էր 41 նոր ապաստարաններ մեջ հավաքել 11.500 որբի:[71]

Համաձայն խնամատարական նախարարության որբանոցային բաժնի վարիչներից Վանփուշի ներկայացրած վիճակագրական տվյալների՝ մինչև 1919 թ. մարտի վերջը Հայաստանի սահմաններում կար 76 որբանոց:[72] Դրանցում ապաստան գտած 11.581 որբերը[73] 1-15 և երբեմն 16-17 տարեկան էին:[74] «Ամբողջ որբերու 75 առ 100-ը կը կազմեն արեւմտահայեր, իսկ 25 առ 100-ը՝ տեղացիներ, որոնք նոյնպէս ենթարկուեցան նահանջի ու տեղահանութեան և անձամբ կրեցին այն ամենը, ինչ-որ Էնվէր-Թալէաթի կառավարութիւնը նիւթած էր տաճկահայ ժողովուրդին համար»,[75]- գրում էր Հ. Բագրունին:

1919 թ. գործող որբանոցներին զուգահեռ՝ Հայաստանի խնամատարական նախարարության որբանոցային բաժանմունքի վարչությունը նախատեսել

էր բացել որբանոցներ Նոր Բայազետում, Դավալուի, Ջալալ-Օղլուի և Կծալինի շրջաններում:[76] Նախատեսում էին հիվանդանոց-որբանոցներ բացել Ալեքսանդրապոլում, Մեծ Ղարաքիլիսայում, Ղամարլուում, Իգդիրում և բոլոր այն վայրերում, որոնցում դրանց կարիքը կար:[77] Նշենք, որ 1919 թ. հիվանդանոց-որբանոցներ էին գործում Երևանում, Էջմիածնում, Քանաքեռում, Ղարաչիչակում, Դիլիջանում:[78] Դրանք գոյատևում էին պետության և մի շարք կազմակերպությունների ջանքերով:[79]

«Ճակատամարտի» հրապարակումների համաձայն՝ հայաստանյան որբանոցներում սնունդը կարելի էր բավարար համարել: Յուրաքանչյուր որբի օրական տրվում էր ¾ ֆունտ հաց, կես ֆունտ միս, ¼ ֆունտ բրինձ, ¼ ֆունտ գետնախնձոր, իսկ երեկոյան ու առավոտյան՝ չամիչով կամ խոշաբով թեյ՝ հաճախ ցամաք հացի հետ:[80]

Ինչ վերաբերում է որբերի կրթական գործի կազմակերպմանը, ապա 1919 թ. մայիսի տվյալներով՝ պետական կարգավիճակ ունեցող որբանոցներում չէին անցկացվում դպրոցական պարապմունքներ:[81] «Պետութիւնը իր այդ աշխատանքին մէջ դեռ լիովին ի վիճակի չէ եղած փողոցներու մէջ թափառող եւ հիւծած ու մեռնելու դատապարտուած որբերը հաւաքելու: Կ'ենթադրուի, որ բոլոր որբերը պիտի հաւաքուին ու 11 հազար թիւը 15-18 հազարի պիտի բարձրանայ, հաշուելով այդ թիւին մէջ ու 5000 հիւծածներն ու հիւանդները, որոնց բոլորին վրայ պետութիւնը ամսական 9 միլիոնի պիւտճէ մը կ'ունենայ կամ տարեկան 115 միլիոն՝ սնունդի եւ 10 միլիոն միանուագ գումար մըն ալ հագուստի ու կահաւորութեան»,- գրում էր պարբերականը:[82]

Ամփոփելով՝ կարող ենք փաստել հետևյալը:

- «Ճակատամարտն» իր հրապարակումների միջոցով պատկերացում է տվել Հայաստանի Առաջին հանրապետությունում, հետագայում նաև Խորհրդային Հայաստանում հայ տարագիրների ու որբերի համար մշակված և իրագործվող ծրագրերի, նրանց հանդեպ եղած վերաբերմունքի և տարվող պետական քաղաքականության մասին՝ ցույց տալով, որ հայկական 2 պետություններն էլ սրտացավ են եղել գաղթական ու որբ դարձած հայրենակիցների նկատմամբ և իրենց սուղ միջոցներով ձգտել են թեթևացնել նրանց խնդիրները՝ ներգրավելով հասարակական կյանքում՝ այդ նպատակով համագործակցելով հայկական և օտարերկրյա բարեսիրական կառույցների ու կազմակերպությունների հետ:
- 1918-1920 թթ. Կ.Պոլսի «Ճակատամարտը», անդրադառնալով հայ որբերի և գաղթականների հիմնախնդիրներին, փորձել է լուսաբանել դրանց լուծման ուղղությամբ հայկական ու միջազգային կառույցների կողմից կատարվող աշխատանքները թե՛ Հայաստանի Առաջին հանրապետությունում, թե՛ Թուրքիայի մայրաքաղաքում, թե՛ այլ երկրներում:
- 1918-1920 թթ. «Ճակատամարտը» բազմակողմանիորեն է անդրադարձել հայ տարագիրների ճակատագրին և խնդիրներին: Մի կողմից՝ լուրեր է տպագրել կամ արտատպել հայկական մամուլից, մյուս կողմից՝ վերլուծական հոդվածներով է հանդես եկել՝ դրանցում ներկայացնելով նաև վիճակագրական տվյալներ և սոցհարցման հարցախույզներ, ինչպես նաև արտահայտելով խմբագրակազմի տեսակետները հիշյալ հիմնահարցերի վերաբերյալ:
- «Ճակատամարտը» ոչ միայն պարզապես նկարագրել է տարագիրների դրությունը, ոչ միայն ներկայացրել է նրանց կենսապայմանների և ապրելակերպի պարզ նկարագրությունը, այլև վերհանել է նրանց առջև ծառացած խնդիրներն ու դրանց պատճառները:
- «Ճակատամարտը» ներկայացրել է նույն ժամանահատվածում Թուրքիայում հայ գաղթականների և որբերի հանդեպ եղած վերաբերմունքը, խոսել է թուրքական իշխանությունների կողմից նրանց նկատմամբ որդեգրված քաղաքականության մասին, վկայել է ցեղասպանությունից մազապուրծ հայ գաղթականների և որբերի ուսեզրկման, ինչպես նաև բռնի կրոնափոխման և նրանց կամքին հակառակ՝ թրքացման ու քրդացման դեպքերի մասին:
- Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից, Թուրքիայի Հանրապետության հիմնադրումից և այդ երկրում ստեղծված նոր՝ հայ ժողովրդի համար առավել անբարենպաստ քաղաքականության որդեգրումից հետո «Ճակատամարտն» այլևս

դադարել է սեփական հրապարկումներով հանդես գալ մասնավորապես հիշյալ կարևոր հիմնահարցերի վերաբերյալ՝ բավարարվելով լոկ Խորհրդային Հայաստանի պարբերականներից արտատպումներով, որոնք, բնականաբար, արտացոլել էին խորհրդահայ իրականությունն այնպես, ինչպես պարտադրվել էր ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների կողմից:

- Ինչ վերաբերում է Քեմալական Թուրքիայում հայ որբերի և գաղթականների խնդիրների լուսաբանմանը, ապա «Ճակատամարտն», ստեղծված քաղաքական հանգամանքներում և կրկին վերահաստատված գրաքննության պայմաններում, արդեն անկարող էր արտահայտել մեր ժողովրդին մտահոգող բոլոր, այդ թվում նաև որբերի ու գաղթականների հիմնահարցերի վերաբերյալ սեփական տեսակետներն ու մոտեցումները:
- Թերթի տեսադաշտից չեն վրիպել նաև հայկական գաղթօջախների կողմից հանուն հայ տարագիրների իրականացված ձեռնարկները՝ մատնանշելով նկատված թերություններն ու բացերը: ■

Հղումներ

1 Հովսեփյան Մ., «ՀՅԴ Կ.Պոլսի պարբերական մամուլը (1909-1924 թթ.)», Ե., 2009, էջ 61:
2 «Թուրքիայի Հանրապետության պատմություն», Ե., 2010, էջ 13:
3 Նույն տեղում, էջ 14:
4 «Ճակատամարտ» օրաթերթի խմբագիրը Հակոբ Սիրունին էր: Պատասխանատու տնօրեններն էին Մանուկ Ալանյանը և Շավարշ Միսաքյանը: Արտոնատերը Վրթանես Մարտիկյանն էր: Թերթն ունեցել է 3 անվանում՝ «Արդարամարտ» (1918, թիվ 1-12), «Արիարմարտ» (1918, թիվ 13-32) և «Ճակատամարտ» (1918, թիվ 33-ից մինչև վերջին համարը).-տե՛ս Հովսեփյան Մ., «ՀՅԴ կուսակցական և համակիր պարբերական մամուլը Օսմանյան Թուրքիայում 1909-1915 թթ. և 1918-1923 թթ.)», Ե., 2016, էջ 235:
5 Վրացեան Ս., «Հայաստանի Հանրապետութիւն», Թեհրան, 1982, էջ 192:
6 «Բանբեր Երևանի համալսարանի», Ե., 1968, թիվ 2, էջ 217:
7 Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 253:
8 Ավետիսյան Ս., «Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի գործունեությունը Հայաստանում 1918-1930 թթ.», Ե., 2009, էջ 14:
9 ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 900, թ. 1:
10 Նույն տեղում:
11 ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 22, թթ. 8, 9, 20, 21:
12 Նույն տեղում, թ. 84:
13 Նույն տեղում:
14 «Հայոց պատմություն», հ. 4, գ.1, Ե., 2010, էջ 61:
15 Նույն տեղում, էջ 62:
16 Նույն տեղում, էջ 63:
17 Նույն տեղում:
18 Ամերկոմը կամ Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեն ստեղծվել էր 1918 թ. ԱՄՆ Կոնգրեսի որոշմամբ դեռևս 1915 թ. ԱՄՆ-ում հիմնված 1-ին համաշխարհային պատերազմից առավել տուժած երկրներին օգնություն տրամադրելու նպատակով ստեղծված Հայաստանի և Սիրիայի Նպաստի կոմիտեների միավորման հիման վրա: Ամերկոմը կոչում էին նաև Մերձավոր Արևելքի Նպաստամատույց (տե՛ս Ավետիսյան Ս., նշվ. աշխ., էջ 4-6):
19 «Բանբեր Երևանի համալսարանի», Ե., 1968, թիվ 2, էջ 219:
20 ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 619, թ. 1:
21 ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 94, թ. 17:
22 «Հայոց պատմություն», նշվ. աշխ., էջ 63:
23 ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 900, թ. 1:
24 ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 22, թ. 85: Տես նաև https://hy.wikipedia.org/wiki/Գրիգոր_Սաղյան
25 Հովսեփյան Մ., «Հայ գաղթականների և որբերի հիմնախնդիրները Կ.Պոլսի «Ճակատամարտ» օրաթերթում (1918-1923 թթ.)», Ե., 2020, էջ 87-88:,
26 ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 22, թթ. 169-170:
27 ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 46, թ. 63:
28 «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1918, թիվ 8 («Սով կա»):
29 Նույն տեղում:
30 «Հայոց պատմություն», նշվ. աշխ., էջ 65:
31 Նույն տեղում:
32 «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1918, թիվ 37 («Թուրքիա և Հայաստանի գաղթականները»):
33 Նույն տեղում, 1919, թիվ 110 («Հայաստան և իր հոգերը»):
34 Նույն տեղում:
35 Նույն տեղում:
36 Նույն տեղում:
37 Նույն տեղում:
38 Նույն տեղում, 1919, թիվ 166 («Կյանքը Հայաստանի մեջ»):
39 Նույն տեղում:
40 Նույն տեղում, 1919, թիվ 215 («Արևմտահայերու ներգաղթը և խնամատարությունը»):
41 Նույն տեղում:
42 Նույն տեղում:
43 Նույն տեղում, 1919, թիվ 72 («Առաջին քայլերը. ներգաղթի միություններ»):
44 Նույն տեղում:
45 Նույն տեղում:
46 Նույն տեղում:
47 Նույն տեղում:
48 Նույն տեղում:
49 Նույն տեղում:
50 Նույն տեղում:
51 Նույն տեղում:
52 «Հայոց պատմություն», նշվ. աշխ., էջ 66:
53 «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1919, թիվ 164 («Հայաստանի կացությունը»):
54 Նույն տեղում:
55 Նույն տեղում:
56 Նույն տեղում:
57 Նույն տեղում, 1919, թիվ 161 («Արևմտահայ որբերը Հայաստանի Հանրապետության մեջ»):
58 Նույն տեղում:
59 Նույն տեղում:
60 Նույն տեղում:
61 Նույն տեղում:
62 Նույն տեղում:
63 Նույն տեղում:
64 Նույն տեղում:
65 Նույն տեղում:
66 Նույն տեղում:
67 Նույն տեղում:
68 Նույն տեղում:
69 Նույն տեղում:
70 Նույն տեղում:
71 Նույն տեղում:
72 Նույն տեղում:
73 Նույն տեղում:
74 Նույն տեղում:
75 Նույն տեղում:
76 Նույն տեղում:
77 Նույն տեղում:
78 Նույն տեղում:
79 Նույն տեղում:
80 Նույն տեղում:
81 Նույն տեղում:
82 Նույն տեղում:

«Արձագանգ»ի էջերից

Էլիզ Հասըրճեան-Շարապխանեան

1972-1976 թթ. Տորոնտոյում լոյս տեսած «Արձագանգ» ամսաթերթի էջերում շատ հետաքրքիր նիւթեր են հրատարակուել, որոնց մէջ զգալի տեղ ունեն թարգմանութիւնները: Ուշիաբնակ տիկին Էլիզ Հասըրճեան-Շարապխանեանը տարիներ առաջ թարգմանել է Սարոյեանի «Ռագ Ուակրամ» վէպը, եւ թարգմանութիւնը ցայսօր չի հրատարակուել:

Բայց ի՞նչ իմանաս՝ վաղն ի՞նչ տեղի կ�triՈ՝ ունենայ:

Ներկայացուող հրապարակումները նուիրուում են ամերիկացի մեծ գրող և մեծ հայ Ուիլեամ Սարոյեանի մահուան 45-րդ տարելիցին:

ՀԱՅՈՒԹԵՆԷՆ ԱՆԲԱԺԱՆ ԹԱԿԱՐԴ»ԻՆ ՄԷՋ

Հազուադէպ չէ նկատել հայութենէ յոգնած եւ անկէ փախչիլ ուզող տիպարներ: Յաճախակի է նաեւ տեսնել անոնց ապարդիւն ճիգերը եւ վերադարձը հոն, ուր կայ պատկանելիութիւն իրենց համար եւ գոյութեան դրդապատճառ: Ուիլեամ Սարոյեան՝ իր «Ռագ Ուակրամ» վէպով եւ Շարլ Ազնաւուր՝ իր վերջերս Հայրենիք այցելութեան առիթով ըրած յայտարարութիւններով, երկու օրինակներ են այս հաստատումին:

Արագ Վակրամեան (Arak Wagramian)՝ «Ռագ Ուակրամ» վէպի հերոսը, որ գիւղեան մը մէջ սպասարկող մըն է, կը դառնայ նշանաւոր դերասան, կը շահի անուն եւ դրամ բախտի մէկ դարձուածքով, բայց կ՚անդրադառնայ, որ ինք երբեք պիտի չկարենայ նոյնանալ իր նոր տիպին հետ, ու կը վերադառնայ իր ընտանիքին ու ազգականներուն, կ՚այցելէ «Ասպարէզ»ի խմբագրատունը, Հայ Եկեղեցի եւ անոնցմով վերանորոգուած՝ կը ջանայ մտերմանալ իր ճշմարիտ անձին հետ: Իր իղձերն ու փափաքները Ֆրեզնոյի հայ այգեպաններուն իղձերն են՝ ընտանիք մը եւ այգի մը: Օտար ամուսնութիւն մը ասոնք անկարելի կը դարձնէ: Քանդուած ընտանիք մը, երկու զաւակներ՝ հայկական անուններով միայն եւ կին մը, զոր կը սիրէ, առանց սակայն կարենալ յարգելու՝ մտածելակերպի, շրջանակի եւ կենցաղի տարբերութիւններու պատճառաւ, կը դարձնեն զինք թշուառ եւ յուսահատ: Հայ քահանայի մը՝ Ջատիկի հետ մշակուած մտերմութիւնը կը դառնայ պատճառ, որ ընտանիքի եւ անոր յարաբերական արժէքներուն իմաստին հաղորդուի:

Գրքին վերջաւորութեան՝ Ռագ Ուակրամի կեանքին աւերակներուն մէջ, անկարելի է չանդրադառնալ Սարոյեանի հետեւութեան, թէ առաջին Ամերիկա հաստատուող հայերու ձախողանքը նոր կեանքին համակերպելու կը թելադրէ, թէ երկրորդ սերունդի հայերը պէտք է իրենց մտքերը ու հորիզոնները բանան Ամերիկայի բազմազան սովորութիւններուն՝ առանց սակայն դրժելու իրենց ազգային արժէքները եւ հաւատքի հանգանակները: Գրքին մէջ նկարագրուած են երեք տեսակի հայեր: Հայեր, որոնք առանձնացած են իրենց հայութեան մէջ՝ դժգոհ անով: Յետոյ կան Ռագ Ուակրամի նմանները, որոնք կը փնտռեն, կը ջանան միջին եզր մը գտնել, ու կան նաեւ անոնք, որոնք բոլորովին մոռցած են իրենց ազգութիւնը եւ դարձած ծանծաղ ամերիկացի: Այս վերջինները Սարոյեան կը դատապարտէ:

Հետաքրքրական է Սարոյեանի գլխաւոր քննադատ-վերլուծող Հաուըրտ Ֆլոնի մէկ խօսքը «Ռագ Ուակրամ»-ի մասին, թէ գրքին հայկական մթնոլորտը վէպին լաւագոյն տարրն է:

Անդին Ազնաւուր «Աշխարհ պտըտեցայ, երբեք չմոռցայ, որ հայ էի կ՚ըսէ (տես «Սփիւռք», 21 նոյեմբեր, 1971, N 47) ու յետոյ կ՚աւելցնէ. «Քիչ մը զիս յանցաւոր կը զգամ ժողովուրդիս նկատմամբ: Երբեք երգ մը չնուիրեցի իրեն: Յաճախ մտածած եմ: Գիտեմ, որ օր մը երաժշտութեամբ պիտի մեծարեմ զայն: Բայց այդ երգը չեմ ուզեր, որ ձախողի: Ուրեմն չեմ աճապարեր: Այդ օրը հպարտ պիտի ըլլամ աշխարհին պոռալու, որ Հայ եմ»:

Երկու արուեստագէտ՝ ամերիկացի աշխարհահռչակ գրող եւ ֆրանսացի նշանաւոր երգիչ, երկու Հայ, որ կը մնան հայութեան «թակարդ»ին մէջ՝ երբեմն չմոռնալով փառաւորել զայն կամ փառաւորուիլ անով:

«Արձագանգ», N 1, 1971

«...Քանի որ ես չեմ կրնար կարդալ կամ գրել մեր սեփական հպարտ ու անխորտակելի լեզուն եւ քանի որ մեր լեզուն պէտք է յաւիտեանս ծաղկի եւ ուռճանայ

եւ հարստացուի լաւ մարդոց միջոցով, անոնց իմացականութեանց գաղափարներով եւ անոնց հոգիներուն երազներով, կը յայտնեմ ձեզի, որ հայերէն կը գրէք, իմ անկեղծ շնորհակալութիւններս, իմ խորունկ հիացումս, իմ խոնարհ յարգանքս, իմ ջերմագին յոյսս, թէ պիտի շարունակէք գրել եւ ուրիշներուն ալ ուսուցանել կարդալ ու գրել հայերէն, եթէ կարելի է, ուրիշ որեւէ լեզուով, եթէ պէտք է, որովհետեւ լաւ մարդիկն ու լաւ գրուածքը տիեզերական են»:

Ուիլեըմ Սարոյեան
Կարօ Գէորգեանի իրեն ուղղուած անձնական նամակէն
«Արձագանգ», N 1, 1971

«ԵՍ ՆՈՅՆՆ ԵՄ, ԲԱՅՑ՝ ՏԱՐԲԵՐ»

Սարոյեանն է խօսողը, «Մեր տղան», ինչպէս կ'ըսեն Ֆրեզնոյի մեր հայրենակիցները ամէն անգամ, որ Ուիլեըմ Սարոյեանի անունը յիշեն: Այս յայտարարութիւնը ըրաւ Սարոյեան վերջերս իր հրատարակած «Վայրերը, ուր ժամանակ անցուցած եմ» գրքին առիթով: Գիրքը մեր սեղանին վրայ է. զայն կարդացինք հետաքրքրութեամբ: Նորութիւններ չկան անոր մէջ, բայց կայ ինքը՝ Սարոյեան՝ իր հայու հոգիով, իր մտածելու ու կեանքին մօտենալու ինքնուրոյն եղանակով, իր պարզունակ ու երբեմն ալ ... մանկամիտ գաղափարներով, որոնք Սարոյեանի գրչին տակ դարձած են առաւելութիւններ... Իր կեանքը ներկայացնող գիրք մըն է այս, որու մասին տարբեր պրիսմակներէ լայնօրէն անդրադարձան ամերիկեան գրական շրջանակները...

Ստորեւ տեսակցութիւն մը Սարոյեանի հետ՝ «Նիւ Եորք թայմզ պուք ռիվիու»ի ապրիլ 2-ի թիւէն:

ՈՒԻԼԵԸՄ ՍԱՐՈՅԵԱՆ
Գրեց՝ Փիթըր Գոլիէր
Ֆրեզնօ

Հիմա՝ իր վաթսունչորրորդ տարուան մէջ, Ուիլեըմ Սարոյեան սկսած է նմանիլ աղմկոտ հայ պատրիարքներուն, որոնց մասին ատենօք կը գրէր: Հաստցած մէջքով ու վիզով, ճերմակ ահագին պեխերը կախուած այտերուն վրայէն եւ իր ազնիւ աչքերը պաշտպանուած խորունկ կնճիռներով, կը խօսի բարձր, պոռոտ ձայնով եւ կարճ դադարներ կ'առնէ՝ թքնելու համար իր աթոռին քով եղող աղբամանին մէջ: Երբ Փարիզի մէջ չէ, ան կ'ապրի իրեն բնիկ Ֆրեզնոյի մէջ, ուր քանի մը տարի առաջ գնած է տուն մը՝ գոհացնելու համար բոյն շինելու իր անհասկնալի բնազդը: Այս տունը դուրսէն կը նմանի բոլոր միւս միջին դասակարգի տուներուն, բայց ներսը խառնարան մըն է:

Կան հարիւրաւոր գրքեր՝ սնտուկներու մէջ, սեղաններու վրայ դէզերով խճողելով սենեակին տարածութիւնը: Քարեր՝ բերուած Թրքահայաստան կատարած ուխտագնացութենէ մը, կողք կողքի տեղ կը գրաւեն զանազան ուրիշ գտնուած առարկաներու հետ: Նկարներ, թերթերէ կտրօններ՝ անկանոն ձեւով փակցուած պատերուն վրայ՝ մսավաճառի թուղթերու

վրայ երբեմն գծագրած նկարներուն քով: Կայ նաեւ հակաթաձեւ պատկերը իր հօրը՝ օսլայուած շապիկով եւ խիտ, մազերու մէջտեղէն բացուած խազով: «Շատ մը մարդիկ մէջբերումներ կ'ընեն Դօմ Վուլֆէն՝ ըսելով, թէ տուն չես կրնար վերադառնալ,– կ'ըսէ ան բարձրաձայն,– բայց իրականութիւնը այն է, թէ մարդ երբեք չի կրնար իրապէս հեռանալ տունէն»:

Ատենօք Սարոյեան շոայլօրէն ապրելու համբաւը ունէր, վերջերս ան պէտքը զգացած է աւելի ժուժկալ ապրելու: Նախ դադրած է անդադար ծխելէ ու սուրճ խմելէ, որոնք իր ստեղծագործութեան պահերուն արարողութիւններն էին: Յետոյ դադրած է բախտախաղ խաղալէ, որ իրեն արժած է հարիւր հազարաւոր տոլարներ գրելով շահած երկու միլիոնէն: «Այլեւս երիտասարդ մարդու կիրքը չեմ զգար կեանքի եւ ժամանակի հետ գրաւի գալու»,– կ'ըսէ ան եւ իր կեանքը, որ կ'երկարաձգուի Մոսկուայի ձիարշաւարաններէն ու Քանի պաքարայէն մինչեւ Լաս Վեկասի խաղարանները, հիմա երկու տոլարնոց գրաւէն անդին չ'անցնիր իր անհաշիւ ազգականներուն հետ Ֆրէզնոյի ձիարշաւներուն ատեն:

«Քանի մը տարի առաջ,– կ'ըսէ ան,– անդրադարձայ, որ կեանքիս զէնիթը անցած էի. հասկցայ, որ ալ դադրած էի աճելէ եւ սկսած մեռնելու: Առաջին հոգեկան ցնցումէն ետք, որ ես ալ միւս մահկանացուներուն պէս նոյն օրէնքներուն ենթակայ էի, սկսայ սորվիլ գնահատել այն փոփոխութիւնները, որոնք կը ներկայանային կեանքիս: Նոյնիսկ առանձնութիւնը յարմար էր, որովհետեւ զիս կը դնէր յարաբերութեան մէջ այն բոլոր խնդիրներուն հետ, որոնց չէի անդրադարձած

անկէ առաջ: Ես աշխարհին կը նայէի զարդարուն աչքով, բայց անդրադարձայ, որ տարիքս առնելով՝ կրնայի աւելի իրապաշտօրէն նայիլ աշխարհին: Հիմա կ'ապրիմ ուշիմութեամբ, քան թէ զգայնութեամբ: Ուշիմութիւնը կը ստեղծէ ամբողջականութիւն, եւ հիմա պէտք ունիմ անոր: ԿՐՆԱՄ ԸՍԵԼ, ԹԷ ՆՈՅՆՆ ԵՄ, ԲԱՅՑ՝ ՏԱՐԲԵՐ»:

Նկատելով, որ գրողները իրենց աշնան կը նստին հին կասկածներ փարատելու եւ հանդարտութեամբ իրենց կեանքը յիշելու, ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ աւելի մեծ պէտք է ըլլայ, քան ՆՈՅՆՈՒԹԻՒՆԸ: Բայց այդպէս չէ: Սարոյեան հիմա աւելի զգացական է, որքան էր ասկէ 40 տարի առաջ, երբ իր գրքերը նոր կը տպուէին: Տակաւին ան հակառակ է այժմ նորոյթ եղող յուսահատութեան, թէեւ կ'ընդունի, որ աշխարհը իր կարծածէն աւելի տխուր տեղ մըն է: Եւ բառերը տակաւին կը շարունակեն թափիլ իր հին «Ռոյալ» գրամեքենայէն՝ ստեղծելով թատրերգութիւններ, պատմութիւններ եւ յուշեր:

Հիմա շատ հետաքրքրուած է հասկնալու իր անցեալը, եւ իր վերջին գրքերը գլուխներ են երկար ինքնակենսագրութեան մը: Քիչ յիշուած «Կեանքի եւ մահուան օրեր եւ փախուստ դէպի լուսին» (Days of life and death and escape to the moon, 1970) գիրքը ցցուն քրոնիկ մըն է՝ ծերանալու եւ տեսնելու մարդուն բոլոր բարեկամներու մահացումը մէկիկ մէկիկ: «Վայրեր, ուր ժամանակ անցուցած եմ» գիրքը ընթերցողին առաջնորդն է Սարոյեանի աշխարհին մէջ, նկարագրութիւնը 68 տեղերու, ուր ան հանդիպեցաւ իր բախտին: Գրած է զայն անցեալ տարի, Փարիզի մէջ երկար պտոյտներու եւ ուրիշ գործերու միջեւ: Ամփոփելու համար, վերջին գրական կտակ մը գրելը Սարոյեանի ձեւը չէ, մարդ մը, որ «Տը Նիւ Եորքըր» թերթի կողմէ ատենօք կոչուած է «ամենամեծ, հարուածող ու փախչող ամերիկացի գրողը»:

1934-ին 26 տարեկանին Սարոյեան Սան Ֆրանսիսքօ եկաւ բախտ փնտռելու: Անդադար ծխելով հաստ սիկարէթներ՝ ոլորուած 5 սէնթնոց աժան ծխախոտով եւ մոլեգնութեամբ գրելով դեղին, աժան թուղթի վրայ՝ ան ղրկեց նամակ մը Ուիթ Պըրնէթի եւ Մարթա Ֆոլլիի, որոնք խմբագիրներն էին «Story» թերթին՝ ծանուցանելով, թէ ինք գրող մըն էր, որուն ժամանակը հասած էր: Ան կ'ըսէր, թէ որոշած էր նստիլ երկրորդ յարկի իր պզտիկ սենեակին մէջ յաջորդ ամսուան ամբողջ տեւողութեան եւ օրական մէկ կամ աւելի պատմուածքներ գրել ու ղրկել իրենց անմիջապէս, որ ամբողջացնէր: Ղրկածները տարօրինակ խառնուրդն էին պատմուածքի, քրոնիկի եւ իր անձին, որ ապագային իր պիտակը դարձաւ: «Story» թերթը գնեց իր «The daring young man on the flying trapeze»ը 15 տոլարի եւ 26 ուրիշ կտորներ, զորս գրած էր նոյն 33 օրուան շրջանին հաւաքուեցան իր առաջին գրքին մէջ, որ լոյս տեսաւ նոյն տարուան ընթացքին: Այս գիրքը մեծ ընդունելութիւն գտաւ, տպուեցաւ մի քանի անգամ եւ հաստատեց զինք, որպէս ամերիկեան նոր ձայն մը:

Յաջորդ 5 տարիներու ընթացքին Սարոյեան, իր իսկ բացատրութեամբ, «վարպետն էր խաղին» ու գրեց քանի մը հարիւր պատմուածքներ, քրոնիկներ, թատրերգութիւններ եւ զանազան կտորներ, ինչպէս «Գըմ-ան-ամայ հաուս» երգը, որ ծախուեցաւ միլիոններով, երբ քանի մը տարի ետք Ռոզմէրի Քլունի երգապնակի վերածեց երգը: Օգտագործելով Ֆրեզնոյի հայկական գաղութը Անտրրսընի ունեցած Օհայոյի գիւղի ձեւով՝ ան գրեց «Անուսս Արամ է» գիրքը, որ աւելցուց իրեն հետեւողներուն թիւը: 1939-ին, երբ Նիւ Եորք եկաւ ու մտաւ «Կրէյթ Նորտրրն» հօթէլ եւ դուրս ելաւ անկէ, վեց օր վերջ «The time of your life» (Քու կեանքիդ ժամանակը) թատրոնով, Սարոյեան համբաւաւոր էր դարձած...

Իր ընթերցողներուն կ'ըսէր ան, որ «փնտռեն բարիքը ամէն տեղ եւ, երբ գտնեն, դուրս բերեն զայն իր պահուրտած տեղէն եւ թողուն, որ ըլլայ ազատ ու առանց ամօթի»: Ան պաշտպանն էր թշուառին եւ թշնամին խաբեբային: Այս շրջանի լուսանկարները ցոյց կու տան զինք՝ գլխարկը ծռած մէկ աչքին վրայ, նստած իր շրջանի գրողներուն ու Պրոտուէյի նշանաւոր հերոսներու հետ:

Ժամանակները աւելի աններող եղան այսպիսի անմեղութեան, եւ Սարոյեանի կեանքը աւելի բարդացաւ: Կային պարագաներ, ինչպէս նշանաւոր կռիւը Լուի Մէյըրի հետ, որ իրեն վճարեց 60 հազար տոլար, որ գրէ «Մարդկային կատակերգութիւնը»: Ֆիլմին բեմադրութեան վրայ անհամաձայնութենէ մը ետք, Սարոյեան առաջարկեց 80 հազար տոլար՝ ետ գնելու համար գիրքը, բայց Մէյըր մերժեց: Ան լքեց Հոլիվուտը շտապով եւ չվերադարձաւ նոյնիսկ ստանալու համար «Օսքար»ի մրցանակը, զոր «ստացաւ» ֆիլմի լաւագոյն պատմութիւն գրողի համար:

Սարոյեանի շուրջ ստեղծուած աղմուկը քիչ-քիչ կասեցաւ: Միշտ վերապահութիւն մը կար իր երկերուն զգացականութեան հանդէպ: Ուոլքաթ Կիպս, օրինակ, իր «Տը թայմ աֆ եուր լայֆ»ի գրախօսականին մէջ ըսաւ. «Թատրոնին մէջ գիշեր մը անցընել Սարո-

յեանի հետ կը նմանի գիշերը անցընելու գինովի մը հետ... Կան պահեր, որ ան շատ զուարճալի է, հարուստ եւ անզուսպ ստեղծագործութեամբ մը, որուն գինով չեղողը չի կրնար հասնիլ... Դժբախտաբար կան նաեւ ժամանակներ, երբ ան կը սկսի խօսիլ իր սիրուհիին մասին, երբ դուն կ'ուզես, որ գլուխը դնէ սեղանին վրայ եւ քնանայ: Պրն Սարոյեանին սիրուհին մարդկային ցեղն է»:

Բայց հիմա գրական քննադատները սկսած էին զօրանալ եւ դիտել զարգացումը այն թանձր գրականութեան, որ իրենց գոյութիւնը կը բացատրէր: Իրենց համար զգացականութեան հարցը այնքան կարեւոր չէր, որքան այն, թէ Սարոյեան իր մուսաներուն հնազանդութիւն չէր սորվեցուցած: 1950-ական թուականներու կէսին Սարոյեանի նոր գրքերէն մէկուն տպագրութիւնը դադրած էր յատկանշական գրական պատահար ըլլալէ: «Այսպիսի բաներու մասին կարելի չէ մտահոգուիլ,– կ'ըսէ ան՝ ուսերը թօթուելով:– Կայ հարաւի գրողներու խմբակ, հրեայ գրողներու խմբակ, Նիւ Եորքի մտաւորական գրողներու խմբակ եւ, հաւանաբար, ուրիշներ ալ, զորս մոռցած եմ կամ չեմ լսած: Լաւ են: Իրականութեան մէջ լաւ գրողներ կան, որ մաս կը կազմեն անոնց: Բայց ես չեմ պատկանիր եւ չեմ ալ կրնար, նոյնիսկ եթէ ուզեմ: Երբ նոր սկսած էի գրելու, բարեկամս՝ Մայք Կոլտ եւ ուրիշներ միշտ կը ջանային, որ գրքերս աւելի ժողովրդական դարձնեմ: Պատերազմի ընթացքին Պօպ Նէրվուտ, որ պատերազմական տեղեկութիւններու գրասենեակին մէջ կ'աշխատէր, Լոնտոնի մէջ բռնեց զիս եւ ըսաւ. «Պի՛լ, դուն ճիշդ գերմանացի ժողովուրդին յարմար գրող ես»: Ան կ'ուզէր, որ բրոբականտայի գրքեր գրեմ պատերազմի մասին: Իրեն ըսի՝ ո՛չ, շնորհակալ եմ: Ուրիշ մարդիկ ուրիշ բաներ ուզած են ինձմէ, բայց ես միշտ անջատ անհատ մնացած եմ: Ես փոխուած եմ, բայց ոչ ուրիշներու համար: Երբ գրելու կը սկսիս, ան գոռոզութիւն է, բայց երբ կը հասնիս վերջաւորութեան, աւելի խոնարհութիւն է»:

Երբ կը խօսի, ամէն նիւթ դանդաղօրէն կը բանահիւսուի պատմութեան մը, մինչեւ որ ան կը զսպէ ինքզինք վերջին շեղումով մը: «Մենք՝ հայերս, մեծ պատմութիւն պատմողներ ենք: Իմ ազգականներուս յիշողութեան մէջ Արեւելքէն աշուղի մը ժամանումը մեծ դէպք էր: Երբ մարդիկ կը լսէին այդ մասին, կ'երթային երկաթուղիի կայարանը՝ դիմաւորելու զայն: Աշուղները կը պատմէին պատմութիւններ, որոնք կը տեւէին օրեր: Ես կը յիշեմ մեծ մայրերս, երկուքն ալ, երբ կը պատմէին պատմութիւններ, անոնք ժամեր կը տեւէին: Մէկ խօսքով, եթէ շատ կը խօսիմ, ատիկա ազգային գիծ մըն է»:

Սարոյեան կրնար դառնանալ տարիներու ընթացքին կամ որոշել, որ իր ժամանակը անցընէ առանձնացած: Ընդհակառակը, ան շարունակած է երթալ առաջ: Եթէ աշխարհը հեռացած է իրմէ, ան կը կարծէ, թէ իր խումբի գրողներու յաջողութիւնը, ինչպէս «Ռիչարտ Պրոդիկան» կամ «Լինքոլն» կեդրոնի յաջող վերաներկայացումը իր «Տը դայմ աֆ եուր լայֆ»ին, կրնայ հրահրել յեղաշրջում մը, որ ետ պիտի բերէ աշխարհը

գոնէ մասամբ: Բայց եթէ չբերէ, այդ ալ լաւ: Ան է, ինչ որ էր, ու քիչ մըն ալ աւելի:

Առնելով ձեռքին մէջ իր նոր հրատարակուած գիրքէն օրինակ մը, որ ֆրեզնոցի կին մը բերած է ստորագրել տալու, վայրկեան մը կը կենայ ու կ'ըսէ. «Ես կը հաւնիմ այս գիրքը: Իրականութեան մէջ կը հաւնիմ բոլոր գրքերս: Ատենը մէկ մէջտեղ կը հանեմ զանոնք ու կը կարդամ: Չէ՞ք գիտեր, որ իմ գրող ըլլալու որոշումիս պատճառներէն մէկն ալ այդ էր, որ շնորհքով կարդալիք բան մը ունենամ»:

«Արձագանգ», N 4, 1972

ԸՍԵՄ ՁԵԶԻ, ԹԷ ՃՕ ՄԷՆԻՔՍԸ ԻՍԿԱՊԷՍ Ո՛Վ Է

Բայց նախ քանի մը խօսք Մկրտիչ Մկրտիչեանին, Գրիգոր Օհանեանին եւ Տէնվըր Բէքինպահ անունով դատաւորի մը մասին:

«Թի. Վի. Կայտ»ի ընթերցողները թերեւս ուզեն գիտնալ, թէ յօդուածներէն ոմանք ինչպէ՞ս կը հասնին թերթին: Հոս՝ իմ Փարիզի տանս մէջ, Ֆրանսայի մէջ, թէեւ Փարիզ Թէքսասն ալ շատ կը սիրեմ, եւ եթէ երբեք հոն չես եղած, ծրագրէ առաջին առիթով հանդիպիլ: Հոս Ֆրեզնոյի հասցէէս վերաղրկուած նամակ մը ունիմ, որ այսպէս կը սկսի. «Պիտի ուզէինք, որ մեզի համար կտոր մը գրես, եթէ փափաքիս: Մայք Քոնըրզը՝ Մէնիքսի աստղը, նախկին ֆրեզնոցի մըն է, ու նաեւ կը լսեմ, թէ հայկական ապրանք է»:

«Թի.Վի. Կայտ»ի խմբագիրներէն մէկուն կողմէ է:

Նախ եւ առաջ ֆրեզնոցի մակդիրը ընդունելի չէ:

1916-1919, երբ ես «Իվնինկ Հէրըլտ» թերթը կը ծախէի եւ Մայք Քոնըրզ տակաւին ծնած չէր, իր հայրը՝ Գրի-



գոր Օհանեանը, որ փաստաբան մըն էր եւ «Պէնք աֆ Իթըլի» շէնքին մէջ, որ 1917-ի ուշ ամրան բացուեցաւ, գրասենեակ մը ունէր, յաճախ իմ անկիւնէս կ'անցնէր դէպի դատարան իր ճամբուն վրայ՝ անկարգութեան ուրիշ դատ մը եւս պաշտպանելու համար, որ շատ յաճախ ապօրէն խմիչքի զտիչ մեքենայ մը ունենալու եւ զայն գործածելու պարագան էր – կրակի ջուր – չամիչէ պատրաստուած եւ շատ յարմարօրէն «Ռախի» կոչուած, քանի այս է այս խմիչքին անունը:

Հողագործ մը, որ կը սիրէր խմել իր ընկերներուն հետ նարտ կամ թուղթ խաղացած ատենը – թաւլի եւ սկէմպիլ – ձմրան ընթացքին ինքն իր խմիչքը կ'արտադրէր, քանի որ հում նիւթերը ունէր եւ պարզ մեքենաները արտադրութեան համար: Եւ ան երբեք բաւականաչափ անգլերէն չէր գիտեր, գիտնալու համար թէ որոշ Վոլսդէտ (1919-ի ալքոլի արգիլման օրէնք Volstead) մը կար, որ ամբողջ երկիրը տակնուվրայ ըրած էր, շրջուած Կիներու ազատագրութեան պէս շարժումով մը, ձեւով մը չազատագրութիւն կիներու եւ էրիկմարդոց, քուէարկուած եւ օրինաւոր Արգելական հրահանգ կոչուած (prohibition), որ իր կարգին ամերիկեան կեանքէն ներս մտցուց իսկական Շիքակոն իսկական Էլ Քափոնը, իսկական վատահամբաւ գինետունը, իսկական գաղտագողի ոգելից ըմպելի ծախողը եւ կեղծ «ճին»ը, որ վայելուչ մարդոց խմած ամէնէն ժողովրդական խմիչքն էր Արգելական հրահանգի շրջանին:

Եւ այս հողագործը հազիւ թէ կարելի էր զսպել սպանելէ ներքին տուրքերու ութ ներկայացուցիչները, որոնք իրենց կացիններով կ'իջնէին իր զտիչ մեքենային վրայ եւ կը փշրէին իր տակառները, որոնց մէջ խմիչքը սկսած էր բարկնալ:

Հողագործը բանտ կը դրուէր, ու շուտով լուրը կը հասնէր Ճo Մէնիքսի հօրը՝ Գրիգոր Օհանեանին, թէ Մկրտիչ Մկրտիչեանը, Մուշի ազնուական Մկրտիչեան ընտանիքէն, քիչ մը Սասունի հարաւը, քիչ մը Պիթլիսի հիւսիսը, Վանէն քիչ մը արեւմուտք, քաղաքի բանտին մէջն էր եւ չէր գիտեր, թէ ինչո՞ւ:

Փաստաբանը կը բացատրէր հողագործին, որ թէեւ թոն մը աւելորդ չամիչ ունէր եւ լաւ զտիչ մը, արտօնուած չէր ինքն իր կրակի ջուրը արտադրելու՝ ձմեռը գործածելու համար իր տան մէջ եւ իր բարեկամներուն զուարճութեան համար, որոնք բոլորն ալ կը սիրէին անոր ջերմութիւնը, որովհետեւ գիտեն, թէ «Մահ ըսուած բան մը գոյութիւն ունի». հողագործներուն սիրելի բացատրութիւն մը:

Եւ օր մը դատարանին մէջ դատաւորը Տէվրը Բէքինպահն էր եւ կամ անոր հայրը եւ կամ անոր հօրեղբայրը, եւ 30 տարի ետք եկաւ Սէմը, որ շարժանկարի արտադրութեամբ զբաղեցաւ ու յետոյ կար Գրիգոր Օհանեանը՝ ծնեալ Խարբերդի մէջ եւ կամ Վանի եւ կամ Տիգրանակերտի եւ կամ *ուրիշ տեղ մը Հայաստանի մէջ եւ ոչ թէ Թուրքիոյ, ինչպէս որ գաղթականութեան գրասենեակի տգէտ պաշտօնեաները կը սիրեն գրել իրենց արխիւներուն մէջ* (ընդգծումը մեր կողմէ, «Արձագանգ») պաշտպանելու համար այգեպան Մկրտիչ Մկրտիչեանը:

Եւ եթէ կը ներէք, որ ըսեմ, կար նաեւ այս գրողը՝ հազիւ 11 տարեկան այն ժամանակ:

Դատաւորը խիստ էր:

Գաւառային դատախազը՝ Լավճոյ անհաւատալի անունով մարդ մը, (Ֆրեզնոն միշտ այս տեսակի տեղ մը եղած է) խիստ էր:

Բայց պաշտպան փաստաբանը տեղի չէր տուած իրենց խստութեան, իսկ պաշտպանեալը պատրաստ էր կոտրտելու ամէն ինչ՝ չորս օր եւ հինգ գիշեր բանտին մէջ անցընելէ ետք, առանց կաթիլ մը օղիի եւ առանց բաւարար բացատրութեան՝ այս այլանդակ վիճակին համար:

Դատավարութիւնը ճիշդ 1 վայրկեան տեւեց եւ յաւիտենապէս անմոռանալի է՝ պաշտպան փաստաբանի ըրած հաստատումներուն, հարցումներուն եւ պատասխաններուն համար:

– Նայեցէ՛ք այս մարդուն, Տէ՛ր դատաւոր,– ըսաւ,– Մկրտիչ Մկրտիչեան, 54 տարեկան, հայրը 4 տղոց եւ 2 աղջիկներու, տէրը 10 արտավար այգիներու: Անօրէն միջոցներով խմիչք շինողի մը կերպարանքը ունի՞: Խմիչք սպասարկողի մը կերպարանքը ունի՞: Կէսկսթլրի մը կերպարանքը ունի՞: Յանցապարտի մը կերպարանքը ունի՞: Ո՛չ,

Տէ՛ր դատաւոր, որովհետեւ հողագործ մըն է: Տուրքի պաշտօնեաները իրենց պարտականութիւնը ըրին: Իմ պարտականութիւնս չէ ըսել, որ անոնք անխելքօրէն վարուեցան եւ իրենց հրամանները առին շարժանկարներէն՝ Լիպլրթի շարժանկարի սրահէն ներս: Ութ հոգի եկան Մկրտիչ Մկրտիչեանին քով եւ փճացուցին իր զտիչ մեքենան եւ ձմրան խմիչքի պաշարը թափեցին: Քաջ մարդիկ, որոնք նստած են հոս, պատրաստ են վկայելու, թէ պաշտպանեալը հանդարտեցնելը դիւրին չէր: Հիմա կը խնդրեմ, որ իրենց նայիք, Տէ՛ր դատաւոր: Անոնք 10 արտավարի տէր այգեպաններո՞ւ կը նմանին, թէ աւելի շարժանկարի Լոն Չարնիին:

– Կ'առարկեմ,– ըսաւ գաւառային դատախազը՝ Լավճոյ:

Եւ դատաւոր Բէքինպահ ըսաւ.

– Իրաւունք ունիս, պաշտպան փաստաբան, հաճիս մտքերդ օրէնքին վրայ կեդրոնացուր եւ բանաստեղծութենէն հրաժարիր:

– Կ'ուզեմ, որ այս մարդը տուն ղրկուի,– ըսաւ Գրիգոր Օհանեան:

Եւ ծերուկ Տէնվըր Բէքինպահ ըսաւ մեղմօրէն.

– Ձինք տուն պիտի ղրկեմ արդէն, բայց թոյլ տանք, որ գաւառային դատախազն ալ իր ըսելիքը ըսէ, այնպէս չէ՞:

Այս ձեւով է, որ այս գրողը սկսաւ հիանալ թէ՛ Օհանեան եւ թէ՛ Բէքինպահ գերդաստաններուն վրայ եւ անգամ մըն ալ չլսեց Լավճոյներուն մասին, թէեւ անհաւանական չէ, որ Բասատինա փոխադրուած են եւ հարստացած:

«Իվնինկ Հէրըլտ»ին մէջ Ֆրեզնոյի բնակիչներուն կ'ակնարկուէր, որպէս ֆրեզնոցիներ: Ասիկա անընդունելի էր այն ատեն եւ անընդունելի է հիմա: Երբեմն թէ՛ փափաքելի եւ թէ՛ կարեւոր է 2 կամ 3 բառեր գործածել փոխանակ մէկ «Ո՛չ» բառի՝ ֆրեզնոցիի նման:

Գալով Ֆրեզնօ քաղաքին նախկին բնակիչ մը ըլլալուն, այդ ալ ճիշդ չէ, Ճօ Մէնիքս, Մայք Քոնըրզ եւ Գրիգոր Օհանեան նոյնքան Ֆրեզնոյի նախկին բնակիչներ չեն, որքան ես՝ այս վայրկեանիս Փարիզ ըլլալով:

Պարզապէս պատահար է, որ Ֆրեզնոյի մէջ չեմ, այդ է միայն, ինչպէս որ Ճօ-Մայք-Գրիգոր ալ չէ, որովհետեւ շաբաթը հինգ օր չարաչար կ'աշխատի իր շատ նշանաւոր հեռատեսիլի շարքին, որ աշխարհի բոլոր կողմերը կը ցուցադրուի՝ քանի մը օղակ եւս աւելցնելու:

Ինչո՞ւ:

Որովհետեւ Ճօ Մէնիքսը իրականութեան մէջ Մկրտիչ Մկրտիչեանն է՝ այգեպանը:

Ճօ Մէնիքս, այդ շարքին մէջ քանի մը անգամ որպէս Ճօ Մէնիքս խօսելով, ցոյց տուած է, թէ ինք հայ է, եւ առնուազն մէկ անգամ հայկական հետաքրքրական բառերու փունջ մը փոխանակեց իր հին բարեկամին եւ հօրեղբօրորդիին՝ Սիփան Ռոստոմ Պաղտասարեանին հետ. այսպիսով բաւական թարմացուցիչ եւ շփոթ վիճակ մը կ'ունենանք: Շարքին արտադրիչը, հաւանաբար հաճելի դառնալու համար Մայք Քոնըրզին, թոյլ տուած է, որ Մէնիքսը հայացնէ, բայց ինչո՞ւ ոչ:

Ինչպէս որ հին ասացուածքը կ'ըսէ, ամէն մարդ բան մը պէտք է ըլլայ, եւ Ամերիկայի մէջ մօտաւորապէս 22 հոգի մնացած է, որ հայու, հրեայի, սեւամորթի, հնդիկի, մէքսիքացիի կամ անսխալականօրէն անկլօ-սաքսոնի երեւոյթը ունի:

Մէնիքս շատ գեղեցիկ քարտուղարուհի մը ունի թէ՛ ներքնապէս եւ թէ՛ արտաքնապէս: Արդէն նշուած է, որ այս տաղանդաւոր երիտասարդ կինը առաջին սեւամորթ կիներէն մէկն է, որ կարեւոր դեր մը ունի հեռատեսիլի շարքի մը մէջ քանի տարիէ ի վեր, հիմա՝ վեց:

Ամէն մարդ իրարու կը նմանի ոչ թէ որովհետեւ հնոցը լաւ կ'աշխատի, այլ որովհետեւ սնոպիզմը չ'աշխատիր:

Ան, որ տաղանդ ունի, տաղանդ ունի. ան, որ տաղանդ չունի, այդ պատճառով որեւէ ձեւով չի դասաւորուիր եւ իր տան մէջ ուրիշներու հետ ապահով է:

Եւ այդ հարցը այդպէսով կը փակուի:

Ասկէ 40 տարի առաջ Ֆրեզնոյի մէջ «Քալիֆորնիա» պանդոկին մէջ քրուազէ քոնիակ կը խմէի, գաւաթը կէս տոլարի, երբ Ճօ Մէնիքսի հայրը՝ Գրիգոր Օհանեանը, եկաւ եւ քովս նստաւ եւ սպասեակ Կրոկորդիէն խմիչք մը ուզեց, առաւ փրփուրով ծածկուած երկար գաւաթը եւ պարպեց ճիշդ այն ժամանակ, որ ես իմ քոնիակս վերջացուցած էի եւ գաւաթս երկարած ուրիշի մը համար, զոր Կրոկորդին լեցուց: Ասոր վրայ հողագործներու եւ ուրիշ անմեղներու պաշտպանը երկնցուց իր գարեջուրի գաւաթը եւ հայերէնով ըսաւ

– Պուտ մը հոստեղ լից:

Եւ ի պատիւ մեր բոլորին հաւանաբար, Կրոկորդին դանդաղօրէն քիչ մը քոնիակ լեցուց Գրիգոր Օհանեանին խոշոր գարեջուրի գաւաթին մէջ:

Ֆրեզնոցի՞: Ինչպէ՞ս պիտի դասաւորես մարդ մը, որուն համբաւը Մկրտիչ Մկրտիչեանի (որ հիմա մահացած է) այգիէն անդին չէ անցած:

Նախկին մարդասէ՞ր մը կամ ի՞նչ:

Ըսեմ ձեզի, թէ Ճօ Մէնիքսը իրապէս ո՞վ է:

Ան Գրիգոր Օհանեանին ժպտացող տղան է եւ շատ հպարտ իր հօրմով: ■

ՈՒԻԼԵԸՄ ՍԱՐՈՅԵԱՆ
«Թի. Վի. Կայտ» 13 յուլիս, 1974
«Արձագանգ», N 6-7, 1974

Նյութերի թարգմանությունը՝
Էլիզ Հասըրճեան-Շարապիանեանի

Սոս Սարգսեան. պատգամախօսը...

Մովսէս Ծիրանի (Հերկելեան)
Արվեստաբանութեան դոկտոր

Ասեր ընթերցողներէն ով չի ճանչնար «*Հայ Բեմարուեստի Նահապետին*», սակայն քիչեր, շատ քիչեր միայն բախտն ու առիթը ունեցած են վայելելու անոր մտերմութիւնն ու իր հետ կիսելու կեանքի տաք ու պաղ օրերը... Անձնապէս ինքզինքս բախտաւոր կը համարեմ անոր համար, որ ոչ միայն այդ քիչերէն մէկն եմ, այլ նաեւ Սոս Սարգսեանը եղած է գաղափարակից գործընկերս, որուն մասին այնքան շատ յուշեր ունիմ, որ կարելի է նոյնիսկ առանձին գիրքի վերածել զանոնք...

Թէեւ Սոսի մասին բազմիցս գրած ու խօսած եմ, սակայն այս անգամ պիտի փորձեմ ներկայացնել զինք (*թէկուզ կրկնութեան գնով*) իբրեւ գլխագիր Մարդ եւ Գլխագիր Հայ... Իբրեւ՝ Պատգամախօս, որովհետեւ անոր իւրաքանչիւր բաժակաճառ, իւրաքանչիւր խօսք պատգամ մը կը պարունակէր իր մէջ...:

Երեւան, 1980, Աշուն

Այդ տարին Սարգիս Կիրակոսեանը եկած էր Հայաստան յատուկ առաքելութեամբ: Ես «պարտականութիւն» ունէի զինք ծանօթացնելու գրողներու, արուեստագէտներու եւ առհասարակ կարեւոր անձնաւորութիւններու, որոնցմէ շատերու հետ հարցազրոյցներ ձայնագրեց...: Այդ օրերուն Սարգիսը սիրահարուած էր ոմն Սիլվայի, որուն նուիրած էր բանաստեղծութիւն մը, որ խորքին մէջ, թէ յաջող էր և թէ բովանդակալից: Ան տկարութիւնը ունէր այդ բանաստեղծութիւնը ընթերցելու ամէն տեղ: Նոյնիսկ երբ օր մը երկսեռ խումբով որսի կ'երթայինք Սեւանայ լիճի կողմերը, Սարգիսը «Վանին» մէջ ընթերցեց այն, որ թէեւ կրկին լսելը այնքան ալ տհաճ չէր, սակայն ճանապարհի խորտուբորտ ըլլալուն հետեւանքով բառերը յստակ չէին հասկցուեր, ու տաղտկալի կը թուէր ըլլալ ... յատկապէս Վարուժան Խտրշեանին:

Ուրեմն.

դերասան Ալիք Խաչատրեանի տիկնոջ՝ դերասանուհի Ալիս Կապլանջեանի ծննդեան տարեդարձն էր: Ներկայ էին նաեւ այլ դերասան դերասանուհիներ ու մտաւորականներ: Թէեւ իրենց բնակարանը տարողութեամբ համեստ էր, սակայն սեղանը բաւականին մեծ էր ու ճոխ: Երբ կենաց խմելու հերթը Սարգիսին եկաւ, մեր վաւերական սեղանապետը՝ Սոսը գնահատելէ ետք անոր տարած խմբագրական ու առհասարակ մշակութային աշխատանքները, անդրադարձաւ նաեւ Սիլվային նուիրուած բանաստեղծութեան, զոր մինչ այդ ինք եւս քանի մը անգամ լսելու առիթը ունեցած էր: Երբ խօսք տրուեցաւ Սարգիսին, ան ձեռքը տարաւ ետեւի գրպանը... Վարուժանը աչքով-ունքով հասկցուց որ արգիլեմ: Ես որ Սարգիսի քովի աթոռը կը զբաղեցնէի, անմիջապէս ձեռքը բռնեցի ու ցած ձայնով ըսի «Ո՛չ... տեղը չէ»: Սարգիսը կամաց մը ետ սահեցուց բանաստեղծութիւնը եւ ոտքի ելաւ...: Սոսը նշմարելէ ետք այս բոլորը, ըսաւ.

- *Սագիս ջան, մի հրաշալի բանաստեղծութիւն ունես սիրոյ մասին: Խնդրում եմ ընթերցես, որպէս զի ներկաները եւս իմանան թէ ինչ տաղանդաւոր բանաստեղծ ունի Պէյրութը:*

Սարգիսը յաղթական հայեացք մը նետելէ ետք վրաս, այս անգամ անմիջական ու հաղորդական առոգանութեամբ կարդաց, աւելի ճիշդը ասմունքեց Սիլվային նուիրուած բանաստեղծութիւնը ու արժանացաւ բուռն ծափահարութիւններու:

Շատ չանցած երբ ուրիշ օր մը, երեքս առանձին էինք Վարուժանի «Բաղրամեան» փողոցի վրայի բնակարանը, Սոսը յանդիմանեց մեզ, մեր անմարդկային վարմունքին համար...: (Իբրեւ երէց եղբայր ու հեղինակութիւն ան այդ իրաւունքը ունէր... մեր մէջ): Վարուժանը փորձեց առարկել).

- *Բայց... «եավրում» հազար անգամ եղաւ որ կը կարդայ նոյն բանը...«գլուխ կը շինէ» կոր...*

Սոսին պատասխանը.

- *Նախընտրելի է որ քանի մը րոպէի համար մեր բոլորիս «գլուխը շինուի», քան թէ Սարգիսի նման զգայուն բանաստեղծի մը սիրտը կոտրուի...նա նոր է սիրահարուել: Չէք տեսնում ինչ ապրումով ու նուիրումով է կարդում...:*

Ես սկիզբէն խոհեմաբար լռած էի, Վարուժանն ալ լռեց ու հարցը փակուեցաւ յօգուտ Հայ բանաստեղծի

մը մարդկային անեղծ զգացումներուն...:

Սոսը այդպէս էր: Խիստ մարդկային ու բարի ըլլալով հանդերձ ան իր մարդկային վերաբերմունքը երբեք չէր կորսնցներ, որեւէ առիթի եւ որեւէ արժանաւոր մարդու պարագային: Մարդկային ու նաեւ ազգային փոխյարաբերութիւններու մէջ, Սոսը ոչ միայն խստապահանջ էր, այլ նաեւ երբեմն նոյնիսկ անողոք, յատկապէս իր մտերիմներու հանդէպ...

Ուրիշ օր մը, դարձեալ երեքով նոյն տեղն էինք, այն տարբերութեամբ որ, այդ շաբաթ լորամարգի յաջող որս ըրած էինք և հիւրեր պիտի ունենայինք: Մարտիկը գացած էր բանջարեղէնն ու ջրեղէնը ապահովելու, իսկ դուրսը՝ Ժանոն կրակը կը պատրաստէր: Յանկարծ Սոսի դուստրը՝ Անուշիկը ժամանակէն առաջ ներս մտաւ: Ան իսկապէս անունին տէրն էր թէ արտաքինով, թէ ներքին հմայքով, եւ թէ իր բարեհամբոյր ու մարդամօտ բնաւորութեամբ: Երբեմն ինք եւս ներկայ կ'ըլլար մեր հաւաքներուն, արժանանալով՝ բոլորիս համակրանքին ու յարգանքին: Ձերմօրէն ընդունելէ ետք զինք, ան հօրը կողքին նստաւ ու գլուխը յենեց անոր ուսին: Յոգնութենէ աւելի՝ յուզուած կը թուէր ըլլալ: Բնականաբար օղի կար սեղանին: Սոսը Անուշիկի բաժակը եւս լեցնելէ ետք, առանց բան մը հարցնելու, գրկեց զինք խանդաղատանքով ու մեր ներկայութեան ըսաւ.

- Նախքան մեր հիւրերուն գալը պէտք է որ մեր մայրերի կենացը խմենք, որովհետեւ եթէ կնոջ մը համար ամուսնանալը պայման չէ, ապա մայրանալը ոչ միայն պայման է, այլեւ անհրաժեշտութիւն... յատկապէս՝ հայուհիներու պարագային: Ամուսնացիր, երեխաներ ծնիր և եթէ չկարողանաս ամուսնուդ հետ «յոլա գնալ», բաժանուիր... բայց մայրանալուց յետոյ միայն: Դա ամօթ չէ... Ամօթն ու վատը կեղծ բարոյականութեան զոհ լինելն է...:

Հայր ու աղջիկ զիրար լաւ կը հասկնային...: Հետագային այդպէս ալ ըրաւ Անուշիկը...: Սոսը այդպէս էր, ան ընկերային, ազգային ու մարդկային հարցերը ընդելուզելով իրարու, կրնար քանի մը խնդիր լուծել... միաժամանակ:

Եղէգնաձոր,1980, Աշուն:

Կը յիշեմ Նոյեմբեր 14-ին էր, Մուշեղ Գալշոյանի հետ պատահած անհեթեթ արկածին նոյն օրը: Համաձայն նախապէս մեր պայմանաւորուածութեան, այդ օր Մուշեղը եւս մեզ հետ պիտի գար, սակայն, անտրամաբանական պարագաներու բերումով, եղաւ այն ինչ որ պատահեցաւ անսպասելիօրէն ու անշուշտ... խիստ ցաւալի...: Այս մէկը ուրիշ պատմութիւն է... գրած եմ արդէն... անցնինք:

Շրջանի որսորդապետ՝ Սամուէլի հրաւէրով ու կազմակերպութեամբ Եղէգնաձոր մեկնած էինք որսի՝ Վարուժան Խտրշեանի, Մարտիկ Պոյաճեանի եւ Պօղոս Գասապեանի հետ, մեր հետն էին նաև Սոս Սարգսեանն ու Ռազմիկ Դաւոյեանը:

Գեղանկարիչ՝ Բագրատ Գրիգորեանը, որուն ազգականն էր Սամուէլը, տեղեկացուցած էր թէ անոր



Մովսես Հերկելյան, Սոս Սարգսեան,
«Ձորի Միրոն» ֆիլմի նկարահանման օրերուն,
Ապարան, 1978

պապը եղած էր Նժդեհի զինուորներէն, որուն համար չափազանց հպարտ էր...: Հոն հասնելէն ետք երբ տղոց ներկայութեան հարցուցի իր մասին, ան ըսաւ.

- Այո՛, դա ճիշդ է, կարող էք տեսնել ու նաեւ զրուցել հետը: Նա ներսումն է եւ գիտի որ դուք գալու էք, սակայն խնդրում եմ իր ներկայութեան այդ մասին չիսօսէք, որովհետեւ նա վստահութիւն չունի մեր սերունդի եւ յատկապէս՝ Սիփիւռքահայ ուսանողների վրայ...:

Թէեւ հաճելի չէր նման բան լսելը, սակայն բոլորս՝ ներառեալ Ռազմիկն ու Սոսը, խոստացանք որ նկատի կ'առնենք այդ «փափուկ» հանգամանքը...:

(Ճիշդ հասկցուելու համար, հոս հարկաւոր է փակագիծ մը բանալ: Այդ օր մենք որսի քողի տակ, Սոսի առաջնորդութեամբ եկած էինք նաեւ ստուգելու, թէ իրապէս ազերիները նոր գիւղ մը հիմնելու համար, հովիւ մը եւս (իր պարագաներով), ուղարկած էին Եղէգնաձոր...: Այդ տարիներուն ազերիները ծրագրուած ձեւով կեցութեան վայրեր, կամ ուղղակի գիւղեր կը հիմնէին Ջանգեզուրի մէջ, շղթայի նման Ազրպէյճանը Նախիջեւանին կապելու հեռանկարով...: Սամուէլի ցուցմունքներով գացինք գտանք այդ վայրը, ուր արդէն իսկ տասնեակէ մը աւելի ազերի քոչուոր ընտանիքներ հաստատուած էին...: Երբ Երեւան վերադարձանք մեր ստացած տեղեկութիւնները փոխանցեցինք «Առ որ Անկ է»: Այս մէկը եւս ուրիշ պատմութիւն է, որուն մասին այլ առիթով կը գրեմ):

Մեր որսը յաջող էր: Օդը զով՝ ու հաճելի: Սեղանը պատրաստուեցաւ Սամուէլենց բակը, գետնափոր թոնիրի կողքին, որ մեր՝ ու յատկապէս Վարուժանի յա-

Մովսէս Հերկելեան և Սոս Սարգսեան, Երևան 1995

տուկ ուշադրութիւնը գրաւեց...: Հրաւիրուած էին նաեւ քանի մը հարեւաններ ու մերձաւորներ:

Թէև ջերմութեամբ ընդունուեցանք ներկաներուն, յատկապէս Սամուէլ Պապին կողմէ, սակայն պաշտօնական ու պրկուած վիճակ մը կը տիրէր սեղանի շուրջ: «*Ինչ որ տեղ ինչ որ բան սխալ է*» պիտի ըսէր քանքարաւոր գրողը՝ Սարոյեան:

Ռազմիկը, որ առաջին անգամն էր որ որսի կու գար մեզ հետ, ընթացքին խօսք առաւ եւ պատմելէ ետք, թէ ինք ինչպէս այդ օր կաքաւ մը որսաց ու խղճահարուեցաւ, յայտարարեց.

- Մի անգամ էլ ես թռչունի վրայ չեմ կրակի:

Սոսը առանց յապաղելու ոտքի ելաւ ու ըսաւ.

- Ռազմիկ ջան: Ես հասկանում եմ քո մարդկային վերաբերմունքը կենդանիների հանդէպ, սակայն մինչեւ այն ատեն որ մենք շրջապատուած ենք Թուրքերի նման վայրագ թշնամիներով, հայ մարդը կրակել պիտի իմանայ...:

Ու պահ մը լռելէ ետք, աւելցուց.

*- Նկատի առէք որ «**Որսորդը պատրաստ զինուոր է...** »:*

Սոսի պատասխանը ջերմ ընդունելութիւն գտաւ ներկաներուն, յատկապէս Սամուէլ Պապին մօտ, որ տանուտէրի իրաւունքով, բազմած էր սեղանի աջ շարքի կեդրոնը Սոսի կողքին: Ան պատկառելի արտաքինով, ինքնավստահ ու տիրական ներկայութիւն էր, որ արժանացած կը թուէր ըլլալ գիւղացիներու համակրանքին ու ակնածանքին: Սոսը պահը յարմար նկատելով շարունակեց.

*- Հիմա առաջարկելու եմ մի բացառիկ կենաց: Եթէ չլինէր Նժդեհը, Միւսիքը չէր լինի, սակայն եթէ չլինէին Նժդեհի զինուորները, ոչ Նժդեհը կը լինէր եւ ոչ ալ Զանգեզուրը: Այսօր մենք այստեղ ենք շնորհիւ Նժդեհին ու իր քաջարի կամաւորներին, որոնցից ոմանք, նրանց երեխաներն ու թոռները վստահաբար մէր մէջ են գտնուում...: Նժդեհն ասել է որ «**Զանգեզուրը Հայաստանի ողնաշարն է**»: Առանց այս զանգեզուրեան ողնաշարի չի կարող Հայաստան գոյութիւն ունենալ: Ինքն ու իր զինուորները ապրում են մեր մէջ... ձեր մէջ...: Հայրենիքի «ողնաշարի» տէրը դուք էք, դուք էք պահելու այն: Ուրեմն՝ ... ուրեմն խմում ենք Նժդեհի ու իր զինուորների կենացը, թէ նրանց, ովքեր վերեւից հսկում են մեր վրայ ու յատկապէս նրանց՝ ովքեր մեր մէջ են այսօր այս պահին...:*

Ներկաները բնազդաբար ոտքի ելան ու հայեացքները ուղղուեցան դէպի տանուտէրը: Սոսը ցուցականօրէն գաւաթը խփելէ ետք անոր գաւաթին, ըսաւ.

- Այս կենացը հարկաւոր է ծաղկեցնել Նժդեհի երգով...:

Ու մենք ոտքի վրայ սկսանք. «*Արազի Ափին ծնած ընկեր...*»: Պարզուեցաւ որ ներկաները գրեթէ բոլորն ալ ծանօթ էին երգին: Սամուէլ Պապը եւս աշխուժօրէն կը մասնակցէր... ընթացքին, սակայն, աչքի տակով կը հետեւէր մեր երգեցողութեան... շատ հաւանաբար ստուգելու համար թէ մենք իսկապէս ո՞վքեր էինք...: Երգի աւարտին, ան անխօս համբուրեց Սոսի ճակատը... տեղէն ելաւ, դանդաղօրէն մօտեցաւ գետնափոր թոնիրին... բանալ տուաւ կափարիչը, գաւաթը բարձրացուց դէպի երկինք... ու ծիսական երկուղածութեամբ նոան գինին հեղեց թեժացած թոնիրին մէջ... դանդաղօրէն... յայտարարելով.

- Կենացդ Սպարապետ...:

Ապա մէկ առ մէկ «մեզ չորսիս» եւս ճակատներէն համբուրելէ ետք, Սամուէլ Պապը բարձրաձայն դիմեց Սամուէլին:

- Ապրես տղաս, «Հալալ» ընկերներ ունես...:

Ամէն ինչ հասկնալի էր...

Բնականաբար ազգային-յեղափոխական երգերը իրարու յաջորդեցին...: Չես գիտեր ե՞րբ եւ ի՞նչպէս Սամուէլենց բակը լեցուեցաւ գիւղացիներով ու խնճոյքը վերածուեցաւ ժողովրդական տօնի...:

Այս յուշերէն ոմանք ժամանակին պատմած եմ, սակայն այս հրատարակութեան կը յանձնեմ այս օրերուն, յատկապէս մեր երիտասարդ ընթերցողներու համար, որոնք «*Մեր ներկան են*»... առնուազն այդպէս պէտք է որ ըլլայ...

Այսպէս էր Սոսը: Անոր պատգամներէն շատեր, իր մահէն ետքն իսկ, այսօր՝ խիստ արթիւական կը հնչեն...:

Սոս Սարգսեանը չափազանց սիրուած էր ժողովուրդին կողմէ: Ո՛ւր որ յայտնուէր... տեղի կ'ունենային ինքնաբուխ ազգային տօնախմբութիւններ...: Ան գիտէր ո՞ւր, ե՞րբ եւ ի՞նչպէս արժանաւորներուն գնահատել, ժողովուրդի հայրենասիրական զգացումները խթանել ու... խանդավառութիւն ստեղծել...:

Ճանապարհ դեպի հավերժություն
(Դավիթ Գասպարյան, «Եղիշե Չարենցի գրական-քաղաքական աղերսները» մենագրությունը)

Նարինե Հովհաննիսյան
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Դավիթ Գասպարյանի «Եղիշե Չարենցի գրական-քաղաքական աղերսները» գիրքը չարենցագիտության մեծարժեք ուսումնասիրություն է, լույս է տեսել 2026 թ. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ և Համազգային հայ կրթական և մշակութային միության հովանավորությամբ:

Գասպարյանի հեղինակությամբ և աշխատասիրությամբ 1970-ականներից առ այսօր լույս են տեսել չարենցագիտության մեջ նոր շրջափուլ նշանավորող մի քանի մենագրություն, բանաստեղծի անտիպ երկերի երկու գիրք, Չարենցի մասին հուշերի երկու հատոր:

Չարենցի անվան հետ կապված գրապատմական անսպառ հետաքրքրությունը, որ բնորոշ է Դավիթ Գասպարյանին, պայմանավորված է Չարենցի անհատական բարդ ու հարուստ ներաշխարհով և դեռևս ամբողջացող ստեղծագործությամբ:

Այս ուսումնասիրության առանցքը Չարենցի բազմաշերտ կապերն են ժամանակի պատմաքաղաքական և գրական-մշակութային իրականության հետ: Կենսագրական և ստեղծագործական նոր հանգամանքների ի հայտ բերումով՝ վերագնահատվում է Չարենցի պատմաքաղաքական կերպարը՝ որպես ժամանակի հայելային դիմապատկեր, ուր անհատն ու պատմությունը, գրականությունն ու քաղաքականությունը ոչ միայն մի են՝ մարմին ու ոգի, այլև բախվում են իրար, և անհատի կործանումը ժամանակի կողմից դառնում է նրա բարոյական հաղթանակի վերահաստատումը: Այլ կերպ ասած՝ ուսումնասիրության մեջ գրական քննադատությունն օրինաչափորեն միախառնված է քաղաքական պատմագիտությանը, որովհետև միմիայն այդ ճանապարհով կարող էր ամբողջանալ գրականության և ժամանակի օրգանական կապը:

Ուսումնասիրության 21 գլուխներում ամբողջացվում է Չարենց գերմարդու կերպարը: Հարուստ փաստերով և նուրբ, խոր ու ընդգրկուն վերլուծություններով նորովի ներկայացվում են Չարենցի կյանքի ու գործունեության, թվում է թե ծանոթ, բայց նորահայտ փաստերի լույսի ներքո ըստ ամենայնի անծանոթ իրողությունները:

Պատմության և անհատի ճանապարհի միասնությունը, որ ամբողջ գրքի փիլիսոփայական, պատմագիտական և գրականագիտական հիմնադրույթն է, բացում է և՛ 20-րդ դարի պատմության բարդ ու հակասական շերտերը, և՛ Չարենցի անհատական աշխարհի փակ էջերը: Սա այն դեպքն է, երբ անհատի կենսագրությունն անդրադարձնում է ժողովրդի պատմությունը, իսկ պատմությունը՝ առաջնորդում է

անհատի ուղին: Ազգային ճակատագիրը ձևավորեց Չարենցին, իսկ Չարենցն իր ստեղծագործությամբ վերափոխվեց ժողովրդի գիտակցությունը, պատմաքաղաքական աշխարհայացքը: Առանց ժամանակի պատմաքաղաքական իրադարձությունների՝ չէր լինի ամբողջական Չարենցը, և առանց Չարենցի՝ հայոց պատմության 20-րդ դարի գեղարվեստական ընկալումը կմնար թերի:

Այսպիսով՝ աշխատության տրամաբանական եզրակացությունը Չարենց գերմարդու մտահանգումն է, որ չարենցագիտության զարգացման փիլիսոփայական նոր մտայնություն է:

Ուսումնասիրությունը գնահատելի է նաև որպես պատմագիրք՝ 20-րդ դարի նշանավոր դեմքերով ու իրադարձություններով, որոնք հեղինակի հայացքով բացահայտվում են լուսապատկերային իսկությամբ, պատմության ձայնի կենդանի թրթիռներով: Պատմության կենտրոնում Չարենցն է՝ ժամանակի գլխավոր հերոսներից մեկը՝ որպես գաղափարի կրող և պայքարի մասնակից՝ հայրենիքի կամավոր զինվոր, հեղափոխական, Հայ Յեղափոխական Դաշնակցության կառավարության պաշտոնյա, կոմունիստ, հետո նաև հակադաշնակցական ու հակակոմունիստ, բայց մշտապես ազգային գործիչ, Ստալինյան բռնատի-

Դավիթ Գասպարյան

ության և բոլշևիզմի զոհ: Այս և ուրիշ ընդգրկումներով վերծանվում է Չարենցի կերպարը՝ որպես ազգային հավաքական հանճարի մարմնացում:

Բանաստեղծի քաղաքական համակրանքների առնչությամբ հեղինակը գրում է. «Երբեք չի եղել այնպես, որ անկախ երբեմնակի սուր առճակատումներից, խորքում իսկական դաշնակցականը և իսկական կոմունիստը նույնը չերազեին՝ ապահով և ամուր հայրենիք» (էջ 616-617), և սա վերահաստատում է այն պարզ ճշմարտությունը, որ Չարենցի միակ «կուսակցությունը» հայրենիքն էր՝ ազատ, անկախ, միացյալ Հայաստանը, որի գաղափարական ուխտավորն էր, անձնուրաց զինվորը, նաև նահատակը: Աշխատության մեջ այս ամենը վերագնահատվում է փաստերից բխող դատողություններով՝ առանց ավելորդ զգացականության ու վերացականության. «Դժվարությունը,- գրում է գրականագետը,-փաստերի ամբողջությանը տիրապետելն ու համակարգի մեջ տեսնելն է, ինչն էլ եղել է այս ուսումնասիրության առաջադիր ծրագիրը» (էջ 618):

Ուսումնասիրության առաջին գլուխը՝ «Եղիշե Չարենցը՝ կամավորական», սկիզբն է անհատի և ժողովրդի համատեղ ճանապարհի, որ տանում է դեպի «Դանթեական առասպել» և «Ազգային երազ»: Պատմական իրողությունների զուսպ, բայց համապարփակ արձանագրությամբ երևան են բերվում ստեղծագործական նախադրյալներն ու նախատիպերը, նաև ազգային ներքին կյանքի հակասությունները, ինչպես՝ «Ազգային երազ» պոեմում Անդրանիկ - Դաշնակցություն հակադրությունն է՝ ի դեմս Լեգեոնի՝ Անդրանիկի, և Ահոյի՝ Ավետիս Ահարոնյանի:

Երկրորդ գլխում՝ «Եղիշե Չարենցը Առաջին հանրապետության տարիներին», ներկայացվում են առանցքային և փոխլրացնող հետաքրքրական փաստեր Հայաստանի առաջին հանրապետության պատմությունից՝ ընդգրկելով պետականության վերականգնումը, պատերազմները, հանրապետության անկումը, Հայաստանի խորհրդայնացումը, Փետրվարյան ապստամբությունը, Չարենցի գործունեությունն այդ տարիներին: Միանգամայն նոր ու հիմնավոր բացահայտումներով վերլուծվում են պատմական ժամանակի անդրադաձները «Սոմա», «Ամբոխները խելագարված», «Չարենց-Նամե» պոեմներում, ռադիոպոեմներում և այլ գործերում:

Հաջորդ գլուխներում համապատասխանաբար և բազմաճյուղ ներկայացվում են Չարենցի կապերը ժամանակի երևելի դեմքերի հետ՝ Վահան Տերյան, Հովհաննես Թումանյան, Ավետիս Ահարոնյան, Ատոմ Յարճանյան (Սիամանթո), Դանիել Վարուժան, Նիկոլ Աղբալյան, Արշակ Չոպանյան, Արմենուհի Տիգրանյան, Վարդգես Ահարոնյան, Հակոբ Օշական, Կոստան Զարյան, Ավետիք Իսահակյան, Վահան Նավասարդյան, Խմբապետ Շավարշ Բասենցյան, Ակսել Բակունց, Երվանդ Քոչար… Ամբողջ շարադրանքի ընթացքում ներկա են նաև այլ անուններ՝ Դեմիրճյան, Զորյան, Մահարի, Աբով, Դաշտենց, Արմեն, Վշտունի և ուրիշներ… Ահա այս մարդկային-մշակութային-քաղաքական բազմաշերտ շրջագծում բացահայտվում են շատ կարևոր հարցադրումներ, որոնք լիարժեք պատկերացում են ստեղծում ժամանակի և միջավայրի վերաբերյալ:

Տասներորդ գլուխը վերաբերում է «Երկիր Նայիրի» վեպի հայեցակարգին, ուր համատեղվում են պատմական ողբերգական իրադարձություններն ու բանաստեղծի հոգեբանական-գաղափարական տեղաշարժերը: Իսկ հայեցակարգային մտահանգումնե-

րից մեկը սա է. «Վեպը ռուս-թուրքական դաշինքին զոհաբերված և աստիճանական ոչնչացման դատապարտված Հայաստանի ողբերգությունն է՝ ընդհանուր առմամբ՝ հեգնանքի, իսկ տեղ-տեղ էլ անգամ խելագարության հասնող զավեշտի լեզվով…» (էջ 259):

Ինչպես բոլոր գլուխներում առհասարակ, այնպես էլ այստեղ, գլխավոր երկերը դիտարկվում են այլ գործերի հետ ունեցած պատմահոգեբանական համեմատություններով՝ արդյունքում ամբողջացնելով Չարենցի ստեղծագործական ճանապարհի լիարժեք պատկերը:

Ուսումնասիրության առանցքային հարցադրումներից է Չարենցը և Հայ Յեղափոխական Դաշնակցությունը թեման, որ առաջ է մղվում հետևյալ ուղղություններով՝ «Դաշնակցությունը «Էպիքական լուսաբաց» գրքում և «Լիրիքական անտրակտ» շարքում», «Դաշնակցությունը «Գիրք ճանապարհի» ժողովածուում», «Աշխարհայացքի ազգային հիմքերը և Դաշնակցության հիշատակումներն անտիպ երկերում (1935-1937)»: Արխիվային վավերագրերով բացահայտվում են Չարենցի վերաբերմունքի իրական ու գեղարվեստական շերտերը Դաշնակցության հանդեպ՝ երևան բերելով ժամանակի հրամայականների ներքո վաղանցուկ նահանջը և վերջնական հաստատուն դարձը՝ «Դաշնակցականներին» քաղաքական հեգնանքից մինչև «Մահվան տեսիլ» պոեմ և անտիպ երկերում փոխված հայացքը. «Դաշնակցության հետ նրա առնչությունները,- ընդհանրացնում է հեղինակը,- բազմակողմանի են ու անընդհատական, և դա՝ անկախ պատմաքաղաքական իրավիճակից, որովհետև խորհրդային տարիներին ևս, թեկուզև հալածական, բայց ամեն մի խոսքի ու հիշողության մեջ Դաշնակցության գաղափարական կենդանի անսկատ շունչը կար» (էջ 4):

Գրքի տրամաբանական ավարտը դեպի Աստված տանող մեծ ճանապարհն է. հենց այդպես էլ վերնագրված է նախավերջին՝ «Դեպի Աստված» գլուխը, որին պիտի հաջորդի խաչելություն-մահը, և Չարենցն ըստ ժամանակի պատկերացման ներկայանա որպես «քաղաքական մեղադրյալ՝ դաշնակցական, նացիոնալիստ, ժողովրդի թշնամի»:

«Դեպի Աստված» գլուխը ճանապարհի գրքի վերջին հանգրվանն է՝ այսպիսի ուշագրավ ընդհանրացումներով. ««Ես եմ ճանապարհը»,- Հովհաննես Ավետարանիչի բերանով ասվում է Տիրոջ խոսքը, որին Չարենցն արձագանքում է «Գիրք ճանապարհի» վերնագրված մի ամբողջ գրքով և դրան հաջորդող կյանքով ու կողմնորոշումով: Տիրոջ ճանապարհի որոնումն այդուհետև Չարենցի համար դարձավ ներքին ծրագիր և նրան տարավ դեպի Աստված, որին ասում էր Տեր… Նա մեկ թափանցում է աստվածաշնչյան մոտիվների մեջ՝ «Բանք ժողովողի», ոգեկոչում գաղափարներ ու կերպարներ, հավատաքննիչների վերադարձող միջնադարին ավելանում է նախնադարը՝ մարդ-կապիկը («Էկլեզիաստես»), մեկ խորանում հայ միջնադարի մեջ՝ Նարեկացի, և որպես Աստծո, դիմում նրան («Ինչպես հնում վկան այն՝ Նարեկացին»), մեկ ուրվագծում տառապանքի խաչը շալակած և Քրիստոսի պես Գողգոթա բարձրացող տանջահար կերպարներ՝ Գրիգոր Ծերենց («Երբ բարձրանում է նա վեր», «Մի ծեր վանական»), մեկ տրվում աղոթքների («Իմ լերան աղոթքը», «22.X. 1936», «Վերջին աղոթք»): … Չարենցի Քրիստոսը քողարկված է, ներսում է, աղոթքի պես գաղտնի. մի պահ ինքը դառնում է նրա կրկնօրինակ-նմանակը, որի ոչ միայն ձեռքերն ու ոտքերն են գամված խաչին, այլև ամբողջ մարմինն է մեխված քաղաքական իրականության խաչափայտին: … Ամբողջ մի կյանք ծանր փորձությունների միջով անցնելով, ընկնելով հաճախ և բարձրանալով նորից՝ իր խաչը շալակած գնաց Աստծուն ընդառաջ, սպունգով Հիսուսին մոտեցրած քացախի փոխարեն, Երևանի բանտում մեկուսացած, խմեց իր ձեռքով պատրաստած թեյի դառն ու թունդ թանձրուք, իսկ շուրթերին խաչված Փրկիչի նույն խոսքերն էին՝ «Տեր, մ'ի լքիր ինձ»: Եվ Տերը չլքեց: Ծնունդի ու Հայտնության բերկրանքը պարգևողը նրան շնորհեց նաև Հարության ու Վերածնունդի հրաշքը» (էջ 567-580):

Սա Դավիթ Գասպարյանի «Անառակ որդու վերադարձը» կտավն է՝ ըստ Չարենցի հոգևոր դարձի:

Աշխատությունը համալրված է նաև հավելվածներով, որոնք լրացուցիչ տեղեկություններ են հաղորդում հարցադրումների շրջանակում:

Ամփոփենք. Դավիթ Գասպարյանի «Եղիշե Չարենցի գրական-քաղաքական աղերսները» մենագրությունը հիրավի նոր խոսք է չարենցագիտության մեջ, որի հիմնական նորույթը բազմաթիվ նոր փաստերի ամուր տրամաբանությամբ ստեղծված Չարենց-պատմություն ճանապարհի համապատկերայնությունն է, ուր համակշիռ են պատմությունն ու գրականությունը, և փոխլրացված՝ ժամանակն ու անհատը՝ որպես և՛ առանձին հերոսներ, և՛ երկվորյակներ: ■

«Աստուած իմ, գոհարեղէնս»

Վրէժ-Արմէն
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Յաճախ թերթերու կտրօններ մէկ կողմ կը դնեմ առիթով մը անդրադառնալու համար անոնց: Գրասեղանիս տարբեր անկիւնները կը թիզուին անոնք՝ կարգի սպասելով: Կը մոռցուին ալ: Այս մէկն ալ անոնցմէ մէկն էր, որ յանկարծ վերյիշեցի ուրիշ բան որոնած ատենս: Վերեւի նոյն այդ վերնագրով, Ժան-Ֆրանսուա Նատօ կը գրէր Փարիզի Լուվրի թանգարանէն անցեալ տարի գոհարեղէնի կողոպուտին յարուցած աղմուկին մասին: Ճիշտ է, կ՚ըսէր ան, ուշագրաւ արարք մըն էր, եւ հասկնալի էր միջազգային մամուլի լայն անդրադարձը: Ի վերջոյ ամեն օր չի պատահիր կարճ պահու մը ընթացքին նման (նուազագոյնը 100 միլիոն տոլարի) գողութիւն, Լուվրի պէս կարեւոր հաստատութենէ մը: Սակայն, կը յարէր ան, իր յօդուածի առաջին իսկ պարբերութեան մէջ, որքան համեստ կը թուի այդ պոռթկացող միջադէպը այն աւարին բաղդատմամբ, որ աշխարհի ամենէն հարուստ տասը մարդիկը կ՚ունենան՝ իրենց հարստութիւնը բազմացնելով վայրկեանը մէկ միլիոն տոլարով:[1]

Նպատակս չէ այստեղ ներկայացնել յօդուածին բովանդակութիւնը, այլ խորհրդածել է անկէ մեկնելով, սակայն կ՚արժէ ցոյց տալ վերնագրին առնչութիւնը: Ան քաղուած է մեծ երգիծանկարիչ Հերժէի վերջին հատորէն՝ իր գլուխ գործոցէն,[2] ուր անուանի երգչուհին այդպէս կը ճչայ, երբ ելեկտրականութիւնը կը կտրուի ու մութին մէջ կը մնայ դղեակը, իսկ ինք իրար կ՚անցի՝ կասկածելով, թէ իր գոհարեղէնները պիտի գողցուին:

Այո՛, լրատուական միջոցներուն համար Լուվրի կողոպուտին նման յանդուգն քայլ մը իրապէս արծարծուելիք նիւթ էր, սակայն աշխարհ ամեն օր որքա՛ն աւելի մեծ կորուստներու կ՚ենթարկուի ու լրատուները կը մնան մունջ կամ հազիւ մրմունջ մը կը հանեն: Ասիկա անհերքելի իրողութիւն է թէ՛ մեզի համար, թէ՛ ալ համայն մարդկութեան: Միայն այս անցնող տարիներուն ինչքա՛ն նման ու բազմապատիկ աւելի ծանրակշիռ ոճիրներ գործուեցան, բայց չարժանացան, գրեթէ՛ չարժանացան այն հակազդեցութեան, որ գոհարեղէնի գողութիւնը յառաջացուց:

Մէկ մարդ անհատի կեանքը որքա՛ն աւելի կ՚արժէ քան «երգչուհիին ոսկիները», բայց ամեն տեղ ոճրագործներ ոչ թէ մէկ, ոչ թէ քանի մը, այլ հազարաւոր մահեր կը պատճառեն ու կը մնան անպատիժ: Պատերազմներ չեն դադրիր մրոտելէ մարդկութեան տարեգրութիւնը, մինչ ամբողջ հաւաքականութիւններ նուազագոյն ուսման կարելիութիւններէ կը զրկուին, տեսակաւոր հիւանդութիւններու զոհ կ՚երթան, սովի կը մատնուին, զանգուածաբար կը տարագրուին ու կը սրածուին՝ ցեղային մաքրագործումի ենթարկուելով, գիւղեր, աւաններ ու քաղաքներ հիմնայատակ կը դառնան, մինչդեռ այդ պատերազմներու նախապատրաստութեան համար իսկ ծախսուած նիւթականի մէկ տոկոսովն անգամ որքա՛ն կեանքեր կրնային փրկուիլ, որքա՛ն զրկանքներ ջնջուիլ: Բայց զինամթերքի ու զինական բոլոր միջոցներու արտադրութիւնը կը հարստացնէ մարդկութեան ամենէն ունեւոր չչինին չչին փոքրամասնութիւնը:

Սեփական շահու հետապնդումը կանգ չ՚առներ ո՛չ բնութեան ապականացման ու քանդումին առջեւ, ո՛չ մշակութային համամարդկային ժառանգութեան ոչնչացման առջեւ: Այդ կորսուող հարստութենէն մէկ մատեան, մէկ կոթող կրնայ մի քանի անգամ աւելի արժէք ունենալ քան Լուվրի գոհարեղէնները: Ընդվզո՞ղը ուր է, բողոքո՞ղը ով է, բողոքը լսո՞ղը...:

Կը շարունակուին ցեղասպանութիւնները: Ժողովուրդներ կը զրկուին իրենց հազարամեայ տարածքներէն, իրենց քաղաքակրթութեան ժառանգութենէն:

Մենք ականատեսը հանդիսացանք հայութեա՛ն իսկ հասցուած հարուածներուն, ջարդերուն, տեղահանութիւններուն, մեր պատմական յուշարձաններու քանդումներուն՝ աշխարհի անտարբեր հայեացքին ներքեւ:

Հազարաւոր զոհեր տուինք Սումգայիթի եղեռնին, Արցախի պաշտպանութեան մարտերուն, ապա ամբողջ հայկական տարածք մը դատարկուեցաւ: Բայց աշխարհ ուրիշ հարցերով զբաղած է: Կամ զբաղա՞ծ է, թէ պարզապէս հանդիսատես է:

Այս իրավիճակին մէջ ի՞նչ կրնանք ընել:

Թերեւս հարցումը շրջուած դրուելու է. ի՞նչ չենք կրնար չընել:

Ահա մեր մարտահրաւէրը, որ մերը չէ միայն:

Չենք կրնար լռել:

Չենք կրնար անտարբեր լսել այդ բոլորը, տեսնել այդ բոլորը, անցնիլ այդ բոլորին քովէն ու հեռանալ:

Չենք կրնար յուսահատիլ ու մեկուսանալ հաւաքական կեանքէն:

Չենք կրնար պարզապէս մենք մեր անհատական հարցերը հետապնդել, մեր սեփական հաճոյքները վայելել եւ անտեսել հաւաքական հարցերը, ինչու չէ, նաեւ հաւաքական «հաճոյքները», «շահերը»՝ պահանջնե՛ր:

Մեր ազգի ապագան մեզմէ կախում ունի: Մարդկութեան ապագան՝ նոյնպէս:

Հղումներ

[1] Jean-François Nadeau, Ciel, mes bijoux! Le Devoir, 2026-10-27
[2] Hergé, Les aventures de Tintin, Les bijoux de la Castafiore

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՅ Դաշնակցության համար ազգը՝ իբրև պատմական-մշակութային, լեզվական և ընկերային-քաղաքական ուրույն ամբողջություն, հիմնական արժեք է և համամարդկային զարգացման ու հոգեմտավոր բազմակողմանի հարստացման էական գործոն:

Ազգը մարդկային ընկերության զարգացման ամենակենսունակ միջավայրն է, ուր անհատը ձեռք է բերում հոգեմտավոր բարգավաճման լայն հնարավորություն, լիակատար հաղորդակցության և սեփական կարողությունների զարգացման առավելագույն կարելիություն:

Մերժելի է, սակայն, ազգային բացառիկության ամեն գաղափար և ազգայնամոլության ամեն երևույթ՝ իբրև մարդկային ընկերության բնականոն զարգացումն արգելակող դրսևորումներ:

Ամեն ազգի բնական և անկապտելի իրավունքը կազմում է սեփական հայրենիքը՝ իր պատմաաշխարհագրական բնօրրանը, իբրև ինքնուրույն գոյատևման, առաջադիմության և ստեղծագործության կենսական ազդակ:

Իր հայրենի տարածքի վրա յուրաքանչյուր ազգի գոյատևման երաշխիքը անկախ և իրավական պետականությունն է: Այն մարմնավորում է ազգի քաղաքական կամքը, պաշտպանում նրա շահերը և ապահովում նրա անվտանգությունն ու ինքնուրույն զարգացումը: Անկախ պետականությունը նաև ընկերության բնականոն առաջընթացի նախապայմանն է: Քաղաքական որևէ վարչակարգի և իշխանության պարտադրումը ազգերի ինքնորոշման սկզբունքի կոպիտ խախտում է, բռնատիրություն է և ըստ ամենայնի՝ մերժելի: Ինքնորոշման իրավունքն անժամանցելի է և ի զորու կլինի նույնիսկ այն ժամանակ, երբ բռնագաղթով կամ ցեղասպանությամբ ազգը դուրս է մղվում իր հայրենիքից: Ազգը բնաջնջելու ամեն փորձ հանցագործություն է մարդկության դեմ: Բոլոր ազգերի անժխտելի իրավունքն է ազգային ազատագրական պայքարի ճանապարհով և նպատակահարմար այլ միջոցներով տապալել ամեն կարգի բռնապետություն:

Ազգերը, իրենց առանձնահատկություններով, ուրույն և ինքնատիպ մշակույթով միայն հարստացնում են մարդկությանը: Իրավահավասար ազգերի ներդաշնակ համակեցությամբ է, որ բացառվում է նրանց ձուլումը:

ՀՅԴ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ էջ 13-15
Հասարակված
ԻԷ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻՆ (ԱՐՏԱԿԱՐԳ) ԿՈՂՄԵ
Փետրվար 1998

1918 թ. հունիսի 4-ին Բաթումում կնքված պայմանագրով
Հայաստանը ճանաչվեց Անկախ հանրապետություն

ԴՐՕՇԱԿ